Հիմնադրումից ի վեր, «Կուլտուրական Միությունն» իր հայանպաստ գործունեությունը ծավալեց ոչ միայն Բաքվի նահանգի սահմաններում, այլև դրանից դուրս: Այն իր մասնաճյուղերն ուներ Հայաստանի գրեթե բոլոր շրջաններում[28]: Միությունը Հայաստանի տարբեր շրջաններում բացում էր

---

[21] Տե՛ս Տեղեկագիր եւ հաշիւ Բագուայ Հայոց կուլտուրական միութեան 1906–1907 տարեշրջանի գործունեութեան 1907, 67, 77, 78, 91, 104, 108:

[22] Տե՛ս Կանոնադրութիւն Բագուայ հայոց կուլտուրական միութեան 1906, 7:

[23] Տե՛ս Տեղեկագիր եւ հաշիւ Բագուայ Հայոց կուլտուրական միութեան 1906–1907 տարեշրջանի գործունէութեան 1907, 23:

[24] Տե՛ս Տեղեկագիր եւ հաշիւ Բագուայ Հայոց կուլտուրական միութեան 1906-1907 տարեշրջանի գործունէութեան 1907, 3–17:

[25] Տե՛ս Տեղեկագիր եւ հաշիւ Բագուայ Հայոց կուլտուրական միութեան 1907 թ. 7 ամսեայ եւ 1908 թ. գործունէութեան 1908, 20–28:

[26] Տե՛ս Ежегодник Баку и его районъ 1909. отд. III, 115.

[27] «Զանգ», 1908, հոկտեմբերի 12, № 1–2, 2:

[28] Տե՛ս «Վտակ», 1908, ապրիլի 23, «Կռան», 1912, մարտի 18:

դպրոցներ, դրանց կից՝ արհեստանոցներ, աշակերտներին տրամադրում նպաստներ և այլն: Պարբերաբար կազմակերպում էր համերգներ, ներկայացումներ, ստեղծում երգչախմբեր, թատերախմբեր, նպաստում Բաքվում և նրա սահմաններից դուրս հայկական կրթամշակութային գործունեությանը: Միությունը թոշակներ էր հատկացնում հայ կարիքավոր գրողներին, տպագրում նրանց գրքերը, զբաղվում նրանց զավակներին կրթաթոշակներ տրամադրելու խնդրով, կազմակերպում էր դրամատիկ ու երաժշտական ներկայացումներ, նշում անվանի գործիչների հոբելյաններ և այլն: Միության հանձնախմբերի գործունեությունից վկայաբերենք հետևյալ ձեռնարկները: Այսպես՝ Գեղարվեստական հանձնախմբի նախաձեռնությամբ Մայիլյանների մեծ թատրոնում 1912 թ. Այսրկովկասում առաջին անգամ բեմադրվում է Տ. Չուխաջյանի «Լեբլեբիջի Հոր-հոր աղա» (1875) օպերան: Շարունակելով հայոց քարտեզագրության դարավոր ավանդույթները՝ հրատարակչական հանձնախումբը 1912 թ. հայերեն և ռուսերեն լեզուներով հրատարակում է Այսրկովկասի ազգագրական բազմագույն, մեծադիր երկու քարտեզ[29]: Նույն հանձնախմբի նախաձեռնությամբ 1913 թ. լույս են տեսնում հետևյալ գրքերը. Դիւան Հայոց պատմութեան: Կազմեց Գիւտ Աղանեանց, Գիրք Ե, Թիֆլիս, 1902, Ը, Մաս II, Թիֆլիս, 1908, ԺԱ, Թիֆլիս, 1913, Խ. Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպը, Տ. Տեր-Գրիգորյանի «Ձեռնարկ Հայոց պատմութեան» և այլն[30]: Կրթական հանձնախմբի ջանքերով 1907 թ. հունվարին Բաքվում հիմնվել է «Կանանց արհեստագիտական դպրոցը»[31]: Գեղարվեստական հանձնախումբը կազմակերպեց պրոֆ. Ն. Մառի՝ 1907 թ. դեկտեմբերի 21–23-ը տևած դասախոսությունները Անի մայրաքաղաքի պատմության, այդտեղ կատարված պեղումների և հին հայ գրականության թեմաներով[32]: Նույն հանձնախմբի հրավերով 1908 թ. մարտի վերջերին Բաքու է գալիս Կոմիտաս վարդապետը, որն իր 70 հոգանոց երգչախմբով, շնորհալի մեներգիչ Վահան Տեր-Առաքելյանի հետ միասին «Բաքվի հայոց մարդասիրական ընկերության» դահլիճում ապրիլի 1-ին համերգ է տալիս[33]: 1908 թ. ապրիլի 16-ին «Հայ գրականության 60-ական թվականների շրջանը» թեմայով

---

[29] **Ստեփանյան** 1957, 49:

[30] Տե՛ս «Գործ», 1914, մարտի 16:

[31] Տե՛ս Տեղեկագիր եւ հաշիւ Բագուայ Հայոց կուլտուրական միութեան 1907 թ. 7 ամսեայ եւ 1908 թ. գործունէութեան, 1908, 110:

[32] Տե՛ս «Մշակ», 1916, դեկտեմբերի 27, տե՛ս նաև **Մովսիսյան** 1946, 10:

[33] Տե՛ս «Մշակ», 1908, ապրիլի 13, տե՛ս նաև **Բաբաջանյան** 1985, № 3, 44–46:

Բաքվում դասախոսություններ է կարդացել ռուս գրաքննադատ Յու. Վեսելովսկին[34]: Թատերական հանձնախմբի կողմից կազմված «Աբելյան-Արմենյան» թատերախումբը 1908 թ. սեպտեմբերից ներկայացումներ տալու նպատակով մեկնում է Կ. Պոլիս[35]: Թատերախումբը 1911 թ. հերթական թատերաշրջանն անցկացրեց Բաքվում, Հյուսիսային Կովկասում և Մոսկվայում[36]: Նույն հանձնախմբի նախաձեռնությամբ Բաքվի Նիկիտին եղբայրների կրկես-թատրոնում 1915 թ. մայիսի 3-ին Միության դերասանական խմբի կողմից նշանավոր դերասանուհի Սիրանույշի (Մերոպե Գանթարճյան) բեմադրությամբ ներկայացվել է դրամատուրգ Վարդան Շահպարոնյանի (Շահ-Պարոն)՝ թուրքական բռնատիրության քաղաքականությունը մերկացնող թեմայով գրված «Արմենն ու Ֆաթման կամ Զեյթունի պաշարումը» պիեսը[37]: 1908 թ., երբ լրանում էր Խաչատուր Աբովյանի մահվան 60-ամյակը, և մի խումբ հայ գրողներ ու մտավորականներ առաջարկում են Երևանում տեղադրել նրա հուշարձանը, մեծ գրողի հուշարձանի պատրաստման գործը հանձն է առնում «Կուլտուրական Միություն»-ը (շինարարությունը սկիզբ է առել 1913 թ. և ավարտվել 1933 թ. հուլիսին):

Նպատակ ունենալով բարելավել հայ գյուղացու տնտեսական վիճակը՝ հողային հանձնախումբը մինչև 1908 թ. սեպտեմբեր Երևանի, Էջմիածնի, Սուրմալուի, Շարուր-Դարալագյազի, Նոր-Բայազետի, Ալեքսանդրապոլի, Ղազախի, Գանձակի, Շուշիի, Բաքվի նահանգի Գյոքչայի և Շամախիի գավառների հայկական գյուղերում կազմակերպում է շուրջ 40 վարկային ընկերություն[38], միաժամանակ այլուր և հացահատիկ հատկացնում կարիքավոր գյուղերին[39]:

Ցավոք, ստեղծարար ուժերի ծաղկման շրջանում Բաքվում 1913 թ. հոկտեմբերի 23-ին, 49 տարեկան հասակում Կ. Խատիսյանը մահանում է ծանր հիվանդությունից (թաղվել է Թիֆլիսի Վանքի Մայր եկեղեցու բակում, հանգուցյալ հոր կողքին: Ի նշան երախտագիտության, Կ. Խատիսյանի դագաղի

---

[34] Տե՛ս «Արարատ», 1908, ապրիլ, Դ, էջ 437:

[35] Տե՛ս **Արմենյան** 1954, 116:

[36] Տե՛ս **Արմենյան** 1954, 163:

[37] Տե՛ս «Գրական թերթ», 2015, ապրիլի 23:

[38] Տե՛ս Տեղեկագիր եւ հաշիւ Բագուայ Հայոց կուլտուրական միութեան 1907 թ. 7 ամսեայ եւ 1908 թ. գործունէութեան, 1908, 35–63:

[39] Տե՛ս Համառօտ հաշիւ Բագւի նպաստամատոյց խառն յանձնաժողովի, Բագու, 1908, 27:

վրա դրվել էր արծաթե ութ պսակ[40]: Կ. Խատիսյանի կարճատև կյանքը նվիրում էր հայությանը, նրա մշտական հոգսն ու մտասևեռումն էր ժողովրդի բարօրությունն ու լուսավոր ապագան: Բենիկ վրդ. Տեր-Դանիելյանի՝ Կ. Խատիսյանի թաղման առիթով ասված դամբանական խոսքում արժեվորվում է հանգուցյալի դերը հայ հասարակական կյանքում. «Խատիսեանը մի դէմք էր. համակ ազգաշահ վսեմ տենչանք, համակ ջինջ ու վսեմ գաղափար, համակ կամք, համակ եռանդ, համակ կազմակերպիչ զօրութիւն, համակ հաւատ դէպի վսէմն ու իդէալական, համակ հայութիւն, համակ կրօնք: Այս ազնիւ տարերքից նա իր կրօնքն էր կառուցել, որի ֆանատիկոս երկրպագուն էր, անձնուէր սպասաւոր: Ամենայն մեծութիւն կրօնք ունի և ֆանատիկոս է: … «Ես հա՛յ եմ,- ասում էր նա ինձ,- հայ հողի վրա հաստատապէս կանգնած. աշխարհիս ո՛չ մի հօսանք, ոչ մի ոյժ ինձ իմ դիրքիցս խախտել, հանել չէ կարող»»[41]:

Դժվար է գերագնահատել Կ. Խատիսյանի կատարած աշխատանքը, մեծ սերն ու նվիրումը՝ մատուցված հայության ընդհանուր զարգացման գործին: Տարիների հեռավորությունից նայելով Կ. Խատիսյանի վաստակին՝ մեզ առաջին հերթին զարմացնում և հիացնում է նրա թողած հոգևոր մեծ հարստությունը իր ժողովրդին: Ազգային գործիչ, ՀՅԴ անդամ Լիպարիտ Նազարյանն իրավամբ բարձր գնահատելով Կ. Խատիսյանի ազգանպաստ գործունեությունը, գրում էր. «Եթէ հիմնադիրի վաղաժամ մահը չլինէր, այս Միութիւնը պիտի դառնար կովկասահայութեան ամենէն արգասաւոր կազմակերպութիւններից մէկը, որի ձայնը ոչ թէ պարզ քարոզչութեամբ, այլ կենդանի գործերով պիտի լսուէր, տարակոյս չունենք՝ նաեւ դուրսը, արտասահմանեան հայ գաղութներում»[42]:

Կ. Խատիսյանի մահից հետո «Կուլտուրական միության» նախագահի պաշտոնը ստանձնեց նրա գործընկեր, նավթարդյունաբերող և հասարակական գործիչ Նիկողայոս Ալիբեգյանը, ով մինչ այդ վարում էր Միության փոխնախագահի պաշտոնը[43]:

Առաջին աշխարհամարտի տարիներին «Կուլտուրական միությունը» կրկնապատկեց իր արդյունավետ ջանքերը: Փորձելով ուժերի ներածին չափով նեցուկ լինել պատերազմ մեկնած ընտանիքներին՝ միության գլխավոր

---

[40] Տե՛ս «Հորիզոն», 1913, հոկտեմբերի 26, «Մշակ», 1913, հոկտեմբերի 30:

[41] «Մշակ», 1913, հոկտեմբերի 31:

[42] «Յուսաբեր», 1945, ԼԱ տարի, ապրիլի 7:

[43] Տե՛ս «Բագուի ձայն», 1913, նոյեմբերի 12:

նպաստամատույց կոմիտեն այդ նպատակով հրավիրում է բաքվաբնակ արցախցիների, զանգեզուրցիների ընդհանուր ժողով՝ խորհրդակցելու գավառներում նվիրատվություններ կազմակերպելու ու նպաստներ բաշխելու համար[44]: Պատերազմ մեկնողների ընտանիքներին տեղերում օգնություն կազմակերպելու նպատակով Նիկ. Ալիբեկյանի նախագահությամբ ստեղծվում է նաև «Պատերազմ կոչվածների ընտանիքներին օգնություն հասցնող հանձնաժողովը» (անդամներ՝ Նիկ. Ղարագյոզյան, Անդ. Ծատուրյան, Ա. Տեր-Ստեփանյան և Գր. Տեր-Ստեփանյան, բժիշկներ Թադ. Զաքարյան և Միք. Մանդինյան)[45]: «Կուլտուրական միությունը» կազմակերպեց նաև հանգանակություններ՝ պատերազմ մեկնածների ընտանիքների օգտին միջոցներ հատկացնելու համար[46]: Հաշվի առնելով, որ օրեցօր մեծ թիվ են կազմում Բաքու բերվող վիրավորները՝ «Կուլտուրական միությունն» իր նորակառույց շենքը տրամադրեց «Կարմիր խաչի» հիվանդանոցին[47]:

Եզրակացություն

Բաքվի նահանգի հայության կրթամշակութային և հասարակական կյանքի առաջընթացում զգալի դերակատարություն է ունեցել «Կուլտուրական միությունը», որն իր ծավալած կրթամշակութային և բարեգործական գործունեությամբ եկավ լրացնելու «Բաքվի հայոց մարդասիրական ընկերությանը»: Միությունը դրական մեծ մղումներ տվեց ինչպես Բաքվի նահանգի, այնպես էլ նրա սահմաններից դուրս ապրող հայության սոցիալ-տնտեսական և մշակութային կյանքի ընթացքին: «Կուլտուրական միության» գործունեությունը դադարեցվում է 1918 թ. սեպտեմբերին՝ Բաքուն թուրքական բանակի կողմից գրավվելու պատճառով:

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

«Արարատ», 1908, ապրիլ, № Դ:

Արմենյան Ա. 1954, 60 տարի հայ բեմի վրա, Երևան, «Հայպետհրատ», 332 էջ:

«Արեւ», Բագու, 1914, օգոստոսի 9:

Բաբաջանյան Հ. Վահան Տեր-Առաքելյան, «Գիտություն և տեխնիկա», Երևան, 1985, № 3, էջ 44-46:

---

[44] Տե՛ս «Արեւ», 1914, օգոստոսի 9:
[45] Տե՛ս «Արեւ», 1914, օգոստոսի 13:
[46] Տե՛ս «Արեւ», 1914, օգոստոսի 9:
[47] Տե՛ս «Արեւ», 1914, օգոստոսի 26:

«Բագուի ձայն», Բագու, 1913, նոյեմբերի 12:

«Գործ», Բագու, 1914, փետրվարի 25:

«Գործ», Բագու, 1914, մարտի 16:

«Գրական թերթ», Երևան, 2015, ապրիլի 23:

«Զանգ», Բագու, 1908, հոկտեմբերի 12, էջ 2:

Լ.Ն., Ալեքսանդր Խատիսեան, «Յուսաբեր», Կահիրէ, 1945, ԼԱ տարի, ապրիլի 7:

Խուդինյան Գ. 2006, ՀՅ Դաշնակցության պատմություն (ակունքներից մինչև 1895 թվականը), Երևան, «Նամէ» տպագրատուն, 439 էջ:

Ծոցիկեան Ս. 1922, Արարատ-Կովկաս, մասն երկրորդ, Կովկաս, հտ. Բ, Փարիզ, տպագր. Բազմալեզուեան (Կ. Յ. Ներսէս), 304 էջ:

Կանոնադրութիւն Բագուայ հայոց կուլտուրական միութեան, Բագու, «Бакинск. изд-во», 1906, 11 էջ:

«Կռան», Երեւան, 1912, մարտի 18:

«Կռան», Երեւան, 1912, մարտի 11:

Համառօտ հաշիւ Բագւի նպաստամատոյց խառն յանձնաժողովի, Բագու, տպ. Ա. Մ. Թառայեանցի եւ Լ. Դ. Միրզայեանցի, 1908, 27 էջ:

Հաշիւ 1913 թ. գործունեութեան Բագուի Հայոց Մարդասիրական ընկերութեան Յանուն Ս. Գրիգոր Լուսաորչի, Բագու, տպ. «Տրուդ», 1914, 18 էջ:

«Հորիզոն», Թիֆլիս, 1914, մարտի 2:

«Հորիզոն», Թիֆլիս, 1913, հոկտեմբերի 25:

«Հորիզոն», Թիֆլիս, 1913, հոկտեմբերի 26:

Մարտիրոս Շաթիրյանի յուշերը գրի առաւ **Ն. Հանգոյց** [**Աղբալյան**], Հայոց հասարակական շարժումների պատմութիւնից, «Հայրենիք», Պօսթըն, 1923, Ա տարի, էջ 50–66:

Միրզոյան Ս. 2002, Հայ նշանավոր գերդաստաններ: Խատիսյաններ, «Պատմություն» (հոդվածների ժողովածու), Երևան, № 1, էջ 103-107:

Մովսիսյան Ա. 1946, Ն.Յա. Մառի կյանքը և ստեղծագործությունը, ՀՍՍՌ ԳԱ հրատ., Երևան, 30 էջ:

«Մշակ», Թիֆլիս, 1908, ապրիլի 13:

«Մշակ», Թիֆլիս, 1913, հոկտեմբերի 30:

«Մշակ», Թիֆլիս, 1916, դեկտեմբերի 27:

Շիրվանզադե Ալ. 1961, Եժ, հ. 8: Կյանքի բովից, Երևան, Հայպետհրատ, 569 էջ:

Սարուխան Ա. 1931, Աղեքսանդր Մանթաշեանց: Մեծ վաճառականն եւ բարեգործը (յիշողութիւններ իր մահուան 20 ամեակի առթիւ), Վիեննա, Մխիթարեան տպարան, 223 էջ:

Ստեփանյան Հ. 1957, Հայ քարտեզագրական հրատարակությունները 260 տարում (1695–1955). համառոտ ակնարկ, ՀՍՍՌ ԳԱ հրատ., Երևան, 157 էջ:

Ստեփանյան Գ. 2011, Բաքու քաղաքի հայության պատմությունը (պատմաժողովրդագրական ուսումնասիրություն), Երևան, Պատմության ինստիտուտ, 651 էջ:

«Վտակ», Թիֆլիս, 1908, ապրիլի 23:

Տեղեկագիր եւ հաշիւ Բագուի Հայոց Մարդասիրական ընկերութեան 1906 թւականի, Բագու, тип. **А.К. Касабова**, 1907, 30 էջ:

Տեղեկագիր եւ հաշիւ Բագուայ Հայոց կուլտուրական միութեան 1906-1907 տարեշրջանի գործունեութեան, № 1, Բագու, տպ. Ա. Մ. Թառաեանցի և Լ.Դ. Միրզայանցի, 1907, 103 էջ:

Տեղեկագիր եւ հաշիւ Բագուայ Հայոց կուլտուրական միութեան 1907 թ. 7 ամսեայ եւ 1908 թ. գործունէութեան, № 2, Բագու, էլեքտրաշարժ տպարան «Բագու» լրագրի, 1908, 99 էջ:

Տոմար ընտանեկան 1874–1875 թթ., հ. Ա: Աշխատասիրեաց Տ. Սրբուհի **Ա. Երիցեանց**, Թիֆլիս, 1874, ի տպարանի գլխաւոր կառավարութեան փոխարքային Կովկասու, 1874, 226 էջ:

Ежегодник Баку и его районъ 1909. Адресная и справочная книга. Издание **М. Шапшовича**, С.-Петербург, 1909, 325 с.

ИЗ ИСТОРИИ «БАКИНСКОГО АРМЯНСКОГО КУЛЬТУРНОГО СОЮЗА»

СТЕПАНЯН Г.

Резюме

Ключевые слова: торговля и промышленность, Константин Хатисян, Никогайос Алибекян, «Культурный Союз», комиссия, благотворительность, пожертвование.

В числе населенных армянами городов восточного Закавказья Баку занимает особое место. Благодаря своим созидательным качествам и уровню культуры, начиная со второй половины XIX века армяне занимали лидирующие позиции в социально-экономической, общественно-политической и культурной жизни Баку. Армяне были вовлечены почти во все сферы общественно-политической жизни, занимая ответственные посты в системе городского правления. Как в культурной, так и социальной жизни армян Бакинской губернии значительную роль сыграл «Бакинский армянский культурный союз», основанный промышленником, общественно-политическим и культурным деятелем Константином Хатисяном в 1906 году. Культурно-образовательная и благотворительная

деятельность союза, равно как и «*Бакинского армянского человеколюбивого общества*», способствовала положительным сдвигам в социально-экономической и культурной жизни армян как в Бакинской губернии, так и за ее пределами.

FROM THE HISTORY OF THE «ARMENIAN CULTURAL UNION IN BAKU»

STEPANYAN G.

Summary

Key words: commerce, Konstantin Khatisyan, Nikoghayos Alibegyan, «Cultural Union», commission, charity, donation.

Baku played a significant role in the history of the Armenian-populated parts of Eastern Caucasus. Owing to the high level of their creativity and cultural achievements, Armenians played a leading role in the socio-economic, educational-cultural and socio-political life of Baku, particularly, beginning from the second half of the 19^{th} century. They were involved in almost all social and political spheres of life, held crucial posts in the city and took an active part in its administration. In 1906, on the initiative of the famous manufacturer, socio-political and cultural figure Konstantin Khatisyan "The Armenian Cultural Union" was founded in Baku, and it contributed greatly to the progress of the Armenians' social and cultural life. The cultural, educational and philanthropic role of the Union was as significant as the activities of "The Armenian Philanthropic Society in Baku". Both these organizations brought about positive socio-economic and cultural changes in the life of the Armenian population living not only in Baku, but also beyond its borders.

ԳՈՀԱՐ ՆՈՒՐԻՋԱՆՅԱՆ*
«Հայաստանի Հանրապետություն» օրաթերթի թղթակից,
«Դեբատ» Բանավեճի ակումբի նախագահ, «Կենտրոն»
հեռուստապատեսության խմբագիր
debatacumb@gmail.com

ՎԱՐԴԳԵՍ ՊԵՏՐՈՍՅԱՆԸ «ԳԱՐՈՒՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳԻՐ

Բանալի բառեր՝ Վարդգես Պետրոսյան, ձնհալ, բացախոսության դարաշրջան, հրապարակախոսական ժանրի զարգացում, թարգմանական դպրոց, նորարարություն, գեղարվեստական ակնարկ:

Ներածություն

«Ձնհալի» տարիներն իրենց դրոշմը թողեցին ժամանակի թե տնտեսական, թե հոգևոր-մշակութային կյանքի վրա: Խորհրդային և հայ ստեղծագործողներից յուրաքանչյուրը յուրովի արձագանքեց խրուշչովյան բարեփոխումների ստեղծագործական ազատություններին: Հալվող «սառույցը» չէր կարող չներառել նաև հայկական միջավայրը: Առաջ քաշված բավական ազատորեն հնչեցվող դեմոկրատական ազատությունների, քաղաքացիականության զարգացման թեմաներին զուգահեռ, հայ գրողներն ավելի ու ավելի էին բարձրացնում կյանքին նորովի վերաբերվելու հարցը: Այս ամենից անմասն չէր կարող մնալ նաև գրող-հրապարակախոս Վարդգես Պետրոսյանը: Նա էլ, ինչպես ժամանակի բոլոր անկախ մտածողության կրողները, մշտապես բարձրացնում էր ստեղծագործական ազատությունների խնդիրը: Եկել էր մի սերունդ, ում այլևս անհնար էր պարտադրել հին մտածելակերպի «օրենքները», և այդ սերունդը «պայքար էր երգում»՝ ջախջախելով հինն ու հաստատելով նորը: Սրընթաց ձևավորվում էր «երիտասարդ արձակը», միաժամանակ՝ փոփոխության էին ենթարկվում Վրաստանի և Հայաստանի խորհրդային ստեղծագործողների ճակատագրերը: Այս պայմաններում հասունացավ Հայաստանում երիտասարդների համար նոր ամսագիր ունենալու անհրաժեշտությունը, որի նախաձեռնողը դարձավ 60-ականների ամենահայտնի հրապարակախոս

* *Հոդվածը ներկայացվել է 27.08.18, գրախոսվել է 17.05.18, ընդունվել է տպագրության 27.05.20:*

լրագրողներից մեկը՝ Վարդգես Պետրոսյանը: 1967-ից նրա խմբագրած «Գարուն» ամսագիրը նպատակ ուներ իր շուրջ համախմբել ժամանակի ամենաազատ մտածողներին ու ամսագիրը դարձնել ավանգարդիստ ստեղծագործողների մի յուրօրինակ կղզյակ: Եվ այդ միջավայրն էլ կարճ ժամանակ անց դարձավ այն ճամփաբաժանը, որով մեր գրական հանրությունը բաժանվեց հնի ու ավանգարդիստական նորի միջև:

Հայ գրողներից ու հրապարակախոսներից յուրաքանչյուրը յուրովի արձագանքեց 1960-ական թվականների խրուշչովյան բարեփոխումների ընձեռած ստեղծագործական ազատություններին, այդ թվում և նոր գաղափարների ջատագովմանը՝ բացախոսության որոշակի չափաբաժնի թողտվությամբ: Առաջ քաշված և բավական ազատորեն արծարծվող եղեռնի, սփյուռքի, դեմոկրատական ազատությունների, քաղաքացիական զարգացման (հիմնականում «սոցիալիստական հայրենիքի» գաղափարի շրջանակներում) թեմաներին զուգահեռ, ժամանակի գրողները մշտապես բարձրացնում էին հոգևոր ազատությունների խնդիրը: Հանրային կյանքում շրջանառվում էր մի եզրույթ՝ «оттепель», բառացիորեն խորհրդանշելով ստալինյան «սառցե» ժամանակներին հաջորդող համատարած «ձնհալը» և ըստ էության, իրական ներգործություն ունենալով բռնադատված մի ողջ սերնդի գիտակցության վրա: Տրամաբանորեն ընթացող զարգացումներից անմասն չէր նաև Հայաստանը: Հասարակական-քաղաքական շարժումները Հայաստանում բուռն վերելք ապրեցին, իբրև ԽՍՀՄ ամբողջ տարածքով սկիզբ առած հետձնհալյան իրադարձությունների բնականոն ընթացք: Այս համապատկերում հարկ է առանձնացնել այն գրական միջավայրն ու տրամադրությունները, որոնք առկա էին այդ ժամանակաշրջանի Հայաստանում: Ի հավելումն այս ամենի՝ կարևորում ենք նաև այդ ժամանակահատվածի գրական հրապարակախոսական տրամադրությունների բացահայտումը, դրանց ամբողջական կամ մասնակի դրսևորումները ամսագրային ոլորտում, մասնավորապես՝ «Գարուն» ամսագրում: Ամսագրի հիմնադիր-խմբագիր Վարդգես Պետրոսյանը, ինչպես ժամանակի այլ հրապարակախոսներ, որպես լայնախոհ և ազատամիտ մտավորական, մշտապես բարձրացնում էր մարդկանց ազատությունների հարցը: Ստեղծվել էր մի վիճակ, երբ հատկապես բարդ էր անհատականությունների համար, առաջացել էր նոր «իրականության» պահանջ, իրականություն, որտեղ առանձնակի կարևորման խնդիր էին երիտասարդության կարիքներն ու պահանջները: Առանձին հանրապետություններում արդեն լույս էին տեսնում երիտասարդական ամսագրեր, ձևավորվել էր ամսագրային նոր մշակույթ, և

նախապատրաստվում էր «Գարունի» մուտքը, որպես երիտասարդների համար ստեղծված ամսագրի: Այստեղ նկարագծվում է հանդեսի համախմբող գործոնը գրական աշխարհ բերած նորամուծությունը, այն, թե ինչպես են բացահայտվել ու առավելագույն ազատությամբ ներկայացվել հատկապես երիտասարդ ու սկսնակ գրողները, բարենպաստ պայմաններ ստեղծվել նրանց տաղանդի դրսևորման համար: «Վարդգես Պետրոսյանը երիտասարդության պոռթկումների, հույզերի, ոգևորությունների, թռիչքների և լուսավոր երազների վավերագիրը դարձավ»[1], իրավամբ ասված է մի հրապարակման մեջ: Հիրավի, «Գարունը» դռներ էր բացել գրել սիրող, գրել ցանկացողների առջև, որոնց համար հնարավորություն էր ստեղծել թևեր բացելու:

«Գարուն» ամսագիրը որպես ավանգարդիստ, առաջնորդող էր ժամանակի գրական հոսանքների համապատկերում: Ժամանակը ինքն էր թելադրում նմանատիպ հանդես ունենալու օբյեկտիվ անհրաժեշտությունը:

Պատմության մեջ արձանագրվեց ստալինյան բռնատիրության անկումը, երբ տասնյակ հազարավոր «Գուլագ-արշիպելագներում» փակված անհատներն ու հատկապես մտավորական զանգվածը կարողացավ ազատ արտահայտվելու և խոսքի իրավունք ստանալ: Գրական առաջնագծում հայտնվեցին այնպիսի հեղինակներ, ինչպիսիք էին Ի. Բրոդսկին, Ա. Սոլժենիցինը, Ս. Դովլաթովը: Զանգվածաբար սկսեցին կարդալ արգելված գրողների, ինչպես օրինակ՝ Մ. Բուլգակովին և ազատամիտ ու ինքնատիպ բոլոր այն գրողներին, ովքեր իրենց գրական վաստակով այդ դժվարին ժամանակներում մարդկանց կրթում և ազատ մտածելու էին մղում: Արդյունքում՝ հասարակական, մշակութային-հոգևոր ոլորտներում վերելքն այնպիսի լայնամասշտաբ ընդգրկման էր հասել, որ իրավիճակը բնութագրելու համար «ձնհալ» եզրույթն առավել քան բնորոշ ու հատկանշական էր, և մարդկանց ոգևորությունն իր ալիքի մեջ հալել ու ներառել էր ազատությունը սահմանափակող ամեն տեսակի արգելք: Նոր ժամանակներն իրենց հետ բերել էին նոր մտածելակերպ ու նոր ու թարմ մոտեցումներ, և այդ պայմաններում հարկ էր ու նույնքան բնականոն, որ առաջ գային գրական նոր հոսանքներ ու նոր անհատներ, որոնք դառնալու էին նոր ժամանակների ջահակիրները: Նորամուծությունների ալիքն իր մեջ ներառել էր ամենքին ու ամեն ինչ: ԽՍՀՄ ողջ տարածքով տպագրվում և լույս էին տեսնում հարյուրավոր նոր գրքեր ու ամսագրեր, այդ ամենի համապատկերում կարևորվում էին նոր ժամանակների մարդու և հատկապես երիտա-

[1] Ժուռնալիստիկա 2012, 10:

սարդության հետաքրքրություններն ու պահանջները: Տրամաբանական հարց կարող է ծագել, թե ինչո՞ւ հատկապես երիտասարդների. որովհետև ավագ սերունդը ընկճված էր ստալինյան բռնատիրության՝ իրեն զգացնել տվող բեռան տակ և չէր կարող միանգամից ընդունել նոր արժեքներն ու ըստ այդմ՝ ձևավորել նոր մտածելակերպ, իսկ երիտասարդությունն ինչպես ամենուր, բոլոր ժամանակներում ջահակիրն է նոր գաղափարների ու նոր ըմբռնումների և որպես այդպիսին՝ ի զորու է ընդունել նորն ու հաստատել իր կեցության ոլորտներում: Ահա սա է հենց այն գործոնը, որի ազդեցությամբ արդեն կար հարկադրանք՝ երիտասարդական շարժումներին համահունչ՝ ԽՍՀՄ ողջ տարածքով մեկ երիտասարդական նոր պարբերականներ ստեղծելու: «Այն տարիների «Գարունը» ... Դա մի փոքրիկ ազատ ու անկախ հանրապետություն էր 60-ականների սոցիալիստական Հայաստանի տարածքում... Դա իմ տեսած ու ապրած առաջին ազատ ու անկախ տերությունն էր, ուր իսկական արվեստով ու գրականությամբ համակված մի այնպիսի տոնական մթնոլորտ էր ստեղծվել, որի մագնիսական դաշտում էին համախմբվել Հայաստանի գրեթե բոլոր շնորհալի երիտասարդները՝ ազատորեն արտահայտվելու, ինչպես ուզում են, ինչի մասին ուզում են…»[2]: Ամբողջ Խորհրդային Միության տարածքով մեկ լույս էին տեսնում երիտասարդական «Դրուժբա նարոդով», «Յունոստ», «Զվեզդա», «Օգոնյոկ» ամսագրերը, «Լիտերատուրնայա գազետա», «Կոմսոմոլսկայա պրավդա» թերթերը և այլ պարբերականներ, այսինքն՝ ծավալվել էր գրական, ավանգարդիստական մի շարժում, որն իր անմիջական ազդեցությունն էր ունենալու նաև հայկական իրականության վրա:

Ստեղծվել էր մի իրավիճակ, երբ ծանր ու բարդ էր հատկապես անհատականությունների համար: Երբ խզված էր աշխատանքի ու կենցաղի կապը, և այդ պայմաններում նույնիսկ հերոսական աշխատանքը դժգույն էր դառնում, ուստի առաջացել էր հասարակական ընդվզում և պահանջ նոր «իրականության», ինչն իր հետ բերում է նոր իրավիճակ ու նոր գաղափարախոսություն: Այդպես դժվարությամբ էր կերտվում նոր՝ խրուշչովյան ժամանակաշրջանը: Հզոր այս վերելքն իր անդրադարձն ունեցավ նաև խորհրդային ողջ տարածքի գրական հոսանքներում՝ ասպարեզ բերելով նոր ու առաջադեմ գաղափարներ, հանրային կյանքի բոլորովին նոր մոտեցումներ: «…Ինձ թվում է՝ վճռական մի կետում 60-ականների մեր սերունդը շփոթվեց ու ընկրկեց, ասաց՝ գողանում է, որովհետև իրենը չի համարում… փչացնում է, որով-

---

[2] «**Գրական թերթ**» 1984, 22 ապրիլի:

հետև մարդու իր բնական տարերքով չի ապրում, այլ հանձնվել է իրեն խորթ ինչ-որ ռեժիմի»[3]. «Մեր գյուղն անցյալում և հիմա» ստեղծագործության մեջ այս գաղափարին հաջորդում է «Հոմո սովետիկուսի» սարկաստիկ կերպարի ներկայացումը, որ Մ. Զոշչենկոյի, Ի. Իլֆի և Ե. Պետրովի բացառիկ ոճի համարժեք օրինակն է հայ գրականության մեջ: Իհարկե, կերպարային այս համաբույլն իր տեսակային համարժեքները կարծես թե չուներ Վ. Պետրոսյանի ստեղծագործություններում, բայց նրա հերոսներն էլ մնայուն տեղ գրավեցին այդ ժամանակահատվածի գրականության մեջ:

Վ. Պետրոսյանի ստեղծագործության ժամանակահատվածը խնդրո առարկա այն տարիներն էին, երբ կրտսեր սերունդն իր նոր՝ պայքարի ոգով, տոկունությամբ, ասես փորձում էր ճեղքել սառույցը և կռիվ տալ իր հայրերի ու պապերի չապրած տարիների փորձությունների համար՝ ապացուցելով նախընթաց շրջափուլի սնանկությունն ու առաջադեմ գաղափարների սատարումով՝ ինքնահաստատվել: Սա ժամանակի մտավորականների յուրովի բողոքի ալիքն էր ի պատասխան «Գուլագ» արշիպելագներում կորսված արդարության: Ու նրանց բերած գրական նոր փորձով ասես լրացվում էր այդ սերնդի պատերազմական մանկության չապրած տարիների բացը: Ավելի դիպուկ ձևակերպմամբ՝ եկել էր մի սերունդ, «ով պայքար էր երգում»՝ ջախջախելով հինն ու հաստատելով նորը: Սրընթաց ձևավորվում էր նոր մտածողություն, վերափոխվում ու զարգանում էր երիտասարդ արձակը: «Նոր սերունդն» իր հետ բերում էր նոր թեմաներ ու նոր մտայնություն, և համընդհանուր այս ալիքն իր մեջ ներառել էր ողջ երկիրը: Այսինքն՝ ծավալվել էր գրական ավանգարդիստական մի շարժում, որն իր անմիջական ազդեցությունն էր ունենալու նաև հայկական իրականությանն ու հատկապես՝ երիտասարդության զարգացմանն ուղղված գրական նոր հանդեսների հայտնության վրա: «Հնօրյա փիլիսոփայական կեցվածքի դեմ Վ. Պետրոսյանն առաջարկում էր չփիլիսոփայության կեցվածք: Խորհուրդներ տվող ծերունիների դեմ՝ խորհուրդներ չտվող երեխա-ծերունիներ, ոչ թե՝ «ոտքդ վերմակիդ չափով մեկնիր», այլ՝ էկզիստենցիալիզմ...: Թաղումների ժամանակ ոչ թե ավանդական անձրև, այլ՝ ոչ ավանդական չանձրևում: Ոչ թե քոչարի, այլ՝ թվիստ»[4]:

Այդպիսով՝ անցյալ դարի 60–70 ական թվականները վառ էջ գրեցին հայ հասարակական-քաղաքական մտքի զարգացման մեջ: Թե գրական ոլոր-

[3] «**Գրական թերթ**» 1969, 1 հուլիսի:

[4] «**Գրական թերթ**» 1974, 13 սեպտեմբերի:

տում, թե լրագրության ասպարեզում ի հայտ եկան անհատներ, որոնցից յուրաքանչյուրը միանգամայն ինքնատիպ և ուրույն ձեռագրով՝ մշտապես մնացին մեր պատմության մեջ, իբրև նոր խոսքի ու գրական նոր շարժման հետևորդներ: Հենց այդ տարիներին էր, որ ձևավորվեց հրապարակագրության մի ողջ շարժում, որի դասերն այսօր էլ հասանելի են բոլորիս: Այն լավ դպրոց էր նախ՝ լրագրության, գրողների, ապա և՝ այսօրվա որևէ հրապարակախոսի համար:

«Գարունի» բերած գրական և հրապարակախոսական նորույթը:

«Գարունի» էջերում մշտապես երևացող անվանի հրապարակախոս Արմեն Հովհաննիսյանն այն համոզմանն էր, որ այդ ամսագիրը դռներ է բացել գրել սիրող, գրել ցանկացողների առջև, որոնց համար հնարավորություն էր ստեղծվել թևեր բացելու: Նախ, իբրև խմբագիր, Վ. Պետրոսյանն իր առջև երկու խնդիր էր դրել, որոնցից մեկը համամիութենական ծավալների էր հավակնում, այսինքն, ամսագիրը դարձնել երիտասարդության հետաքրքրություններն ամբողջացնող մի մարմին և ըստ ամենայնի նպաստել գրական նոր անհատականությունների բացահայտմանն ու նրանց ձևավորած նորանուն հրապարակախոսության ընթացքին: Մյուսն ավելի լոկալ և տեղային բնույթ ուներ, այն է՝ իր լրագրողական լավագույն հրապարակումներով հասարակական հնչեղություն ստեղծել բոլոր այն երևույթների շուրջ, որոնք հուզում էին երկրի քաղաքացուն՝ առանց տարիքային տարանջատման: Այնպես որ 60–70 ական թվականների հրապարակախոսությունն ի դեմս «Գարունի», դարձավ մի դարբնոց, որը ճանապարհի հարթեց ու ասպարեզ հանեց լրագրողների ու գրողների մի ամբողջ թարմ աստղաբույլ: Խմբագրի քրտնաջան աշխատանքի շնորհիվ շարունակ բացահայտվում էին նորանոր տաղանդներ, որոնք նոր որակի ու աստիճանի հասցրին հայ հրապարակախոսությունը: Այստեղ են առաջին անգամ տպագրվել Վ.Պետրոսյանի հրապարակախոսական ստեղծագործությունները՝ «Գազոն, թե անտառ», «Հավասարում բազում անհայտներով», հատվածաբար տպագրվել են «Հայկական էսքիզները»: Թե գրական ոլորտում, թե լրագրության ասպարեզում ի հայտ եկան անհատներ, որոնցից յուրաքանչյուրը միանգամայն ինքնատիպ և ուրույն ձեռագրով՝ մշտապես մնացին մեր պատմության մեջ: Ամսագրի էջերում առատորեն տպագրվեցին ակնարկներ, վավերագրական նոթագրություններ, ֆելիետոններ ու պամֆլետներ, որոնք երբեմն ոչ դասական իմաս-

տով զարգացնում էին այս ժանրերն ու անցում էին կատարում դեպի գեղարվեստական հրապարակախոսություն:

Սույն ժամանակահատվածի բազմաթիվ անհայտներ պարունակող կյանքն ու բարքերը մշտապես հուզել են Վ. Պետրոսյանին՝ զուգահեռաբար իրենց դրոշմը թողնելով նաև տպագրվող մյուս հեղինակների ստեղծագործությունների վրա: «Գարունն» իր բերած նորամուծությամբ նման էր հզոր գրական «ուրբանիզացիայի»: «Համատարած գյուղերի երկրից Հայաստանը դառնում է քաղաքների, տեխնիկական մտավորականության, գիտության և ամենաժամանակակից արդյունաբերության երկիր»[5]: Եվ այս ամենն ազդում էր գրական միջավայրի վրա: Ու թեև առաջին հայացքից ամսագիրը խիստ առինքնող չէր հրապարակախոսական ժանրի մեջ, այնուամենայնիվ, լույս ընծայմանը հաջորդած կարճ ժամանակահատվածում աստիճանաբար գերակշռող էին դառնում հենց այս ժանրի հոդվածները, ձևավորվում էր հրապարակախոսական միտքը, դառնում ավելի հետաքրքրական ու ընթերցողի համար՝ պահանջված: «Գարունն» այդ իմաստով նոր դպրոց էր հիմնել, ուր շարունակաբար հայտնվում էին նոր ու թարմ ուժեր: Միաժամանակ, հրապարակախոսական մտքի ձևավորման այս տարիների պատմությունը պարտավորեցնում էր պահպանել հայ հրապարակախոսության ավանդույթներն ու հիմքերը: «Այդ տարիներին ժամանակը բազմաթիվ անհայտներ էր պարունակում, ինչը մշտապես հուզել է նաև Վ. Պետրոսյանին: Գրողի նրա միտքն ու զգայարանները մշտապես աշխատել են գլուխ հանել բոլոր այն գերիշխող հակասություններից, որոնցով լի է մեր փոքրիկ երկիրը: Ու երբ ասվածը չի հաջողվում հեղինակին, երբ չի գտնվում միասնական մի օրինաչափություն, բնականաբար, նրա տարակուսանքն ավելի է մեծանում, իսկ հարցերն անընդհատ ավելանում են»[6]: Իհարկե, ի սկզբանե դժվար էր տարանջատել ու գիտական տեսանկյունից փորձել բաժանումներ կատարել թե գրական տարբեր ժանրերում, թե ամսագրում տեղ գտած հրապարակախոսական հոդվածներում, սակայն աստիճանաբար ուրվագծվում էին այն հեղինակների ոճն ու ժանրային առանձնահատկությունները, որոնք առավելաբար հանդես էին գալիս հրապարակախոսության այս կամ այն ոլորտին վերաբերող հետաքրքրություններով: Պատահական չէր, որ ժամանակի գրաքննությունն արձանագրել էր, որ «Ավանգարդի» բոլոր «գայլերն» աստիճանաբար հայտնվեցին «Գարուն» ամ-

[5] **Պետրոսյան** 1968, 21:

[6] **Ջեյթունցյան** 1968, 11:

սագրում՝ Վարդգեսի գլխավորությամբ»: Ուշագրավ է, որ ամսագրի հիմնադիրն այն դիրքորոշմանն էր, որ ամսագիրը հայաստանյան գրական իրականության մեջ նոր հրապարակախոսական շարժում էր ձևավորել, և այդ մասին հայտարարում էր իր ելույթներում: «Ես, որպես «Գարուն» ամսագրի առաջին համարի հեղինակ, ինձ իրավունք եմ վերապահում ասել՝ այն բերեց նոր հրապարակախոսություն, նոր, կարելի է ասել՝ նորագույն, որովհետև անցյալ տարիներին՝ մինչև 60-ական թվականները, հրապարակախոսություն, որպես այդպիսին, չի եղել, իսկ հրապարակախոսությունը ժուռնալիստիկայի բարձրագույն պիլոտաժն է»,- ասում էր հրապարակախոս Ա. Հովհաննիսյանը: Դեռևս 1956-ին, ձեռքը ժամանակի զարկերակին դրած, Վ. Պետրոսյանը երիտասարդ ժուռնալիստներին առաջարկում է մտորել այդ թեմայի շուրջ, և մասնավորապես հաշիվ տալ ինքն իրեն, թե ինչի տակ է ստորագրություն դնում: «Արժե խոսել այս բառերի շուրջ: Թող յուրաքանչյուր ժուռնալիստ թերթի իր հիշողությունը՝ հաշիվ տա իր արածի ու չարածի համար: Թող յուրաքանչյուր ժուռնալիստ մտաբերի այն նյութերը, որոնց տակ դրվել է իր ստորագրությունը: Կյա՞նքն է արդյոք թելադրել այդ նյութերը. Կիրք ու կրակ կա՞ արդյոք այդ տողերի տակ, արդյո՞ք մեկնումեկը կարդալով դրանք, խորհե՞լ է, ուրախացե՞լ է ժուռնալիստի հետ և ցանկացել արդյոք, նորից հանդիպել այդ ստորագրությանը…»[7]):

Որպես հիմնականում երիտասարդության խնդիրներն արտացոլող ամսագիր, բնական է, որ «Գարունը» հիմնականում միտված պետք է լիներ տպագրվող հեղինակների հենց այս տարիքային խմբի հետաքրքրություններին ու խնդիրների բացահայտմանը, սակայն այս ասելով, նկատի չունենք, որ հեղինակներն այլ հարցեր ու ավելի ընդգրկուն խնդիրներ չէին ներկայացնում: Ըստ այդմ, ժանրային առումով նաև տարբեր էին «Գարունում» տպագրվող հրապարակախոսական նյութերի թեմաներն ու դրանք ամփոփող ժանրերը: Օրինակ, եթե Մարգո Ղուկասյանն իր հոդվածներում հիմնականում բարձրացնում էր հասարակական-քաղաքական, կամ առավելապես երկրի տնտեսությանը վերաբերող խնդիրներ, ապա Արմեն Հովհաննիսյանի հրապարակախոսական հոդվածներում գերակշռում էր հանրային կյանքն՝ իր վարք ու բարքով ու թերություններով: Ինչ վերաբերում է երկրի տնտեսությանը, ապա այն ընդգրկում էր հանրապետության ընդերքին վերաբերող հարցերից մինչև ջրային, հողային պաշարներ ու ձեռակերտ հուշարձանների

[7] **Պետրոսյան** 2000, 165:

պաշտպանություն և բնապահպանություն: Այս ասելով՝ հարկ է ընդգծել, որ ամսագրում բարձրացված բոլոր հարցերի նկատմամբ խմբագրությունը դրսևորել է հետևողականություն, համարից-համար անդրադառնալով աստիճանաբար ավելացրել դրանց հրապարակախոսական հնչեղությունը, ընդսմին՝ հասնելով տնտեսության և ժողովրդի համար շահեկան շատ ու շատ հարցերի հանգուցալուծման: Այսինքն, ամսագիրը որոշակի գործառույթ է կատարել՝ այդպիսով մեծապես նպաստելով երկրի առաջ ծառացած ամենաբարդ ու խրթին հիմնահարցերի լուծմանը: Այս գործառույթն, իհարկե վեր էր սոսկ երիտասարդությանը հուզող շրջանակներից և այդ տարիներին կտրուկ բարձրացնում էր «Գարունի» հեղինակությունը՝ ավելի պահանջված դարձնելով: Կ. Բոգոլյուբովը «Խորհրդային ամսագրերը»[8] գրքում առանձնացնում է ամսագրերի հետևյալ հիմնական տիպերը՝ հասարակական-քաղաքական՝ գրական-գեղարվեստական, արվեստի և մշակույթի գծով, արտադրատեխնիկական, երիտասարդական, մանկական, մատենագիտական և այլն: Ելակետ ընդունելով դասակարգման նման համակարգը՝ կարող ենք ընդգծել, որ «Գարունն» իր լույսընծայման առաջին իսկ օրից ծրագրում է ընթերցողների վրա ներազդել սոցիալ-հոգեբանական և գեղագիտական տեսանկյունից՝ բարձրացված խնդիրն ուղղորդելով սկզբից մինչև դրամատիզմով լեցուն զարգացում և ապա՝ ավարտուն հանգուցալուծում: Այս համատեքստում թեմաների շարունակական արծարծումը կարելի է համարել «Գարունի» հրապարակախոսական հիմնական ուղղվածություններից մեկը, որ որդեգրել էր գլխավոր խմբագիրը: Հոդվածների այս շարքում հարկ է առանձնացնել մի քանիսը՝ «Հողը բողոքում է», «Պահպանենք Հայաստանի ջրերը», «Բաց նամակ երկու միլիոն հարցերով» աղմկահարույց հարցադրումներով, մասնավորապես՝ վերջինի նպատակն է եղել նպաստել ՀՍՍՀ Գիտությունների Ակադեմիայում «Ջրային պաշարների ուսումնասիրության և կոմպլեքսային օգտագործման գիտական խորհրդի ստեղծման»: Սույն համատեքստում, իր նպաստը բերելով պետության համար կարևոր խնդիրների լուծմանը՝ ամսագիրը պարբերաբար անդրադարձել է Արփա-Սևանի շինարարության հոգսերին, և «Գարունն» այդ տարիներին տարանջատվում էր լույսընծայվող մյուս ամսագրերից՝ կատարելով յուրօրինակ «գործադիրի» գործառույթ: Միով բանիվ, «Գարունի» նմանատիպ հրապարակումներն իրենց բնույթով առավել քան կառուցողական էին, և բարձրացնում էին խնդիրներ, որոնք հուզում էին թե՛ վերևներին,

[8] **Боголюбов** 1958, 127:

թե՛ ներքևներին, այսինքն՝ դասական իմաստով կատարում էին հրապարակախոսությանը ներկայացվող ամենակարևոր և գլխավոր պահանջը՝ հուզել և ժողովրդին և իշխանություններին: Ի շարս բազմաթիվ անվանի գրողների և հրապարակախոսների, Վ. Պետրոսյանի «Գարունում» տպագրվել են անվանի գիտնականներ և մասնագետներ: Ամսագրի էջերում պարբերաբար հանդես են եկել ակադեմիկոս Վիկտոր Համբարձումյանը, իր պատերազմական հուշերն առաջին անգամ տպագրելու պատիվը «Գարունին» է ընձեռել ԽՍՀՄ մարշալ Հովհաննես Բաղրամյանը: Այս և վերը նշվածներն այն առանձնահատկություններն էին, որոնք բնորոշ էին ամսագրում տպագրված հրապարակախոսական հնչեղության գրեթե բոլոր հոդվածներին: Ինչ վերաբերում է «Գարունի» բերած գրական նորույթին, ապա՝ լրագրական նորարարության, կամ նորամուծության առումով, ամսագրում լայնորեն կիրառվել է ակնարկի ժանրը, որը գեղարվեստական ժանրից աստիճանաբար զարգացել ու վերաճել է բովանդակային առումով նոր՝ հրապարակախոսական ժանրի, այսինքն՝ ակնարկը, ներառելով գրական և լրագրողական ժանրերը, «Գարունում» վերաճել և ձեռք է բերել հրապարակախոսական նոր որակ: Օրինակ, Մարգո Ղուկասյանի «Երկրորդ քաղաք», Մ. Մանուկյանի «Զանգեզուրյան աշուն» և նմանատիպ այլ ակնարկային ժանրի հոդվածներում առկա է հրապարակախոսական տարրը, ինչը ժամանակին մեծ արձագանք է գտել հասարակության ամենալայն շրջանակներում: Նորույթ է նաև այն, որ «Գարունը» ծնունդ առնելով համամիութենական ամսագրային նոր քաղաքականության արդյունքում, աստիճանաբար սկսեց ավելի մեծ տեղ տալ երիտասարդության գաղափարական, գեղագիտական և աշխատանքային դաստիարակությանը, հայրենասիրական ոգուն, նրա կենսական խնդիրներին: Դրա ապացույցն է մեծ թվով սկսնակ շնորհալի բանաստեղծներին ու գրողներին լայն ասպարեզ տրամադրելը, ինչով, ինչպես ժամանակակիցներն են վկայել, «Գարունն» իրական գարուն էր բերել բոլոր այն երիտասարդներին, ովքեր տաղանդ ունեին, սակայն հանրությանը հայտնի դառնալու հնարավորություն դեռ չունեին: «Գարունն» իրական «կնքահայր» էր դարձել շատ անվանիների համար, ովքեր այստեղ էին արել իրենց առաջին քայլերը. Էդուարդ Միլիտոնյան, Հենրիկ Էդոյան, Գրիգոր Հարությունյան, Ռազմիկ Դավոյան, Արտեմ Հարությունյան, Հովհաննես Գրիգորյան, Հրաչյա Բեհլերյան և այլք:

Այստեղ ևս ընդգծենք այն հանգամանքը, որ ամսագիրն, այնուամենայնիվ, գործել ու կայացել է խորհրդային գաղափարախոսության մամլիչի ու պլանային կոչվող քարոզչական մեքենայի անձուկ պայմաններում, սակայն,

այս ամենով հանդերձ, ինչը Վ. Պետրոսյանի խմբագրած ամսագրի գրեթե բոլոր համարների ուսումնասիրությունն է ցույց տալիս, գրող-հրապարակախոսի նրա վարպետությունը կայացել է նրանում, որ ժամանակի ստեղծագործողներին առաջադրվող պահանջներից առանձնապես չշեղվելով, այնուամենայնիվ, ամսագրի ստեղծագործական հայեցակարգը ձևավորել է հայեցի մտածողությամբ և մասնավորապես՝ հայ մարդու մտածելակերպին համահունչ մոտեցումներով: Այդ անելիս, նրա գրողական վարպետությունը դրսևորվել է նրանում, որ ամսագիրն ընթերցողների մեծ բանակ է հավաքել հասարակության ամենալայն շերտերից՝ բավարարելով տարիքային ամենատարբեր շրջանների ցանկությունները: Ամսագրում տեղ գտած հրապարակախոսությունը (նաև գեղարվեստականը զգալի մատուցմանը՝ որոշակի կերպարներով) հասարակական երևույթներին մոտենում էր արդիականության դիրքերից, դրանցում տեսնելով շարժում և զարգացում: Ամսագիրն իր հրապարակումների արժեքը բարձրացնում էր ճշմարտությունը օբյեկտիվորեն ներկայացնելու հաշվին: Այսպիսով, հեղինակների նշանակետում էին՝ և քաղաքենին, և ճշմարիտ հայրենասերը, և նոր սերնդի մարդը, և մոդայի խնդիրը, և մշակութային անհատականությունը, նաև՝ ո՞վ է գրողը, արտիստը, նկարիչը, ի՞նչ է ուրբանիզացիան, «մեր տունը», «մեր քաղաքը», սփյուռքը: Ժամանակի այլ հրատապ խնդիրներ ներկայացնելով ամսագրի ամենատարբեր համարներում, «Գարունը» հրապարակախոսությունը բարձրացրեց այն աստիճանի, որ կարողացավ իր ժամանակի բազում հարցերի պատասխանները գտնել: Պարզ է դառնում նաև, որ «Գարունը» իհրավի բանաձևերի օրինաչափություններով հանդես եկող ամսագիր էր, թեև անհայտ հավասարումներով, սակայն որտեղ հայտնին միշտ անհայտին էր հետամուտ»: Խորհրդային գրաքննության պայմաններում «Գարունն» իր թեմաներով, կյանքի տարաբնույթ ոլորտներում խորազնին թափանցումներով փորձել է ընդդիմախոսի դեր ստանձնել: «Գարունն» այդ տարիներին մի ապաստան էր Խորհրդային Միության մեջ, «ուր կարող էին ազատորեն դրսևորվել ժամանակի ամենատաղանդավոր մարդիկ»[9]: Ամսագիրը բարձրանում էր խորհրդահայ ամսագրային «հնոտությունից» և տիրում նոր մտածողության խորը, բայց միաժամանակ՝ ավելի ցցուն և տեսանելի մեխանիզմների[10]:

---

[9] **Աղաբեկյան** 1992, 10:

[10] Ժուռնալիստիկա 2012, 37:

Եզրակացություն

«Գարուն» ամսագիրն իր ստեղծման փաստով գրական միջավայրում դարձավ հեղափոխական մի կղզյակ, ուր լայնորեն զարգանում ու կյանք էին առնում գրական արդիական ուղղություններ՝ նորարար գրողների ու ամենատարբեր ստեղծագործողների ավանգարդիստական նախաձեռնություններ կյանքի կոչելով: Պետք է ընդգծել նրա հիմնադիր-խմբագիր Վարդգես Պետրոսյանի անհատական խոշոր ներդրումն այս ամենում, երբ հայտնաբերվում էին նորանոր տաղանդներ, ովքեր իրենց գրողական մկրտությունն էին ստանում «Գարուն» ամսագրում: Իսկ այստեղ ձևավորվող հրապարակախոսական ժանրը հագենում էր նոր՝ գեղարվեստական մտածողության տարրերով, որն իր ուրույն ձևով նպաստում էր միջավայրի իրատեսական ճանաչողությունը:

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Աղաբեկյան Կ. 1992, Արդի հայ արձակի զարգացման միտումները (1960–80-ական թթ.), Երևան, ԵՊՀ հրատ., 336 էջ:

«Գրական թերթ», 1969, 1 հուլիսի:

«Գրական թերթ», 1984, 22 ապրիլի:

Գրական թերթ, 1974, 13 սեպտեմբերի:

Ջեյթունցյան Պ. 1968, Սրում թե՞ հաշտեցում, Չափանիշ, «Գարուն», Երևան, թիվ 8, էջ 11–15:

Ժուռնալիստիկա 2012, Տեսության և պատմության հարցեր, պրակ ԺԲ., Երևան, ԵՊՀ հրատ., 206 էջ:

Պետրոսյան Վ. 1968, Հավասարում բազում անհայտներով, «Գարուն», թիվ 3, Երևան, էջ 18–24:

«Ավանգարդ», 1959, 5 ապրիլի:

Պետրոսյան Վ. 2000, «Ստորագրության պատիվը», Երևան, «Վան Արյան» հրատ., էջ 165:

Боголюбов К. 1958, Советские журналы, Москва, с. 387.

ВАРДГЕС ПЕТРОСЯН – ОСНОВАТЕЛЬ ЖУРНАЛА «ГАРУН»

НУРИДЖАНЯН Г.

Резюме

Ключевые слова: Вардгес Петросян, «оттепель», эпоха открытости, развитие публицистического жанра, переводческая школа, новаторство, художественный очерк.

Журнал «Гарун» («Весна»), основанный В. Петросяном, стал глашатаем передовых идей и рупором писателей-авангардистов.

На страницах журнала издавались произведения молодых талантливых армянских писателей постсталинской эпохи. В. Петросян стал основоположником новой публицистической школы, яркими представителями которой стали публицисты 60-ых гг. XX в. – Марго Гукасян, Армен Оганисян и др. Изданное в «Гаруне» эссе В. Петросяна «Армянские эскизы» наметило новое направление в истории армянской публицистики.

Журнал «Гарун» заложил основу развития нового жанра современной публицистики, в том числе очерка. Журнал способствовал также становлению школы художественного перевода в Армении.

VARDGES PETROSYAN AS THE FOUNDING EDITOR OF THE MAGAZINE "GARUN"

NURIJANYAN G.

Summary

Key words: Vardges Petrosyan, "the Thaw", epoch of openness, development of the genre of public writing, school of translation, innovation, essay.

The magazine "Garun" ("Spring"), founded by V. Petrosian became a herald of advanced ideas and a trumpet for avant-garde writers.

The pages of the magazine were filled with the writings of the young and talented Armenian writers of the post-Stalin epoch. V. Petrosian was the founder of the new school of public writing, brilliant representatives of which in the 60s of the 20^{th} century became such public writers as Margo Ghukasian, Armen Hovhannisian and others. The essay “Armenian Sketches” by V. Petrosian traced out a novel rout in the history of Armenian public writing.

Thus, the magazine “Garun” laid the foundations of the development of the new genre of literary public writing, essay in particular. The magazine was also conductive to the development of the school of literary translation in Armenia.

ՀՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ
ARCHAEOLOGY

ՀԱՅԿ ԱՎԵՏԻՍՅԱՆ*
Պատմական գիտությունների դոկտոր
Երևանի պետական համալսարան
hykavetisyan@yahoo.com
ԱՐՏԱԿ ԳՆՈՒՆԻ
Պատմական գիտությունների թեկնածու
Երևանի պետական համալսարան
uruatry@rambler.ru
ԱՐՍԵՆ ԲՈԲՈԽՅԱՆ
Պատմական գիտությունների թեկնածու
Երևանի պետական համալսարան
arsenbobokhyan@yahoo.com

ՆԱԽԻՋԵՎԱՆԻ ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԲՐՈՆԶԻ ԵՎ ԵՐԿԱԹԻ ԴԱՐԱՇՐՋԱՆՈՒՄ

Բանալի բառեր՝ Նախիջևան, Հայկական լեռնաշխարհ, վաղ բրոնզի դար, միջին բրոնզի դար, ուշ բրոնզի դար, վաղ երկաթի դար, Ուրարտու:

Ներածություն

Գտնվելով Հայկական լեռնաշխարհի կենտրոնական հատվածում՝ Նախիջևանը էական հետք է թողել տարածաշրջանի պատմամշակութային զար-

* *Հոդվածը ներկայացվել է 25.03.20, գրախոսվել է 30.03.20, ընդունվել է տպագրության 27.05.20:*

գացումներում[1]: Այն մոտ 6000 կմ² մակերես զբաղեցնող լեռնային գոտի է, որի տարածքի 75%-ը գտնվում է ծովի մակարդակից 1000 մ բարձր. վրա, բնորոշվում է խիստ ցամաքային, չորային կլիմայով: Իր դիրքի, բնական հարուստ պաշարների (բազմամետաղներ, քարաղ, շինանյութեր) և դրանց վաղագույն շահագործման շնորհիվ տարածքն ինտենսիվ յուրացման է ենթարկվել սկսած հնագույն շրջանից[2] (նկ. 1): Սույն հաղորդումը նպատակ ունի ընդհանուր գծերով անդրադառնալ Նախիջևանի պատմական նշանակությանը բրոնզի և երկաթի դարաշրջանում (Ք.ա. IV հազ. կես – I հազ. կես) և ցույց տալ այն առանձնահատկությունները, որոնք տարանջատում և միավորում են խնդրո առարկա տարածքը Հայկական լեռնաշխարհի այլ շրջանների հետ:

Հետազոտության պատմությունը

Նախիջևանի հնագիտական հետազոտության պատմությունը պայմանականորեն կարելի է բաժանել երեք փուլերի՝ նախախորհրդային, խորհրդային և հետխորհրդային:

Նախիջևանյան հնությունները, տարածաշրջանի հետ կապված հին ավանդույթները միշտ էլ գրավել են հետազոտողների ուշադրությունը: Դեռևս Վ. Ռուբրուկը հիշատակում է Նոյի կողմից կառուցված հնձանները[3]: Նախիջևանի մասին հայ մատենագիրների և անտիկ հեղինակների հիշատակությունները ի մի է բերում հայր Ղ. Ինճիճյանը[4]: Ժ. Շարդենը մանրամասն նկարագրելով տարածաշրջանի քաղաքները, Նախիջևանը նույնացնում է Արտաշատի հետ[5]: Ֆրանսիացի ճանապարհորդ Ժ.Բ. Տավերնիեն մանրամասն նկարագրում է տարածաշրջանը, հիշատակում Նոյի գերեզմանի վայրում կառուցված մզկիթը, Նախիջևան քաղաքից ոչ հեռու գտնվող աշտարակները, հայկական վանքերը, Արաքսի կամուրջը[6]: Ռ. Փորթերը իր ճանապարհորդա-

[1] Նախիջևանի բնական պայմանների, պատմության, պատմական հուշարձանների և դրանց ուսումնասիրության պատմության մասին ընդհանուր առմամբ տե՛ս **Այվազյան** 1986: **Այվազյան** 1987: **Այվազյան** 1990: **Այվազյան** 2007:

[2] Այս իմաստով գրականության մեջ հատկապես շեշտվում է աղի հանքերի հնագույն շահագործման հանգամանքը (**Надеждин** 1901, 421: **Լալայեան** 1906, 202: **Алиев** 1983, 79–87) (հմմտ. Դուզդաղի աղի հանքերը՝ նկ. 2): Հին աշխարհում աղի հանքերի շահագործման կարևորության մասին հմմտ. **Мелларт** 1982, 38: **Սիմոնյան** 2013, 8: Վաղ շրջանում կարևոր է եղել նաև Դերիդաղի ծարիրի հանքերի շահագործումը (**Рагимова** 2009, 39):

[3] **Rubruk** 1900, 270.

[4] **Ինճիճեան** 1822, 218:

[5] **Шарден** 1901, 297–298.

[6] **Tavernier** 1678, 16–20.

կան նոթերում հիշատակում է հռոմեական կամուրջը[7]: Մ. Սեն-Մարտինը և Դ. դե Մոնպերյոն նշում են, որ Ջուղան կառուցված էր Տիգրան արքայի կողմից[8]: Օ. Եվեցկին[9], իսկ հետագայում Ի. Շոպենը, անդրադառնալով Նախիջևանի հնագիտական նկարագրությանը, նշում են տասնյակ միջնադարյան հուշարձաններ, ինչպես նաև ակնարկում որոշ հուշարձանների ավելի հին թվագրման մասին (Արաքսի կամուրջը, Կարաբագլարը և այլն): Մասնավորապես, շեշտվում են Կարաբագլարի սյուների խոյակները, որոնք հիշեցնում են Պերսեպոլսի սյուները: Ընդ որում, Կարաբագլարի հիմնադրումը հեղինակի կողմից վերագրվում է Տիգրան Երվանդյանի քրոջը՝ Տիգրանուհուն: Տիգրան Երվանդյանին է վերագրվում նաև Ապարանի (ըստ Ի. Շոպենի՝ Տիգրանակերտ), Նախիջևանի և Շարուրի կառուցումը[10]: Բնական է, բոլոր հիշյալ հեղինակները հիշատակում են նաև Նոյի գերեզմանը:

Նախիջևանի հնագույն շրջանի հուշարձանների հնագիտական ուսումնասիրությունը սկսվում է XIX դ. երկրորդ կեսից[11]: Առաջին հերթին հետազոտողների ուշադրությունը գրավեցին Կողբի և Նախիջևանի աղի հանքերը[12]: Եվ սա պատահական չէր, քանի որ դրանց հնագույն շահագործման մասին տեղեկություններ պահպանվել էին տեղի ավանդազրույցներում, ըստ որոնց, այդ հանքերի առաջին բանվորը հենց Նոյ նահապետն է եղել[13]: Դեռևս 1860 թ. հետազոտողների ուշադրությունը գրավել էին խորը հորերը, որոնք, ամենայն հավանականությամբ, հանդիսանում էին հնագույն հանքահորերի հետքեր[14]: Առաջին գտածոները արձանագրվել են 1870 թ. Ֆ. Բայերնի կողմից: Հետագա տասնամյակներում ևս հանքերի տարածքում արձանագրվել են քարե գործիքների պատահական գտածոներ[15]: Դրանք քարե կացիններ և սեպեր էին, որոնք բերվել էին Սանկտ Պետերբուրգ, իսկ մյուս մասը՝ Թիֆլիսի Կովկասյան թանգարան[16]: Այս գործիքները քանիցս դարձել են քննության

[7] **Porter** 1821, 214.

[8] **Saint-Martin** 1818, 133: **de Montpereus** 1840, 21: Ն. Մուրավյովը Ջուղան համարում էր Հայաստանի հին մայրաքաղաք (**Муравьев** 1841, 126):

[9] **Евецкий** 1835, 200.

[10] **Шопен** 1852, 68, 319, 327–330.

[11] **de Montpreux** 1840, t. IV 6–10: **Պարրոտ** 1990, 84:

[12] **Евецкий** 1835, 65–66: Հմմտ. **Հակոբյան** 1960, 52:

[13] **Никитин** 1882, 110.

[14] **Надеждин** 1869, 234.

[15] **Вейденбаум** 1888, 412.

[16] **Никитин** 1882, 138: **Коллекция** 1902, 192:

առարկա Ի. Պոլյակովի, Պ. Նադեժդինի, Ե. Լալայանի կողմից[17]: Հետազոտությունների հաջորդ թիրախ հանդիսացավ Կարմիր վանքի տարածքը: Այստեղ դեռևս 1893 թ. վանահայր Գրիգորիս վարդապետի կողմից հավաքվել էր մի պատկառելի հավաքածու, որը հետագայում հանձնվել էր Մայր Տաճարի թանգարան: Հավաքածուն ընդգրկում էր հնէաբանական նյութեր (կենդանիների, սողունների և խխունջների բրածոներ), դրամներ (անտիկ և միջնադարյան), ինչպես նաև մեծ քանակության խեցեղեն[18]: Գրիգորիս վարդապետի բացահայտումները խթանեցին հնագիտական հետախուզական աշխատանքները տարածքում, որոնք նախաձեռնեց Ն. Ֆյոդորովը: Վերջինս, Գրիգորիս վարդապետի խնդրանքով, հետազոտեց նաև վանքի մերձակա բարձունքը, որտեղ հայտնաբերվեցին զգալի քանակությամբ խեցեղեն, մետաղ, ինչպես նաև՝ կավե արձանիկ[19]: Այս տարածքը հետազոտվեց նաև 1905 թ. Ե. Լալայանի կողմից: Նա այստեղ պեղեց մի շարք դամբարաններ, նշելով, որ թաղումներն ուղղված են հյուսիս-հարավ առանցքով, ունեն ձվածիր հատակագիծ և զուրկ են դամբանաթմբից[20]: 1904 թ. Լալայանը հետազոտեց նաև իր կողմից հայտնաբերված Քյուլ-թեփե 1 (Մոխրագագաթ/Մոխրաբլուր) և Քյուլ-թեփե 2 հուշարձանները[21]: Ինչպես հայաստանյան նմանատիպ հուշարձանները, այս հնավայրը ևս Լալայանի կողմից բնորոշվել է որպես դամբարանադաշտ: Այսքանով հանդերձ, նա նշում է հուշարձանի բազմաշերտ բնույթը (ա-

---

[17] **Желиховская** 1898, 20: **Надеждин** 1901, 421: **Լալայեան** 1906, 202:

[18] **Արարատ** 1893, 558–559: Այս հոդվածում, որտեղ, ցավոք, բացակայում են իրերի պատկերները, առկա է խեցեղենի բավականաչափ մանրամասն նկարագրություն: Հեղինակը խեցեղենը վերագրում է դասական շրջանին, սակայն նկարագրությունից բխում է, որ հավաքածուում ներկայացված է միջին բրոնզի դարի միագույն և բազմագույն խեցեղեն, այդ թվում նաև ծորակավոր անոթներ և «ընկուզամաններ»:

[19] **Спицин** 1909, 3–6: Ինչպես հայտնաբերված մետաղը (երկպարույր զարդ), այնպես էլ խեցեղենի որոշ նմուշներ (երկկոն կավանոթ փողաձև վզով և փորրիկ կանթով) ու արձանիկը վերագրվում են միջին բրոնզի շրջանին (Ք.ա. II հազ. սկիզբ) (**Алекперов** 1994, 18): Սակայն նյութի քննությունը և բազմաթիվ զուգահեռները (Կապան, Շիկահող, Կերեն) թույլ են տալիս վերագրել այդ նյութերը ավելի ուշ շրջանների՝ Ք.ա. VIII–VI և VII–V դդ. (**Xnkikyan** 2002, LXXX: **Գնունի** 2014, նկ. 4): Ինչ վերաբերում է արձանիկին, ապա այն իր պատկերագրական առանձնահատկություններով ավելի է մոտենում Պառավաքարի, Այրումի, Նորաշենի արձանիկներին (**Есаян** 1980, таб. 56), թեպետ արձանիկի նկարազարդումը (դեմքը՝ սպիտակ, շորերը՝ կարմիր) մոտեցնում է այն նույն վայրում հայտնաբերված բազմագույն խեցեղենին (**Алекперов** 1994, 18):

[20] **Լալայեան** 1906, 210:

[21] **Լալայեան** 1906, 209: 1960 թ. Քյուլ-թեփե 2-ը կրկին «հայտնաբերվեց» Օ. Աբիբուլաևի կողմից (**Абибулаев** 1982, 15):

ռանձնացնում է յոթ շերտ): Լալայանի գտածոներից հարկ է հիշատակել ձիու արձանիկը և անտիկ շրջանին պատկանող տափաշիշը[22]: Ե. Լալայանը հետախուզական աշխատանքներ է կատարել նաև պատմական Խրամ քաղաքի տարածքում[23]: 1903 թ. հետազոտություններ են կատարվել նաև Շարուրի դաշտում (Նորաշեն, Ղուշչի Դեմիրջի, Չափալախ Դուզ՝ քարանձավներ, դամբարաններ) Է. Ռոսլերի կողմից[24]:

Խորհրդային շրջանում տարածաշրջանի ուսումնասիրումը ստանում է ավելի կանոնավոր բնույթ. հանգուցային հուշարձան է դառնում Կարմիր վանքը: Դամբարանադաշտը ուսումնասիրվում է 1926 թ. Ի. Մեշչանինովի, իսկ մի քանի ամիս անց՝ Ա. Միլերի կողմից[25]: Հետագա տարիների ուսումնասիրությունների շարքում հատկապես պետք է նշել Ա. Ալեքպերովի ավանդը, ով ուսումնասիրում է Ախսալ (Երնջակ)[26], Շահբուզ (Շահապոնք) և մի շարք այլ հուշարձաններ[27]: Կարևոր նշանակություն ունեցան վերջինիս աշխատանքները Նախիջևանի կիկլոպյան ամրոցներում՝ Արբայում, Շոռ-թեփեում (Շորոտ)[28]: Նախիջևանի հնագիտական հետազոտություններին նոր թափ հաղորդեցին Քյուլ-թեփե 1-ի պեղումները, որոնք բացահայտեցին 18 էնեոլիթյան և 14 վաղբրոնզեդարյան հորիզոններ, ինչպես նաև՝ միջինբրոնզեդարյան շրջափուլին վերաբերող շինարարական մնացորդներ: Կարևոր նշանակություն ունեցան նաև Օ. Աբիբուլաևի սկսած և Վ. Ալիևի կողմից շարունակվող Քյուլ-թեփե 2 բնակավայրի պեղումները: Այս և նմանատիպ հուշարձանների հետազոտությունները թույլ տվեցին պարզաբանել Նախիջևանի տարածքում վաղ

---

[22] **Լալայեան** 1906, 208:

[23] **Լալայեան** 1906, 211:

[24] **Отчеты Археологической Комиссии за 1903 г.,** 1906, 85.

[25] **Мещанинов** 1926, 217–240: **Миллер** 1926, 326.

[26] Երնջակ ամրոցի հնագույն անցյալի մասին ակնարկում է Ստեփանոս Օրբելյանը, դրա կառուցումը վերագրելով Սիսակի սերնդի նահապետներից Երնջիկին (**Ստեփանոս Օրբելյան** 1986, Գ):

[27] **Алекперов** 1960, 248.

[28] **Алекперов** 1937, 254: **Алекперов** 1960, 249–262. Նկատի ունենալով Նախիջևանի հուշարձաններում հայտնաբերված միջին և ուշբրոնզեդարյան խեցեղենի յուրահատկությունը (գավաթներ, ծորակավոր և գունազարդ անոթներ)՝ Ի. Ջաֆարզադեն առաջարկում է «Նախիջևանյան մշակույթ» եզրույթը, որն, ըստ հեղինակի, ընդգրկում է Ք.ա. II հազ. և I հազ. առաջին կեսն ընկած ժամանակահատվածը (**Джафарзаде** 1956, 46–49): Այս պնդումը կարելի է համարել վիճելի, քանի որ Արաքսի միջին հոսանքում արձանագրվող զարգացումները կարող են պայմանավորված լինել վան-ուրմիական տարածաշրջանի ազդեցությամբ:

քաղաքային մշակույթի առաջացման հետ կապված խնդիրներ[29]: 1975 թ. վերսկսվում են Գիրան քաղաքի պեղումները, որոնք իրականացվել էին դեռևս 1913 թ. Ս. Տեր-Ավետիսյանի կողմից և շարունակվել 1926 թ.[30]: Կ. Ասլանովի ղեկավարած 1975–1990 թթ. պեղումները բացահայտեցին մի շարք բրոնզ-երկաթեդարյան հուշարձաններ[31]:

Հետխորհրդային շրջանում Նախիջևանը հայտնվել է ոչ միայն տեղական, այլև ֆրանկո-ամերիկյան և թուրքական հնագետների ուշադրության կենտրոնում: Վերջին տարիների ընթացքում այստեղ իրականացվել են լայնածավալ հետախուզական աշխատանքներ և մի քանի առանցքային հուշարձանների (Արբա/Օղլանկալա, Օվչուլար, նկ. 4-6) պեղումներ, որոնք էական ճշգրտումներ են մտցնում տարածաշրջանի բրոնզ-երկաթեդարյան հնագիտության ոլորտում[32]:

Պետք է նշել, որ բացի բնակավայրերից և դամբարանադաշտերից, Նախիջևանում ուսումնասիրվել են նաև ժայռապատկերներ (հատկապես տարածաշրջանի բարձրադիր գոտում՝ Կապուտջուղի Նավասար/Տապանասար վայրում): Նախիջևանից հայտնի են նաև վիշապաքարեր կամ վիշապոիդներ՝ մեկը Բջնակ/Քարե տուն հնավայրից է, մյուսը՝ Խոշկաշենից (Վիշապասար/Աժդահակի հյուսիսային ստորոտ, հմմտ. նկ. 3)[33]: Դրանցից հրապարակված է միայն Բջնակ/Քարե տան ձկնակերպը, որ գտնվել է Բաթաբաթ արոտավայրում. ընդ որում, թեև Ա. Այվազյանը խոսում է «հինգ ձկնակերպ կոթողների» մասին[34], սակայն դրանցից միայն մեկն է վիշապաքար[35]: 1983 թ. հետո այն տեղահան է արվել[36]: Հավանաբար հիշյալ վիշապաքարերից մեկն է (ձկնակերպ կոթող) դրված Նախիջևանի Պետական թանգարանի բակում[37]:

---

[29] **Алиев, Ибрагимов** 1979, 5–8: **Алиев, Сеидов** 1984, 15–18: **Алиев, Сеидов, Ашуров** 1986, 10–12.

[30] **Տեր-Ավետիսյան** 2010, 121–132, 161:

[31] **Bahşaliyev** 1997, 93.

[32] **Belli, Sevin** 1999: **Belli, Bahşaliyev** 2001: **Bahşaliyev, Marro** 2009: **Бахшалиев, Ашуров, Марро** 2009, 55–62: **Бахшалиев, Риствет, Ашуров** 2009, 82–87.

[33] **Ա. Այվազյան**, անձնական հաղորդում, 01.06.2013 թ., Երևան:

[34] **Այվազյան** 1974, 240–241: **Այվազյան** 1987, 8:

[35] **Алиев** 1972, 14–15: **Алиев** 1977, 50–52: **Այվազյան** 1981, 45–53:

[36] **Այվազյան** 1986, 159, նկ. 49: Այս վիշապաքարի մասին հմմտ. նաև **Алиев, Аллахвердиев** 1992, 81: **Belli, Sevin** 1999, 64: **Авшарова** 2010, 328 (վերջիններս վիշապաքարը հիշատակում են դամբանաբլուրի վրա):

[37] **Belli** 2007, 113–115. Նախիջևանում առկա վիշապաքարերի մասին հմմտ. նաև **Խանզադյան** 2003, 35:

Այստեղ հատուկ պետք է նշել Օձասարի ուրարտական արձանագրության հայտնաբերման մասին[38], որը թույլ տվեց որոշակիացնել Նախիջևանում ուրարտական ներկայության մասին առկա տեղեկությունները (Արբա և Ճահուկ բերդերը)[39]:

Կատարված հետազոտությունները հնարավորություն են տալիս վերականգնել Նախիջևանի զարգացման հիմնական առանձնահատկությունները բրոնզի և երկաթի դարերում և առանձնացնել մի քանի հիմնախնդիրներ:

Զարգացման հիմնական փուլերը

Արդեն *պղնձի դարում* (Ք.ա. մոտ 5000–3500 թթ.) Նախիջևանը յուրահատուկ մշակութային կենտրոն է, որն իր զարգացման առանձնահատկություններով զուգահեռներ ունի Եփրատի վերին հոսանքի (Նորշունթեփե), Վանի (Թիլկիթեփե)[40] և Ուրմիայի[41] ավազանի հուշարձաններում (գունազարդ խեցեղեն, կացարանաշինություն, ևն), սակայն ցուցաբերում է նաև յուրահատկություններ, որոնք զուգահեռներ չունեն[42]:

Վաղ բրոնզի դարի (Ք.ա. մոտ 3500–2400 թթ.) սկզբնական փուլը ներկայացված է Քյուլ-թեփե 1 և 2, Մախտա 2, Օվչուլար թեփեսի բնակավայրերի պեղումներով, որոնք բացահայտում են շենգավիթյան (կուր-արաքսյան) մշա-

---

[38] **Hmayakyan, Igumnov, Karagyozyan** 1996: **Իգումնով, Կարագյոզյան, Հմայակյան** 1997: **Կարագյոզյան** 2008, 54–67: Օձասարը ժողովրդական ավանդազրույցներում ներկայանում է որպես մի կախարդական վայր (**Гакстгаузен** 1857, 118):

[39] Հմմտ. **Այվազյան** 1976, 87–95: Սարգոն II-ի Ք.ա. 714 թ. ուրարատական արշավանքի ժամանակ Վանա լճից հյուսիս՝ Բարիի երկրի շրջանում հիշատակվող Ռիար լեռան մոտ գտնվող Ռուսա II-ի «Արբու ժառանգական քաղաքը» համադրվում է Արբա-Օղլան կալայի հետ (**Алекперов** 1937, 258–259):

[40] **Бахшалиев, Ашуров, Марро** 2009, 60.

[41] **Bahşaliyev** 1997, 96–97. Ուրմիայի և դեպի արևելք ընկած Իրան-Հարավային Թուրքմենիա տարածաշրջանի հետ սերտ կապերի մասին է վկայում կապարի բարձր պարունակությունը բրոնզե իրերում սկսած մ.թ.ա. IV հազ. (**Бахшалиев, Рагимова** 1986, 28–29: **Бахшалиев** 1986, 36–37):

[42] Այստեղ պետք է հիշատակել պղնձի դարաշրջանի վաղ փուլին վերաբերող կացարանները, պեղված Օվչուլար թեփեսիում (**Бахшалиев, Ашуров, Марр**о 2009, 63: **Бахшалиев, Риствет, Ашуров** 2009, 87): Դրանք համարյա քառակուսի հատակագիծ ունեն, որոնց պատերի երկայնքով պահպանվել են փոսիկներ և որտեղ տեղադրված էին փայտյա սյուներ: Այս տիպի կացարանները չեն նմանվում ոչ Թեղուտի կլոր հատակագծով, ոչ Ադաբլուրի ուղղանկյուն հատակագծով, ոչ էլ Քյուլ թեփեի պղնձեդարյան կացարաններին, որոնք ներկայացված են քարաշեն և կավածեփ կլոր և ուղղանկյուն օրինակներով (**Թորոսյան** 1979: **Абибулаев** 1982, 24–38: **Արեշյան** 1991, 5):

կույթի վաղագույն փուլերի առկայությունը այս հուշարձաններում: Ակնհայտ է վաղբրոնզեդարյան շերտերի հզորությունը և դրանց անմիջական կապը պղնձեդարյան հորիզոնների հետ՝ հատկապես խեցեղենի տեսականիում[43], ինչը նկատվում է նաև ներկայիս Հայաստանում[44]: Նախիջևանում ներկայացված են նաև շենգավիթյան մշակույթի թաղումային հուշարձանները: Մասնավորապես Շարուրի դաշտի Կարաբուլաղ բնակատեղիից ոչ հեռու պեղվել են դամբանաբլուրներ[45]:

Վաղ բրոնզի ավարտական փուլում Քյուլ-թեփե 2-ի տիպի հուշարձաններում արձանագրվում է վերջնական անցումը ուղղանկյուն կացարանաշինության ավանդույթներին: Նույն երևույթը դիտարկվում է Արաքսի հովտի մի շարք հուշարձաններում, մասնավորապես Ղարաքյոփեկթեփեում, որտեղ, ի տարբերություն մի շարք այլ բնակավայրերի[46], չի նկատվում ժամանակագրական ընդհատում[47]: Ք.ա. III հազ. կեսին վերագրվող Քյուլ թեփե 2-ի հորիզոններում, հուշարձանի կենտրոնական հատվածում հաստատագրված է բնակավայրի մի մասը զատող պարիսպ: Այս հորիզոններում սև փայլեցված խեցեղենի հետ մեկտեղ հայտնաբերվել է նաև գունազարդը[48]: Այս փաստը թույլ է տալիս ենթադրել, որ շենգավթյան մշակույթի ավարտական փուլում և անցումային շրջանում նկատվում է ավանդական կապերի թուլացում և մշակութային համասեռության տարալուծում[49], Արաքսի միջնահոսանքում, հավանաբար, ուժեղանում են ավանդական կապերը Վան-Ուրմիական տարածաշրջանի հետ[50]: Այս առումով հատկանշական են Հողոցիմ (Յայջի) դամբարանադաշտի նյութերը, որոնցում առկա է ինչպես միագույն գունազարդ, այնպես էլ սև փայլեցված խեցեղեն: Հողոցիմի, Ազնաբերդի, Տիգրանավանի նյութերն

[43] **Bahşaliyev** 1997, 103: Քյուլ-թեփե 1-ի էնեոլիթյան և վաղբրոնզեդարյան հորիզոնները իրարից զատվում են ստերիլ շերտով (**Абибулаев** 1982, 80), իսկ Օվչուլար թեփեսիում միայն մեկ վայրում է դիտարկվում անցումը, որը նշանավորվում է ճարտարապետական ավանդույթների կտրուկ փոփոխությամբ (**Бахшалиев, Ашуров, Марро** 2009, 61):

[44] Նմանատիպ երևույթներ դիտարկվում են նաև Արենիի ուշ էնեոլիթյան հորիզոններում (**Zardaryan** 2014, 209): Այստեղ հարկ է հիշատակել նաև Թեղուտից հայտնաբերված «Ք.ա. III հազ. հատկանիշներով» խեցեղենը (**Թորոսյան** 1979, տախտ. IX):

[45] **Ашуров** 2004, 26.

[46] **Ավետիսյան** 2003, 19: **Սիմոնյան** 2008, 81:

[47] **Исмаилов** 1981, 35–37.

[48] **Алиев, Сеидов** 1984, 15–18.

[49] **Ավետիսյան** 2014, 43–45:

[50] **Գնունի** 2001, 3–5:

ունեն իրենց զուգահեռները Ուզերլիք թեփեում և Հաֆթվան թեփեի VIC հորիզոնում[51]:

Սև-փայլեցված և գունազարդ խեցեղենի միասին հանդես գալն ազդարարում է *միջին բրոնզի փուլի* (Ք.ա. մոտ 2400–1500 թթ.) սկիզբը, մի դարաշրջան, որը բնորոշվում է գունազարդ խեցեղենի գերակայությամբ: Վերջինիս զարգացման հաջորդ փուլը ներկայացված է բազմագույն գունազարդով (Կարմիր Վանք, Քյուլ թեփե 1 և 2, Ք.ա. մոտ 1800 թ.), որն ունի զուգահեռներ Հաֆթվան թեփեի VIB հորիզոնի նյութերում: Երրորդ փուլը ներկայացված է Կարմիր Վանքի և Ջուղայի դամբարանադաշտերի նյութերով (Ք.ա. մոտ 1600 թ.)[52]: Արաքսի միջնահոսանքի միջին բրոնզի դարի ուշ փուլի բնակավայրերն իրենց հատկանիշերով (միջնաբերդ, ամրացված քաղաք) համապատասխանում են վաղ քաղաքի չափորոշիչներին[53]:

Ուշ բրրոնզ-վաղ երկաթի դարաշրջանը (Ք.ա. մոտ 1500–900 թթ.) ազդարարում է նոր իրավիճակ, որին բնորոշ է կիկլոպյան ամրոցների և սև/մոխրագույն խեցեղենի ի հայտ գալը: Նախիջևանի ուշ բրոնզի հուշարձանները հիմնականում ներկայացված են դամբարաններով[54]: Միևնույն ժամանակ, ուշ բրոնզի դարաշրջանից հայտնի է Ճահուկ բերդը[55]: Վաղ երկաթի դարում վերաբնակեցվում է Թագավորանիստ (Շահթախթի-Գյաուրկալա) ամրոցը: Վաղ երկաթի դարին են պատկանում նաև Ղալաջիկ, Ղազանչի, Չալխան կալա ամրոցները[56]: Անմիջապես նախաուրարտական շրջանին է վերաբերում Արբա ամրոցը, ընդ որում, այստեղ բլրի գագաթին փաստագրված է սյունազարդ սրահ[57]: Ամենայն հավանականությամբ, Նախիջևանի կիկլոպյան ամրոցները Արարատյան դաշտի և հարակից Շարուրի դաշտի պաշտպանական համա-

---

[51] **Bahşaliyev** 1997, 108.

[52] **Bahşaliyev** 1997, 108.

[53] **Массон** 1977, 5–7.

[54] **Bahşaliyev** 1997, 111–116. Գունազարդ խեցեղենի մասին մանրամասն տե՛ս **Belli, Bahşaliyev** 2001:

[55] **Այվազյան** 1976, 95:

[56] **Ахундов** 1959, 19–21: **Алиев, Сеидов** 1973, 8–9: **Абибулаев** 1982, 20: **Сеидов** 1986, 32–33.

[57] **Այվազյան** 1976, 95: **Абибулаев** 1982, 21: **Bahşaliyev** 1997, 116:

կարգի մի մասն են կազմում[58]: Նախիջևանի առանձնահատկությունն է գունազարդ խեցեղենի առկայությունը քննարկվող դարաշրջանում[59]:

Միջին երկաթի շրջանում (Ք.ա. մոտ 900–600 թթ.) Նախիջևանը Վանի թագավորության տարածման կարևոր օջախ է: Օձասարի արձանագրությունը վկայում է, որ ուրարտացիների մուտքը Արաքսի ձախակողմյան հատված տեղի է ունեցել Մենուայի օրոք: Այս վարկածը ժամանակին առաջ էր քաշել Բ. Պիոտրովսկին[60]: Հիշյալ արձանագրությունը, ինչպես նաև այստեղ հիշատակվող մի շարք տեղանուններ, վկայում են ուրարտական տարրի որոշակի ներկայության մասին Նախիջևանում: Մասնավորապես, տեքստերում հիշատակվում են Արծիկումե, Արծինե, Այանիանե, Բուլուա տեղանունները, որոնք նույնացվում են Արծին, Հայնեան, Բղեւ վայրերի հետ: Բացի այդ, Խորխորյան տարեգրության և Արևիսի արձանագրության վերլուծությունը թույլ են տալիս տեղայնացնել Գողթն, Արքսատա (Շահթահթի), Որդուատ (Օրդուբադ), Քարքի (Տիգրանավան) բնակավայրերը[61]: Սակայն Օձասարի արձանագրությունն ավելի շուտ վկայում է հետախուզական արշավանքի, քան կանոնավոր բնակեցման մասին: Այս վերջին հանգամանքը պետք է կապել Մենուախինիլիի տեղայնացման հետ[62]:

Ուրարտական ճարտարապետությունն ի հայտ է գալիս Արբայում, որը Վանի թագավորության շրջանում վերակառուցվում է: Մասնավորապես, այստեղի սյունասրահը ուրարտական շրջանով էր թվագրում դեռևս Ի. Շչեբլիկինը. բացառված չէ, որ այս ժամանակաշրջանում է կառուցվել հորված կարասներով սրահը[63]: Ուրարտական ներկայության հաջորդ ապացույցը Բջնակի ժայռափոր համալիրն է՝ բաղկացած չորս կոպիտ ժայռափոր խցերից, որոնք փորված են տուֆե ժայռային զանգվածում: Ըստ որոշ տվյալների, այստեղ հայտնաբերվել է նաև արձանագրություն[64]: Ուրարտական թաղումային հուշարձանների ճարտարապետության մեջ[65] բազմաթիվ զուգահեռներ է

---

[58] Շարուրի շրջանն իր այս գործառույթները պահպանել է մինչև միջնադար (հմմտ. **Խորենացի**, I ԺԲ):

[59] **Bakhshaliev, Marro** 2009, 95–97.

[60] **Пиотровский** 1959, 64.

[61] **Կարագեոզեան** 1998, 167–168: **Կարագոզյան** 2008, 54–67:

[62] Տարբերակ՝ Մենուախինիլի-Տաշբուրուն (**Арутюнян** 1985, 142: Հմմտ. **Никольский** 1911, 36–52):

[63] **Այվազյան** 1976, 80: **Абибулаев** 1982, 21:

[64] **Bahşaliyev** 1997, 118.

[65] Հմմտ. **Ավետիսյան, Բոբոխյան** 2008, 147–167:

ցուցադրում քառակուսի խորշերով բնորոշվող Յուլթչուի դամբարանը (Շարուրի դաշտ)[66]: Այս գոտի ուրարտական զորքերը կարող էին թափանցել Խոր Վիրապ-Արարատ (տարբերակ՝ Երևան-Դվին-Սադարակ-Շարուր-Նախիջևան) ճանապարհով[67]: Հայտնի են մի շարք պատահական գտածոներ, որոնք ակներևաբար ուրարտական են. դրանց թվում են Թագավորանիստի (Շահթախթի) և Ալիշարի մոտակայքում գտնված Վանի թագավորությանը բնորոշ նյութերը[68]:

Եզրակացություններ

Հնագիտական տվյալները ցույց են տալիս, որ Նախիջևանի տարածքը մշտապես սերտաճած է եղել Հայկական լեռնաշխարհին բնորոշ պատմամշակութային զարգացումներում: Վաղ բրոնզի դարում տարածքը հանդիսացել է շենգավիթյան մշակույթի կարևորագույն օջախը: Միջին բրոնզի դարում Նախիջևանն այն կենտրոնական գոտին է, որտեղ միավորվում են գունազարդ խեցեղենով բնորոշվող մշակույթների գրեթե բոլոր առանձնահատկությունները: Ուշ բրոնզի և վաղ երկաթի դարում այստեղ իշխում է կիկլոպյան ամրոցներով և սև փայլեցված խեցեղենով բնորոշվող լճաշեն-մեծամորյան մշակույթի տեղական տարբերակը: Վանի թագավորության գոյության շրջանում Նախիջևանն այն կամուրջն է, որը միացնում է այդ պետության կենտրոնական շրջանները Սևանա լճի ավազանի հետ[69]: Նախիջևանում ի հայտ են գալիս լեռնաշխարհի համար յուրահատուկ մշակութային այնպիսի երևույթներ, ինչպիսիք են ժայռապատկերները և վիշապ քարակոթողները:

---

[66] **Bahşaliyev** 1997, 117: **Ашуров, Бадалов** 2004, 27.

[67] Այս ճանապարհը բազմիցս վկայված է պատմական աղբյուրներում (**Մանանդյան** 1936, 140: **Манандян** 1954, 120: Հմմտ. **Эвлия Челеби** 1983, 87: **Porter** 1821, 210–211: **Муравьев** 1841, 154: **Шарден** 1901, 299–300): Ուրարտական Արտաշատի գոյության հանգամանքը (**Аракелян** 1982, 21), էլ ավելի հավանական է դարձնում այս երթուղու գոյությունը:

[68] **Այվազյան** 1987, 11: **Bahşaliyev** 1997, 118.

[69] Կարծիք կա, որ ուրարատացիները Տուշպայից հյուսիս-արևելք, մասնավորապես Անդրկովկաս, ներխուժել են Չինգիլյան լեռնանցքով՝ անցնելով Արաքսը Արարատի կողմից, ապա, հաղթահարելով որոշ լեռնանցքներ, Ջանգեմար գետի կիրճով հայտնվել Թագավորանիստում (Շահթախթի), ապա Արաքսի հովտով՝ Երևանի և Սևանա լճի կողմերը (**Алекперов** 1937, 256–258):

Մշակութային զարգացումների միտումներով Նախիջևանը մոտ է Սյունիքին[70] և Վասպուրականին[71], արտաքին կապերում՝ գերիշխում է իրանական ուղղությունը[72]:

Այսպիսով, Նախիջևանում առկա են այնպիսի մշակութային առանձնահատկություններ, որոնք տարածքը սահմանում են մի կողմից որպես կապող օղակ Վան, Ումիա և Սևան լճերի միջև ընկած շրջանների համար, մյուս կողմից՝ մի տեսակ, որպես «կոնտակտային գոտի», Հայկական լեռնաշխարհի կենտրոնում: Զարմանալի է, որ այս՝ միջնադարում հստակ տեսանելի առանձ-

[70] Սյունիքի հետ հաղորդակցությունը միջնադարյան և նոր շրջանի աղբյուրներում վկայված է մի քանի ուղղություններով. ա. Արաքսի երկայնքով (այս ճանապարհի գոյության մասին հին շրջանում կարելի է եզրակացնել Սեբեոսի մի ակնարկից. գրելով արաբական արշավանքի մասին, նա Նախիջևանը և Խրամ քաղաքը նշում է Աղվանից աշխարհից հետո (**Սեբեոս**, ԽԳ): Ճանապարհի այլ հիշատակումների համար հմմտ. **Աբրահամ Կրետացի**, XXII, 10–25, XLII, 1–20, XLVIII, 5–20: **Voyages** 1730, 120–130: **Никитин** 1882, 130–132: **Rubruk** 1900, 266–273: **Манандян** 1954, 202: Այս ճանապարհը, որի վրա, ի դեպ գտնվում էին նաև Կողբի աղի հանքերը, ամենայն հավանականությամբ, շարունակվում էր դեպի արևմուտք՝ Կաղզվան (**Вейденбаум** 1888, 413), բ. դեպի Վայոց Ձոր (**Евецкий** 1835, 200: **Տէր-Աւետիքեան** 1904, 96՝ Մարտիրոս-Նախիջևան ճանապարհով), գ. դեպի Շաղատ և Անգեղակոթ (ըստ՝ **Հասրաթյան** 1985, 70): Հարժիս- Բազարչայ (**Բարխուդարյան** 1960, 81): Թաշ Բուրուն-Արաքսի հովիտ-Նախիջևան ճանապարհի համար հմմտ. **Ղեւոնդ**, Ը: Երնջակ-Արարատի լանջեր ճանապարհի համար տե՛ս **Брун** 1867, 48: **Դավիթ Բաղիշեցի** 1956, 350: **Պարրոտ** 1990, 81–84: **Евецкий** 1835, 200: **Шопен** 1852, 318: **Колюбакин** 1906, 22 карта N 6):

[71] Չի բացառվում, որ Վան և Նախիջեվան տեղանունների *վան* տեղանվանական բաղադրիչը կարող է նույն արմատին հանգել և դրանով իսկ վկայել այդ շրջանների միջև առկա հնագույն լուրջ առնչությունների մասին՝ թերևս ուրարտական շրջանում, գուցե և ավելի վաղ: Չմոռանանք, որ Նախիջևանը կարևորագույն խաչմերուկ էր, որը կապում էր Վասպուրականը Այրարատին (հմմտ. **Փավստոս Բուզանդ**, ԾԵ): Նախիջևանից՝ Արարատյան դաշտ ճանապարհի մասին (Նախիջևան-Ղարաբաղ-Շարուր-Սադարակ-Վեդի) տե՛ս՝ **Զաքարիա Ագուլեցի**, § 1: Այս ճանապարհին միանում էր նաև Գեղարքունիքից՝ Սելիմի լեռնանցքով, Վայոց Ձորի Աղավնաձոր գյուղով դեպի Արարատյան դաշտ տանող ճանապարհը (**Տէր-Աւետիքեան** 1905, 66)

[72] Իրանական աշխարհի հետ կապը կարող էր իրականացվել ինչպես Սյունիքով, այնպես էլ անմիջականորեն (հմմտ. **Ղեւոնդ**, Բ) Արաքսի գետանցումով, Ջուղայի մոտ, որը գործում էր հնագույն ժամանակներից մինչև միջնադար և նոր շրջան (**Ղազար Փարպեցի** 1895, Գ, ԿԷ: **Անանիա Շիրակացի** 1979, 313: **Երեմյան** 1963, 41: **Հակոբյան** 1960, 126, 176: Հմմտ. **Մաթևոսյան, Մարաբյան** 2000, 124: **Աբրահամ Կրետացի** XXII, 10–25: **Никитин** 1882, 130, 139: **Տեր-Ավետիսյան** 2010, 122): Ատրպատական-Որդվատ (Օրդուբադ)-Գողթ ճանապարհի մասին խոսում է Ստեփանոս Օրբելյանը՝ նկարագրելով Ս. Բարդուղիմեոսի քարոզչության ճանապարհը, ինչպես նաև հեթանոսների փախուստը Գողթից Պարսկաստան (**Ստեփանոս Օրբելյան**, Չ, ԺԵ):

նահատկությունն իր արմատներով գնում է բրոնզի դար: Բայց և ակնհայտ է, որ Նախիջևանի աշխարհագրական դիրքն էր թելադրում այս տարածքին վերապահված դերը լեռնաշխարհի պատմության ընթացքում՝ որպես մի կողմից կամուրջ, մյուս կողմից՝ բաժանարար: Հիշյալ առանձնահատկությունները Նախիջևանը առանձնացրել են որպես մշակութային ինովացիաների մի կարևոր օջախ: Այս իմաստով տարածքի յուրահատկություններից է եղել նաև այն, որ Նախիջևանը մշտապես եղել է քաղաքագոյացնող գործընթացների կենտրոն: Ի դեպ, Նախիջևանի այդ դերն արտահայտված է նաև հին առասպելներում, որոնցում Արարատի լանջին տարածվող այս գոտին ընկալվում է որպես մարդկության առաջին բնակավայր (ժողովրդական ստուգաբանությամբ՝ Նոյ Նահապետի նախնական իջևան[73]):

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Աբրահամ Կրետացի 1973, Պատմություն, քննական բնագիրը, ռուս. թարգմ., առաջաբանը և ծանոթ. Ն. Ղորղանյանի, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 300 էջ:

Այվազյան Ս. 1974, Նախնադարյան կայան Նախիջևանի ԻՍՍՀ հյուսիսում, Բանբեր Երևանի համալսարանի, Երևան, N 3, էջ 238–241:

Այվազյան Ս. 1976, Արբա և Ճահուկ բերդերը, Լրաբեր հասարակական գիտությունների, Երևան, N 9, էջ 87–95:

Այվազյան Ս. 1981, Նավասարի ժայռապատկերները, Լրաբեր հասարակական գիտությունների, Երևան, N 2, էջ 45–53:

Այվազյան Ս. 1986, Նախիջևանի ԻՍՍՀ հայկական հուշարձանները (համահավաք ցուցակ), Երևան, «Հայաստան», 223 էջ:

Այվազյան Ս. 1987, Նախիջևանի կոթողային հուշարձաններն ու պատկերաքանդակները, Երևան, «Հայաստան», 398 էջ:

Այվազյան Ս. 1990, Նախիջևան. գիրք հուշարձանաց, Երևան, «Անահիտ», 366 էջ:

Այվազյան Ս. 2007, Նախիջևան. գրական էսսեններ, հետազոտման ուղեգրություններ, Երևան, «Գասպրինտ», 696 էջ:

Անանիա Շիրակացի 1979, Մատենագրություն, թարգմ., առաջաբանը և ծանոթ. Ա. Աբրահամյանի և Գ. Պետրոսյանի, Երևան, «Սովետական գրող», 400 էջ:

Ավետիսյան Հ., Բոբոխյան Ա. 2008, Ուրարտուի հնագիտություն, Երևան, «Բավիղ», 233 էջ:

[73] **Ղանալանյան** 1969, 157: **Ինճիճեան** 1822, 217:

Արեշյան Գ. 1991, Ադաբլուրի պեղումները, 1989–1990 թթ., Տիրացյան Գ. (խմբ.), ՀՀ-ում Դաշտային հնագիտական աշխատանքների արդյունքներին նվիրված գիտական նստաշրջանի զեկուցումների թեզիսներ, Երևան, ՀՀ ԳԱԱ հրատ., էջ 5–7:

Բարխուդարյան Ս. (կազմ.) 1960, Գորիսի, Սիսիանի և Ղափանի շրջաններ, Դիվան հայ վիմագրության, պր. II, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ, 240 էջ:

Գնունի Ա. 2001, Վաղ բրոնզի ավարտական փուլը Արաքսի միջին հոսանքում և Ուրմիա լճի ավազանում, Մերձավոր և Միջին Արևելքի պատմամշակութային ավանդույթները և ժամանակակից զարգացումները, Երևան, «Իրանագիտության կովկասյան կենտրոն», էջ 3–6:

Գնունի Ա. 2014, Կերենը քաղաքակրթության խաչմերուկում, Հայագիտական հանդես, Երևան, N 2, էջ 149–167:

Դավիթ Բաղիշեցի 1956, Ժամանակագրություն, Մանր ժամանակագրություններ, կազմ. Վ. Հակոբյանը, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., էջ 345–360:

Երեմյան Ս. 1963, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 153 էջ:

Զաքարիա Ագուլեցի 1938, Օրագրություն, Երևան, ԱրմՖԱՆ հրատ., 198 էջ:

Թորոսյան Ռ. 1979, Թեղուտի վաղ երկրագործական բնակավայրը, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ, 144 էջ:

Ինճիճեան Ղ. 1822, Ստորագրութիւն հին Հայաստանեայց, հ. 1, Վենետիկ, Ի տպարանի սրբոյն Ղազարի, 553 էջ:

Լալայեան Ե. 1906, Նախիջեւանի ոստիկանութիւն կամ Նախճաւան, Ազգագրական հանդէս, Թիֆլիս, N XIII, էջ 199–226:

Իգումնով Վ., Կարապետյան Հ., Հմայակյան Ս. 1997, Օձասարի սեպագիր արձանագրությունը, Պատմաբանասիրական հանդես, Երևան, N 1, էջ 193–202:

Խանզադյան Է. Վ. 2003, Հայկական լեռնաշխարհի վիշապները, Մուրադյան Պ. (խմբ.), Հայագիտության արդի վիճակը և նրա զարգացման հեռանկարները. Հայագիտական միջազգային համաժողով, 2003 թ. սեպտեմբերի 15–20, Զեկուցումների դրույթներ, Երևան, ՀՀ ԳԱԱ հրատ., էջ 35–36:

Կարագեոզեան Յ. 1998, Սեպագիր տեղանուններ (Այրարատում և հարակից տարածքներում), Երեւան, «Մագաղաթ» հրատ., 393 էջ:

Կարապետյան Հ. 2008, Նախիջևանի տարածքը ըստ ուրարտական աղբյուրների, Հուշարձան, N Ձ, Երևան, «Հուշարձան» հրատ., էջ 54–67:

Հակոբյան Թ. 1960, Ուրվագծեր Հայաստանի պատմական աշխարհագրության, Երևան, Երևանի համալսարանի հրատ., 480 էջ:

Հասրաթյան Մ. 1985, Պատմա-հնագիտական ուսումնասիրություններ, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 278:

Հնություններ 1893, Արարատ, N Ձ, Վաղարշապատ, էջ 552–559:

Ղազար Փարպեցի 1895, Հայոց Պատմութիւնը և Վահան Մամիկոնեանին գրած թուղթը, թարգմ. Մ. քհն. Տէր-Պետրոսեանց, Ալեքսանդրապոլ, Ա. Մալխասյանցի տպ., 524 էջ:

Ղանալանյան Ա. 1969, Ավանդապատում, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 530 էջ:

Ղեւոնդ 1887, Պատմութիւն Հայոց, Ս. Պետերբուրգ, ի տպ. Ն. Սկորոխոդովի, 203 էջ:

Մաթևոսյան Ա., Մարաբյան Ս. 2000, Գրիգոր Ծերենց Խլաթեցի, Երևան, «Սարգիս Խաչենց» հրատ., 256 էջ:

Մանանդյան Հ. 1936, Հին Հայաստանի գլխավոր ճանապարհները, Երևան, Մելքոնյան ֆոնդ, 276 էջ:

Մովսես Խորենացի 1968, Պատմություն Հայոց, թարգմ., ներած. և ծանոթ. Ստ. Մալխասյանցի, Երևան, «Հայաստան» հրատ., 420 էջ:

Պարրոտ Ֆ. 1990, Դորպատից՝ Արարատ, Երևան, «Նաիրի» հրատ., 110 էջ:

Սեբեոս 1939, Սեբէոսի եպիսկոպոսի պատմութիւն, աշխ. Ստ. Մալխասեանցի, Երևան, ԱրմՖԱՆ, 217 էջ:

Սիմոնյան Հ. 2008, Շենգավթի դամբարանադաշտը, Հին Հայաստանի մշակույթը, պր. XIV, Երևան, ՀՀ ԳԱԱ հրատ., էջ 81–94:

Սիմոնյան Հ. 2013, Շենգավիթ. շարքային բնակավայր, թե՞ վաղ քաղաք, Հուշարձան, N Ը, Երևան, «Հուշարձան» հրատ., էջ 5–53:

Սիմոնյան Հ., Սանամյան Հ., Գնունի Ա. 2006, Ցուցադրվող նյութերի ցանկ, Կերենի դամբարանադաշտ, Արցախի և ազատագրված շրջանների 1990–2005 թթ. հնագիտական հետազոտությունների հիմնական արդյունքները, Երևան, «Հուշարձան» հրատ., էջ 22–43:

Ստեփանոս Օրբելյան 1986, Սյունիքի պատմություն, թարգմ. և ծանոթ. Ա. Աբրահամյանի, Երևան, «Սովետական գրող», 613 էջ:

Տեր-Ավետիսյան Ս. 2010, Հայագիտական հետազոտություններ, Երևան, «Գիտություն», 495 էջ:

Տէր-Ավետիքեան Մ. 1905, Դարալագեազ կամ Վայոց Ձոր, Մուրճ, N 2–3, էջ 66–73:

Տէր-Ավետիքեան Մ. 1904, Դարալագեազ կամ Վայոց Ձոր, Մուրճ, N 12, էջ 96–106:

Փավստոս Բուզանդ 1987, Հայոց պատմություն, թարգմ. և ծանոթ. Ստ. Մալխասյանցի, Երևան, Երևանի համալսարանի հրատ., 455 էջ:

Абибулаев О. 1982, Энеолит и бронза на территории Нахичеванской АССР, Баку, «Элм», 315 с.

Авшарова И. 2010, Вишапотипные памятники Азерабайджана, Гамбашидзе Г. (ред.), Археология, этнология, фольклористика Кавказа, Тбилиси, «Меридиани», с. 328–329.

Алекперов А. 1937, Крашенная керамика Нахичеванского края и Ванское царство, Советская археология, Москва, N IV, с. 249–263.

Алекперов А. 1960, Исследования по археологии и этнографии Азербайджана, Баку, изд-во АН АзССР, 249 с.

Алекперов А. 1994, Терракота древнего Азербайджана, Баку, «Элм», 118 с.

Алиев В.Г. 1976, Наскальные изображения Гемигаи, Краткие сообщения Института археологии, Москва, т. 146, с. 50–52.

Алиев В. 1972, Археологические исследования на территории Нахичеванской АССР, Нариманов И. (ред.), Материалы к сессии, посвященной итогам археологических и этнографических исследований в СССР, Тезисы докладов археологов Аз. ССР, Баку, «Элм», с. 14–15.

Алиев В. 1984, Древние соляные копи в Нахичевани, Известия АН Аз СССР, N 4, с. 79–87 (на азерб. языке).

Алиев В., Аллахвердиев С. 1992, Фархад-еви, Материалы научной конференции, посвященной последним итогам археологической и этнографической наук в Азербайджане, Баку, «Элм», с. 79–82 (на азерб. языке).

Алиев В., Ашуров А. 1984, Раскопки в Кюль-тепе-2 в 1979 г., Аббасов А. (ред.), Археологические и этнографические изыскания в Азербайджане 1979, «Элм», с. 15–18.

Алиев В., Ибрагимов Б. 1979, Археологические исследования 1976 г. в Нахичеванской АССР, Аббасов А. (ред.), Археологические и этнографические изыскания в Азербайджане 1976, Баку, «Элм», с. 5–8.

Алиев В., Сеидов А., Ашуров А. 1986, Археологические исследования культурного слоя эпохи ранней бронзы Кюль-тепе II, Аббасов А. (ред.), Археологические и этнографические изыскания в Азербайджане 1985, Баку, «Элм», с. 10–12.

Алиев В., Сеидов М. 1973, Памятники Карабаглара эпохи бронзы и раннего железа, Нариманов И. (ред.), Археологические и этнографические изыскания в Азербайджане 1972, Баку, «Элм», с. 8–9.

Аракелян Б. Н. 1982, Арташат I, Ереван, изд-во АН АрмССР, 68 с.

Арутюнян Н. 1985, Топонимика Урарту, Ереван, изд-во АН АрмССР, 308 с.

Ахундов Д. 1986, Архитектура древнего и раннесредневекового Азербайджана, Баку, Азербайджанское гос. изд., 317 с.

Ашуров С. 2004, Раннебронзовые курганы в Нахичеване, Апакидзе А. (ред.), Археология, этнология и фольклористика Кавказа, Тбилиси, «Некери», с. 26.

Ашуров С., Бадалов А. 2004, Колумбарий, выявленный в Нахичеване, Апакидзе А. (ред.), Археология, этнология и фольклористика Кавказа, Тбилиси, «Некери», с. 27.

Бахшалиев В. 1986, О находках металлических изделий в археологических памятниках Нахичевани, Аббасов А. (ред.), Археологические и этнографические изыскания в Азербайджане 1985, Баку, «Элм», с. 36–37.

Бахшалиев В., Ашуров С., Марро К. 2009, Археологические работы на поселении Овчулар тепеси (2006–2008), Первые результаты и новые перспективы, Азербайджан – страна, связывающая Восток и Запад. Обмен знаниями и технологиями в период первой глобализации VII–IV тыс. до н. э., Баку, ДАИ-Берлин, с. 60–65.

Бахшалиев В., Рагимова М. 1986, Об одном типе медных сплавов из Нахичевани, Аббасов А. (ред.), Археологические и этнографические изыскания в Азербайджане 1985, Баку, «Элм», с. 28–29.

Бахшалиев В., Риствет Л., Ашуров С. 2009, К хронологии куро-аракcских памятников (по раскопкам Кюль-тепе II и Махта I в 2006 г.), Азербайджан – страна, связывающая Восток и Запад. Обмен знаниями и технологиями в период первой глобализации VII–IV тыс. до н.э., Баку, ДАИ-Берлин, с. 85–88.

Брун Ф. 1867, Путешествия Ивана Шильтбергера в Европе, Азии и Африке, Записки Императорского Новороссийского университета, т. 1, вып. 1–2, Одесса, типография Л. Нитче, 157 с.

Вейденбаум Е.Г. 1888, Путеводитель по Кавказу, С. Петербург, тип. канцелярии Главноначальствующего гражданской частью на Кавказе, 435 с.

Гакстгаузен А. 1857, Закавказский край, ч. 1, С. Петербург, типография Главного штаба Е.И.В. по военно-учебным заведениям, 215 с.

Джафарзаде И. М. 1956, Древнейший период истории Азербайджана, в кн.: Очерки по древней истории Азербайджана, Баку, изд-во АН Аз.ССР, с. 7–56.

Евецкий О. 1835, Статистическое описание Закавказского края, С. Петербург, типография Штаба отдельного корпуса внутренней стражи, 308 с.

Желиховская В. 1898, Кавказ и Закавказье, Москва, издание И. Банникова, 120 с.

Ивановский А. 1911, По Закавказью. Материалы по археологии Кавказа, т. VI, Москва, товарищество типографии А. Мамонтова, 195 с.

Исмаилов Г. 1981, Древние поселения междуречья Гуручай и Кенделенчай, Баку, «Элм», 65 с. (на азерб. яз.).

Коллекции Кавказского музея 1902, т. V. Археология, сост. гр. П. Уварова, Тифлис, типография канцелярии Главноначальствующего гражданской частью на Кавказе, 231 с.

Колюбакин Б. 1906, Русско-турецкая война на Кавказе и Малой Азии, ч. 1–2, С. Петербург, типо-литография А. Розена, 208 с.

Манандян Я. 1954, О торговле и городах Армении, Ереван, изд. Ереванского университета, 316 с.

Массон В. 1977, Типология древних городов и исторический процесс, в сб.: Массон В. (ред.), Древние города. Материалы к Всесоюзной конференции Средняя Азия и Казахстан в раннем средневековье, Ленинград, «Наука», с. 5–7.

Мелларт Дж. 1982, Древнейшие цивилизации Ближнего Востока, Москва, «Наука», 150 с.

Мещанинов И. И. 1926, Краткие сведения о работе археологических экспедиций в Нагорный Карабах и Нахиджеванский край, Сообщения государственной академии истории материальной культуры, т. 1, Ленинград, тип. АИМК, с. 217–240.

Миллер А. 1926, Археологическое исследование в Нахичеванской республике летом 1926 г., Сообщения государственной академии истории материальной культуры, т. 1, Ленинград, тип. АИМК, с. 314–316.

Муравьев М. 1841, Грузия и Армения, С. Петербург, типография III отделения собственной Е.И.В. канцелярии, 316 с.

Надеждин П. 1869, Природа и люди на Кавказе и за Кавказом, С. Петербург, типография В. Димакова, 417 с.

Надеждин П. 1901, Кавказский край: природа и люди, Тула, типография Влад. Ник. Соколова, 521 с.

Никитин К.А. 1882, Город Нахичевань и Нахичеванский уезд. Сборник материалов по описанию местностей и племен Кавказа, т. II, Тифлис, типография канцелярии Главноначальствующего гражданской частью на Кавказе, с 109–142.

Отчеты Археологической Комиссии за 1903 г., 1906, С. Петербург, типография главного управления уделов, с. 84–86.

Пиотровский Б. Б. 1959, Ванское царство, Москва, изд. Восточной литературы, 341 с.

Рагимова М. 2009, Появление металла и его влияние на социально-экономическую структуру общества, Азербайджан – страна, связывающая Восток и Запад. Обмен знаниями и технологиями в период первой глобализации VII–IV тыс. до н.э., Баку, ДАИ-Берлин, с. 92–96.

Спицин А. 1909, Некоторые Закавказские могильники, Известия археологической комиссии, вып. 29, С. Петербург, типография главного управления уделов, с. 3–17.

Сеидов М. 1986, Особенности поселений эпохи поздней бронзы и раннего железа на территории Нахичевани, Аббасов А. (ред.), Археологические и этнографические изыскания в Азербайджане 1985, Баку, «Элм», с. 32–33.

Шарден Л. 1902, Путешествие кавалера Шардена по Закавказью. Кавказский Вестник, т. 9, Тифлис, скоропечатня А. Мартиросянца, 301 с.

Шопен И. 1852, Исторический памятник Армянской области в эпоху ее присоединения к Российской империи, С. Петербург, типография Императорской Академии Наук, 1232 с.

Эвлия Челеби 1983, Книга путешествий, Москва, «Наука», 250 с.

Bahşaliyev V. 1997, Archaeology of Nakhichevan, Istanbul, Arkeoloji ve sanat yayınları, 128 s.

Bakhshaliyev V., Marro C. 2009, The Archaeology of Nakhichevan: Ten Years of New Discoveries, Istanbul, Arkeoloji ve sanat yayınları, 118 p.

Belli O. 2007, Kars – Çıldır Gölü yakınında bulunan anıtsal taş balık heykeli, Kars 2. Kent Kurultayı – Kafkasya'da Ortak Geleceğimiz, Kars Belediyesi Yayınları 21, İstanbul, s. 111–116.

Belli O., Bahşaliyev V. 2001, Nahçıvan bölgesi'nde orta ve son tunç çağı boya bezemeli, Istanbul, Arkeoloji ve sanat yayınları, 120 s.

Belli O., Sevin V. 1999, Archaeological Survey in Nakhichevan 1998, Istanbul, Arkeoloji ve sanat yayınları, 78 s.

de Montpereus D. 1840, Voyage autour du Caucase, t. IV, Paris, A. Pihan de la Forest, Imprimeur de la cour de cassation, 562 p.

Saint-Martin M.J. 1818, Memories historiques et géographqes sur l'Arménie, t. 1, Paris, De l'imprimerie Royale, 448 p.

Tavernier J.B. 1678, Six Voyages of John Baptista Tavernier, London, Printed for R.L. and M.P, 658 p.

Hmayakyan S., Igumnov V., Karagyozyan H. 1996, An Urartian Cunieform Inscription from Ojasar-Ilandagh, Nakhichevan, Studi Micenei ed Egeo-Anatolici, N XXXVIII, p. 140–151.

Porter R. 1821, Travels in Georgia, Armenia and Ancient Babylonia, London, Printed for Longman, Hurst, Rees, Orme, and Brown, 721 p.

Rubruk W. 1900, The Journey of William Rubruk to the Eastern Part of the World (1253–1255), London, Printed for the Hakluyt Society, 304 p.

Voyages 1730, Voyages d'un Missionaire de la Compagnie de Jésus en Turquie, en Perse, en Arménie, en Arabie, en Barbarie, Paris, Chez J. Vincent, 647 p.

Xnkikyan O.S. 2002, Syunik during the Bronze and Iron Ages, Barrington, Mayreni Publishing, 258 p.

Zardaryan D. 2014, About Some Types of Decoration of the Chalcolithic Pottery, Gasparyan B., Arimura M. (ed.), Stone Age of Armenia, Kanazawa, Kanazawa University Press, p. 207–218.

КУЛЬТУРНО-ИСТОРИЧЕСКОЕ ЗНАЧЕНИЕ НАХИЧЕВАНА В ЭПОХУ БРОНЗЫ И ЖЕЛЕЗА

АВЕТИСЯН Г., ГНУНИ А., БОБОХЯН А.

Резюме

Ключевые слова: Нахичеван, Армянское нагорье, ранний бронзовый век, средний бронзовый век, поздний бронзовый век, ранний железный век, Урарту.

Нахичеван – это горный регион с площадью ок. 6000 км^2, 75% территории которого находится на высоте 1000 м над уровнем моря и характеризуется сухим, аридным климатом.

Согласно археологическим данным, Нахичеван на протяжении тысячелетий развивался в едином контексте культур Армянского нагорья. В начале бронзового века Нахичеван являлся одним из самых важных очагов шенгавитской культуры. В среднем бронзовом веке регион представлял собой ту центральную область, где присутствовали почти все черты культур, характеризующихся производством расписной керамики. В позднем бронзовом и раннем железном веках здесь преобладал локальный вариант лчашен-мецаморской культуры, представленной циклопическими крепостями и черно-лощенной керамикой. В период Ванского царства Нахичеван служил мостом, соединяющим центральные районы этого государства с бассейном озера Севан. В Нахичеване нашли отражение такие типичные для Армянского нагорья уникальные культурные явления, как наскальные изображения и вишапы.

По основным чертам развития культур Нахичеван близок к Васпуракану и Сюнику. В плане внешних связей здесь доминирует иранское направление.

Таким образом, особенности культурного развития Нахичеванского региона делают его связующим звеном между регионами озер Ван, Урмия и Севан, с другой стороны, это своего рода «контактная зона» в центре Армянского нагорья.

THE CULTURAL AND HISTORICAL SIGNIFICANCE OF NAKHICHEVAN DURING THE BRONZE AND IRON AGES

AVETISYAN H., GNUNI A., BOBOKHYAN A.

Summary


Key words: Nakhichevan, Armenian Highlands, Early Bronze Age, Middle Bronze Age, Late Bronze Age, Early Iron Age, Urartu.

Nakhichevan is a mountainous region covering a territory of ca. 6000 km^2, 75% of which is located in an area of 1000 m above the sea level, being characterized by a very dry and arid climate. The present article addresses the significance of Nakhichevan during the Bronze and Iron Ages (mid 4th – mid 1st millennia BC), revealing the historical and cultural features of the area.


Archaeological data demonstrate that Nakhichevan has always been closely involved in developments typical of the Armenian Highlands. In the Early Bronze Age, Nakhichevan was one of the most important hearths of Shengavit culture. In the Middle Bronze Age, it is the central area where almost all the features of traditions characterized by painted pottery were united. In the Late Bronze and Early Iron Ages, the local version of the Lchashen-Metsamor culture characterized by cyclopean fortresses and black-polished pottery dominated here. During the period of the Van Kingdom Nakhichevan seemed to be a bridge, connecting the central regions of that state with the basin of Lake Sevan. Nakhichevan features unique cultural phenomena of the Armenian Highlands such as rock-carvings and dragon stones.

The main trends of cultural developments in Nakhichevan are particularly close to Vaspurakan and Syunik. From the point of view of international relations, the Iranian direction dominates here.


Thus, in Nakhichevan such cultural features are present that define it as a connecting link between the regions around the lakes Van, Umia and Sevan: on the other hand, it appears as a kind of “contact zone” in the heartland of the Armenian Highlands.



նկ. 1. Նախիջևանի լանդշաֆտը և բրոնզ-երկաթեդարյան հիմնական հուշարձանների բաշխվածությունը՝ ըստ թվային մոդելի (SRTM-DEM, կազմող՝ Հ. Դանիելյան)



նկ. 2. Դուզդաղը, օդային լուսանկար (ArcGIS Imagery, կազմող՝ Հ. Դանիելյան)




նկ. 3. Օձասարը, օդային լուսանկար (ArcGIS Imagery, կազմող՝ Հ. Դանիելյան)



նկ. 4. Արբա
հուշարձանը,
օդային լուսանկար
(ArcGIS Imagery,
կազմող՝
Հ. Դանիելյան)



նկ. 5. Օվչուլար
թեփեսի հուշարձանը,
օդային լուսանկար
(ArcGIS Imagery,
կազմող՝
Հ. Դանիելյան)



նկ. 6. Օվչուլար թեփեսի և Արբա հուշարձանների տիեզերքից արված լուսանկարը (ArcGIS Imagery) և թվային մոդելը (SRTM-DEM, կազմող՝ Հ. Դանիելյան)

ԱՐՎԵՍՏԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ
ART

MARIAM VARDANYAN*

Lecturer

Chair of Armenian Art History and Theory

Yerevan State University,

mariamvardanyan@ysu.am; vardmeri@yahoo.com

THE RUSSIAN RITUAL OBJECTS IN THE COLLECTION OF THE DUDIAN MUSEUM AT THE ARMENIAN DIOCESE OF ROMANIA IN BUCHAREST[1]

Key words: Armenian communities, Armenians in Romania, Dudian Museum in Bucharest, Armenian Diocese of Romania, altar cross, chalice, Russian ritual objects.

Introduction

Armenians settled in Romania many centuries ago. Armenian merchants, due to their travels, were familiar with the territory of the Principality of Moldavia since the trading routes to Western Europe and to the Baltic Sea went through the main cities of Moldavia and the Kingdom of Poland[2]. Being conveniently located at

---

* *Հոդվածը ներկայացվել է 19.02.20, գրախոսվել է 27.02.20, ընդունվել է տպագրության 27.05.20:*

[1] This study became possible by the support of the Diocese of the Armenian Church in Romania, Ministry of Culture of RA and State Committee of Science MES RA, within the frame of the research project No. SCS 13-6E440.

The art works have never been studied earlier, except in 2012 when on the initiative of Bishop Datev Hakobian, the leader of the Armenian Diocese of Romania and Prof. Levon Chookaszian, Head of Yerevan State University Chair of Armenian Art History and Theory, the study of the collections started.

[2] **Osipian** 2013, 114.

the crossroads of trading routes, Moldavia, Bukovina, later Transylvania subsequently became a place of permanent residence for Armenian merchants.

By the end of the 14th century the Armenian population grew to the extent that in 1401 Moldavian ruler Alexander the Good allowed with a special decree to create a separate diocesan structure on the Romanian territory, the centre of which became the city of Suceava[3].

Living in Romania, the Armenians have taken an active part in the political, economic and cultural life of the country, have held positions of high responsibility, contributing to the development of crafts and trade.

The collection of Dudian Museum at the Armenian Diocese of Romania in Bucharest, though not big, comprises exhibits that are important arguments, testifying to the effective cultural activities of the Armenians in that country.

The idea of founding a museum came during a major exhibition of the Armenian art held in Bucharest in 1930[4]. The House of the Armenian Culture, where the library of ancient books and the museum are situated now, was built next to the Armenian Church of the Holy Archangels in Bucharest from 1942–1944, thanks to the donations made by Josef and Victoria Dudians. In 1948, socialists being the ruling party, after unsuccessful attempts to nationalize the House of Armenian Culture, gave it to the Municipal Library. In 1963 the House of Armenian Culture was closed for good, and the collection was handed over to private individuals and to the diocese, nonetheless, it was reopened in 1987[5].

Among the artefacts kept at the museum, despite their small number, a special place was given to the ritual items of precious metals, made in Russia, which are the target of our investigation in the present article.

The Russian Ritual Objects in the Collection of Armenian Dudian Museum

Our observations of the Armenian Dudian Museum of Bucharest show that it is not always known which church this or that item has been brought from, however, it is quite clear that all the objects have been donated by devotees…

[3] **Գօլանճեան** 2000, 24–25:

[4] «**Թղթակից**» 1938, 113; Note despre arta Armeana, Album, Catalogul expozitii de arta armeana, Bucuresti, 1930.

[5] **Bedros** 2012, 129.

Nowadays from the objects made in Russian workshops, in use is a chalice, placed in the altar of the Holy Archangels Church in Bucharest, as well as a Gospel book, the binding of which is also of Russian origin.

The chalice No. 357 (see ill. 1) is made in Moscow, as attested by the marks, put near cup lip edge of the chalice and on the pallet. The mark of the city of Moscow[6] and the mark of the Assay Chamber's master "1861 B.C" – Victor Savinkov[7] and the hallmark "84" are clearly distinguishable. Meanwhile the mark of the master "ЦА" was not found in the list of jewel makers.

The silver chalice is gilded, the ornament and images on the surface are mostly made in engraving and carving techniques. The overall composition of the chalice, half-length figures of Deisis, Calvary Cross with crucified Christ is typical of chalices used in the Russian church[8]. The figures are denominated and framed with a four-half-circle form of a cross.

On the edge of the cup of the chalice the liturgical inscription is engraved: «ТЕЛО ХРИСТОВО // ПРИМИТЕ ИСТОЧ // НИКА БЕЗСМЕР // ТНАГО ВКУСИТЕ». The inscription starts right after the image of Christ Pantocrator, then, encompasses the whole crown of the chalice and three times being interrupted by the winding ornament, ends at the same place.

The figures of four Evangelists without symbols are engraved on the pallet, in the circular frames with accompanying inscriptions.

All the spaces free from any images are designed with typical, stylized ancient Russian ornament[9]. At the end of the 19th century important historical and cultural changes took place, which decided on the new style of Russian art: the Western perception of the world was rejected and the monuments, prior to Petrine era began to set as an example for the new style[10]. This is due to the large use of the traditional Russian ornament and traditional forms of ritual objects.

Enrichment of the traditional forms of ritual objects was usually done in Moscow from the second half of the 19th century to the beginning of the 20th

---

[6] **Постникова-Лосева** 1992, 25.
[7] **Постникова-Лосева** 1992, 28.
[8] **Игошев** 2001, 227–234.
[9] **Буткевич** 2008, 189–200.
[10] **Ивановская** 2006, 9.

century. Thus, as the largest spiritual center of the country, Moscow promoted the ideas of national revival, based on historical "Russian" and "Neo-Russian" styles.[11]:

The artistic processes and features mentioned above are expressed in the examples to be discussed below.

The museum preserves four altar crosses which are made of silver.

Cross No. 155 (see ill. 2) has a four-pointed form with three-winged endings[12] typical of the monuments of the 19th – 20th centuries. Being four-pointed, with figure-pattern endings like a quadrafolium, it is framed with the silver enchased, gilded binding. On the front side, in the crossing, on the flat background, Crucifixion is presented, executed in the chasing technique. The figure of Christ is bent, head inclined to the right shoulder, high raised hands are straightened, legs folded in the knees. A plaque with an inscription: ИНЦI (INRI) is on the upper ending of the Calvary Cross. The half-length images of the Holy Mother of God (on the left) and John the Apostle (on the right) are on the side endings of the cross: half turned to Christ, both their hands are folded back on their chest. The half-length image of Sabaoth is on the upper ending: he makes the sign of blessing with the two fingers of his right hand, in the left hand he holds a staff, the Holy Spirit as a dove is represented between his hands. The head of Adam is depicted on the lower crosspiece. The hilt of the artefact is decorated with a richly stylized vegetal ornament.

There are various symbolic images on the back side: crown of thorns is in the crossing, a shining chalice as a symbol of Christian faith and Redemption[13] is represented on the upper ending, the Calvary Cross is on the lower crosspiece, to the left of the crossing – a stylized horn, to the right – a jug and a candle.

The circular frames of each of the images are decorated with a stylized ornament. The space free from any images is flat and polished.

There are marks on the cross which are made on the front and back sides of the hilt: the mark of the city of Moscow "1858 B.C" – the master of Assay Chamber, Victor Savinkov and of the master "AM" – Alexander Alekseev Mukhin who was a merchant and the owner of the factory of silver goods in the second half of the 19th century[14], as well as the hallmark - "84".

---

[11] **Ивановская** 2006, 3.

[12] **Быкова** 2015, 3.

[13] **Холл** 1996, 614.

[14] **Постникова-Лосева** 1992, 30.

Cross No. 118 (see ill. 3) almost completely replicates the mentioned one with some differences. Similar personages and symbolic images are presented on both sides. Unlike cross No. 155, all personages are portrayed with accompanying inscriptions. In the crossing, on the background of engraved lines, the scene of Crucifixion is enchased. The figure of Christ is bent, head is inclined to the right shoulder, high raised hands are straightened, legs folded in knees. Christ's halo is decorated with beams. The inscription ИНЦІ (INRI) is also there.

Sabaoth is represented on the upper ending. The Holy Mother of God and John the Apostle are depicted in full-face in a more archaic style. There is a similar image of the head of Adam on the lower crosspiece, however, in this case rimmed with a snake. The motif of rose is incorporated into a stylized ornament. The crossing on its back side is decorated with a stylized geometrical ornament, and the images on the endings replicate the images of cross No. 155.

The marks are placed on the front and back sides of the hilt: the mark of the city of Moscow, the Assay's master "1859 И.А" – Adreev I. (1852–1862)[15] and of master "ПА"[16] and the hallmark – "84".

The above discussed crosses are quite interesting by their symbolic images on the back side. In the stavrographic articles and general descriptions of Altar crosses, it is noted that, besides the ornaments and images of saints, information about enclosed relics or historical inscriptions on the back side of the cross[17] can also be placed. The images in our examples refer to the Passions of Christ, which will be discussed below. Therefore, we can argue with certainty that the crosses from the Dudian Museum No. 155 and No.118 with symbolic images present a particular group of the 19[th] – century Russian Altar crosses, made by Moscow-based masters.

The cross in the silver enchased binding No. 146 (see ill. 4) also has a four-pointed form with three-winged endings, typical of the monuments of the 18[th] – 19[th] centuries. The scene of Crucifixion is engraved on the front side, in the crossing, and the background is filled with vertical strokes. The figure of Christ is straight, head is inclined to the right shoulder, hands are straightened. A plaque with the inscription ИНЦІ (INRI) is on the upper ending of the Calvary cross. The half-length images, presenting the Holy Mother of God (on the left) and John the

[15] **Постникова-Лосева** 1992, 28.

[16] The name of the master could not be found on the lists.

[17] **Быкова** 2015, 4.

Niederlandisches Künstler–lexikon, auf gründ archivalisher forshüngen bearbeitet publisher Dr. Alfred von Wurzbach, BM Israel, Amsterdam, 1968, 583 S.

John F. 1990, Francisco Pacheco and Jerome Nadal: New Light on the Flemish Sources of the Spanish Picture-within-the-Picture, The Art Bulletin, December, Vol. 72, № 4, pp. 631–638.

Mauquoy-Hendrickx M. 1976, Les Wierix illustrateurs de la Bible dite de Natalis, dans Quaerendo, Amsterdam, pp. 28–64.

Jennes J. 1937, L'art chrétien en Chine au début du XVIIe siècle (une gravure d'Antoine Wierix identifiéecomme modèle d'une peinture de Tong k'i-tch'ang), T'oung Pao, Second Series, Vol. 33, Livr. 2, pp. 129–133.

http://www.vondel.humanities.uva.nl/ecartico/persons/6808




Im. 1 l'Annonciation de la Vierge Marie, Christoffel van Sichem



Im. 2 l'Annonciation de la Vierg Marie L'Évangile illustrée (Anvers 1593) de Jérôme Nadal



Im. 3 l'Annonciation de la Vierge Marie, Hieronimus Vireriks



Im. 4 l'Annonciation de la Vierge Mrie,Tong Kitchang



Im 5. l'Annonciation de la Vierge Marie, l'Évangile MM. manuscrit 6772, Nor

СТИЛИСТИЧЕСКИЕ И ИКОНОГРАФИЧЕСКИЕ ОСОБЕННОСТИ ГРАВЮР БЛАГОВЕЩЕНИЯ БОГОРОДИЦЫ В ИЗДАНИЯХ ВАНАНДЕЦИ

СИМОНЯН А.

Резюме

Ключевые слова: печатная книга, резчик, гравюра, иконография, Благовещение, Товма Ванандеци, Кристофел ван Зихем.

Из основанных в Европе в XVII–XVIII вв. армянских типографий особого внимания заслуживает типография, действовавшая в столице Голландии Амстердаме. Книги на армянском языке стали издаваться в Амстердаме в 1660 гг. и, с небольшим перерывом, это продолжалось

вплоть до 1716 года. В дальнейшем издание армянских книг было прекращено. Самым плодотворным в истории типографии «Святой Эчмиадзин и Святой Саргис» был период издательской деятельности епископа монастыря Сурб Хач в провинции Гохтн Товмы Ванандеци Нуриджаняна и его племянников – Матеоса, Гукаса и Микаэла (все из рода Ванандеци). За двадцать два года деятельности представители названного семейства издали двадцать книг и одну карту.

Значительную часть иллюстраций книг, изданных в типографии Ванандеци, представляют тематические гравюры, автором которых был Кристофел ван Зихем – немец по происхождению. Из гравюр, вошедших в изданный в 1702 году «Шаракноц», своими иконографическими особенностями и мастерством отличается работа ван Зихема «Благовещение Богородицы». Гравюра стала впоследствии образцом иллюстраций не только для армянских рукописей позднего средневековья, но и европейских изданий XVII–XVIII вв.

По сравнению с изданиями типографии Восканян книги, опубликованные в типографии Ванандеци, являют собой высокие образцы книгопечатания.

«ՏԻՐԱՄՈՐ ԱՎԵՏՈՒՄ» ՓՈՐԱԳՐԱՊԱՏԿԵՐԻ ՈՃԱԿԱՆ ԵՎ ՊԱՏԿԵՐԱԳՐԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎԱՆԱՆԴԵՑԻՆԵՐԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

ՍԻՄՈՆՅԱՆ Ա.

Ամփոփում

Բանալի բառեր՝ տպագիր գիրք, փորագրիչ, փորագրանկար, պատկերագրություն, Ավետում, Թովմաս Վանանդեցի, Քրիստոֆել վան Զիխեմ:

Ամստերդամում հայերեն գրքերի տպագրությունը սկսվելով 1660 թ., առժամանակյա դադարից հետո շարունակվել է մինչև 1716 թ., ապա ավարտվել ընդմիշտ: «Սուրբ Էջմիածին և Սուրբ Սարգիս» տպարանի պատմության մեջ իրենց հրատարակչական գործունեությամբ առանձնանում են

Գողթն գավառի Սբ. Խաչ վանքի եպիսկոպոս Թովմաս Վանանդեցի Նուրիջանյանը և նրա զարմիկներ Մատթեոսը, Ղուկասը, Միքայելը: 1695–1716 թթ., Վանանդեցիները հրատարակել են 20 գիրք և մեկ քարտեզ: Բոլոր գրքերը նշանակալի են իրենց բովանդակությամբ և շքեղ պատկերազարդմամբ: Վերջինիս բաղկացուցիչ մասն են կազմում փորագիր թեմատիկ պատկերները: Փորագրանկարների հեղինակն է ծագումով գերմանացի վարպետ Քրիստոֆել վան Զիխեմը: 1702 թ. Վանանդեցիների հրատարակած «Շարակնոց»-ի փորագրանկարներից իր պատկերագրական առանձնահատկություններով և կատարողական նուրբ վարպետությամբ աչքի է ընկնում «Տիրամոր Ավետումը» փորագրանկարը, որի հեղինակն է Քրիստոֆել վան Զիխեմը: Փորագրանկարը նախօրինակ է հանդիսացել ոչ միայն ուշ շրջանի հայկական ձեռագրերի, այլև եվրոպական ԺԷ–ԺԸ դարերի տպագիր գրքերի նկարազարդումների համար: Վանանդեցիների հրատարակած գրքերն իրենց գեղարվեստական ձևավորմամբ համարվել են ժամանակի բարձրորակ տպագրություններ: Տպագրական արվեստի տեսակետից դրանք մի քայլ առաջ էին նույնիսկ Ոսկանյան հրատարակություններից:

ԱՐՄԻՆԵ ՊԵՏՐՈՍՅԱՆ*
ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի հայցորդ
armine.pet21@mail.ru

ԲՆԱՆԿԱՐԸ ՀՄԱՅԱԿ ՀԱԿՈԲՅԱՆԻ ԱՐՎԵՍՏՈՒՄ

Բանալի բառեր՝ *Հմայակ Հակոբյան, բնանկարի ժանր, բազմաժանր, թիֆլիսյան շրջան, մյունխենյան շրջան, կտավներ, արվեստ:*

Ներածություն

Հաստոցային գեղանկարչության զարգացման շնորհիվ հայ արվեստում բնանկարը ձևավորվել է իբրև ավարտուն, ամբողջական և ինքնուրույն ժանր: Հանրահայտ է, որ բնանկարի պատկերման օբյեկտը բնությունն է՝ իր ողջ բազմազանությամբ: Բնանկարը կարող է լինել ծովային, լեռնային, գյուղական, քաղաքային, ճարտարապետական, արդյունաբերական, պատմական, տիեզերական և այլն: Հոգեբանական իմաստով բնանկարն ունենում է քնարերգական, հովվերգական, ողբերգական և այլ նկարագիր:

Բնանկարչությունը մարդուն դիտարկում է որպես բնության մի մասնիկ, որոշ դեպքերում էլ՝ իբրև մարդու և բնության անքակտելի միասնություն: Բնանկարի տարրեր ի հայտ են եկել դեռ հայ մանրանկարչության մեջ, սակայն դրանք ունեցել են լոկ խորհրդանշական նշանակություն: Դրա մասին է վկայում անվանի արվեստագետ Մ. Այվազյանի դիտարկումը. «…1211 թ. Հաղպատի ձեռագրում (Մատենադարան, N 6288) տոնական տրամադրություն և պայծառ բերկրանքի զգացողություն է ստեղծում [հենց] «բնանկարը»՝ Մուտք դեպի Երուսաղեմ (ծաղկող՝ Մարգար)»[1]:

Նշանակալի է, որ հայ և համաշխարհային արվեստում մինչև Վերածնունդի ժամանակաշրջանը գերիշխող էր բնության առավել միստիկ ընկալումը. «Մարդը միաժամանակ և՛ ակնածանք ուներ բնության հանդեպ, և՛ վախենում էր բնության արհավիրքներից: Աստիճանաբար, բնության երևույթների ավելի խորը ճանաչողության և մարդու հնարավորությունների ընդլայնմանը զուգընթաց, փոխվում է մարդկության վերաբերմունքը բնության հանդեպ: Այն այլևս

---

* *Հոդվածը ներկայացվել է 03.02.20, գրախոսվել է 25.02.20, ընդունվել է տպագրության 27.05.20:*

[1] **Айвазян** 1978, 8.

դադարում է ընկալվել որպես անճանաչելի ուժերի և տարերքների աշխարհ. մարդը սկսում է բացահայտել բնության առեղծվածները»[2]:

Բնապատկերի ժանրին դիմել են հայազգի բազմաթիվ նկարիչներ, այդ թվում նաև թիֆլիսյան հայ գեղանկարչության ներկայացուցիչներ, որոնց ստեղծագործական ժառանգությունը նոր էջ բացեց հայ կերպարվեստում:

«Կյանքի որոշակի փուլերում Վրաստանի հետ առնչություն ունեցող նկարիչներին բախտ է վիճակվել դառնալու հայ նոր կերպարվեստի, նրա թբիլիսյան հոսանքի ձևավորման գործընթացի մասնակիցը»: Այդ արվեստագետների «ջանքերով ծնունդ առավ ինքնօրինակ մի երևույթ, որն իրավամբ հարստացրեց թե՛ հայկական, թե՛ վրացական և թե՛ համաշխարհային արվեստը»[3]:

Հմայակ Հակոբյան (1871–1939)… նվիրական մի անուն, թիֆլիսահայ կերպարվեստի ներկայացուցիչներից մեկը, որի բազմաժանր գեղարվեստական ժառանգությունը ճակատագրի բերումով մոռացության է մատնվել:

Կարելի է ասել՝ հայ գեղանկարչության մեջ Հմայակ Հակոբյանի արվեստը մասամբ «սպիտակ էջ» է, քանի որ մինչ օրս այնքան էլ խորությամբ ուսումնասիրված չէ[4]: Նրա գեղանկարչությունը մեծ ճանաչում չի վայելել: Գուցե այդ փաստը պայմանավորված է նրանով, որ ստեղծագործողը ապրել է մեկուսի, իր ներաշխարհով:

Մեծ է և անգնահատելի նկարչի գեղարվեստական ժառանգությունը, որի գերակշռող մասը (2850 գեղանկարչական ու գրաֆիկական գործեր)[5] պահպանվում է Հայաստանի ազգային պատկերասրահում:

---

[2] **Խաչատրյան** 2014, № 3, 65–66:

[3] **Մինասյան** 2015, 9: Թիֆլիսի գեղարվեստի դպրոցի ձևավորման գործընթացում զգալի ավանդ ունեցան մի շարք տաղանդաշատ նկարիչներ՝ Գևորգ Բաշինջաղյանը, Գիգո Շարբաբչյանը, Եղիշե Թադևոսյանը, Հարություն Շամշինյանը, Հմայակ Հակոբյանը, Արշակ Ֆեթվաճյանը, Փանոս Թերլեմեզյանը, Վարդգես Սուրենյանցը, Վահրամ Գայֆեճյանը, Գևորգ Գրիգորյանը, Հովսեփ Կարալյանը և ուրիշներ, ինքնուս վարպետներ Վանո Խոջաբեկյանը, Կարապետ Գրիգորյանցը, Թիֆլիսում համեմատաբար կարճ ժամանակահատված ապրած Հովհաննես Այվազովսկին, XX դ. հայ նկարիչներ Մարտիրոս Սարյանը, Երվանդ Քոչարը, Գեորգի Յակուլովը և այլք:

[4] Հմայակ Հակոբյանի արվեստին անդրադարձել են Ռ. Լոռիս-Միքայելյանը, Ռաֆայել Շիշմանյանը, Եղիշե Մարտիկյանը, Քնարիկ Ավետիսյանը:

[5] **Հմայակ Հակոբյան** 1871–1939, կատալոգ, 2012, 12:

Ստեղծագործական շրջաններ

Հմ. Հակոբյանի ստեղծագործական գործունեությունը կարելի է բաժանել թիֆլիսյան և մյունխենյան շրջանների:

Թիֆլիսյան շրջանին հատուկ են գծանկարները և ճեպանկարները: Նկարչի ստեղծագործական այդ փուլին բնորոշ են մանրածավալ էտյուդները (13X17 սմ): Ըստ Ռ. Լորիս-Միքայելյանի, Հմ. Հակոբյանը գերադասում էր պլեներային աշխատանքներ, սակայն, կարծում ենք, որ արվեստանոցային պայմանները ավելի հոգեհարազատ էին նրան: Արվեստաբան Ռաֆայել Շիշմանյանը գտնում է, որ այդ շրջանի «էտյուդները աչքի էին ընկնում կուռ կառուցվածքով, նյութական ձևերի ու ծավալայնության զգացումով և հարաբերական համեմատությունների ճիշտ ըմբռնողությամբ»[6]:

Մյունխենյան տարիները Հմ. Հակոբյանին տալիս են ոչ միայն գիտելիք, այլև ազատություն և համարձակություն՝ նրա վրձնին: Ըստ Ե. Մարտիկյանի, Մյունխենում ուսանելու տարիներին նրա գունապնակը հարստանում է նոր երանգներով, որոնք քնարական տրամադրություն են ստեղծում նրա բնապատկերներում:

Մյունխենյան շրջանը մեծ ազդեցություն ունեցավ նկարչի գեղագիտական հայացքների ձևավորման վրա՝ նպաստելով նաև տեխնիկական ու գունային միջոցների իմտացմանը:

Այդ շրջանը նշանավորվեց նաև նրանով, որ Հմ. Հակոբյանը հնարավորություն ստացավ ծանոթանալու դասական մեծ վարպետների՝ Ռեմբրանդտի, Ռուբենսի, Վան Դեյկի, Վելասկեսի և այլոց արվեստին, ինչը որոշակիորեն հարստացրեց նրա գեղարվեստական աշխարհը:

Հարկ է նշել, որ XIX դ. գերմանական գեղանկարչության մեջ դասական ավանդույթները իրենց տեղը զիջեցին ռոմանտիկական միտումներին: Ռոմանտիկական ուղղությանը բնորոշ էին միստիկական և կրոնական մոտիվներն ու տրամադրությունները, որոնք բնավ հատուկ չէին Հմ. Հակոբյանի բնանկարչությանը, սակայն ռոմանտիկական հովերն ու մոտեցումները ուրույն տեղ գտան նրա դիմանկարների «պատկերասրահում»:

Հմ. Հակոբյանի բնապատկերները

Բազմաթիվ հայ նկարիչներ պատկերել են ինչպես հայրենի, այնպես էլ «օտար ափերի» բնաշխարհը: Իրենց տեսակի մեջ անկրկնելի բնապատկեր-

[6] **Շիշմանյան** 1958, 181–182:

ներ են ստեղծել Գ. Բաշինջաղյանը, Փ. Թերլեմեզյանը, Ե. Թադևոսյանը, Հմ. Հակոբյանը, Վ. Սուրենյանցը, Հ. Շամշինյանը, Ս. Աղաջանյանը, Ս. Խաչատրյանը, Ա. Ֆեթվաճյանը, Մ. Սարյանը և ուրիշներ, որոնց ստեղծագործությունները իրենց առանձնահատկություններով հայ կերպարվեստի արժեքավոր մասն են կազմում: Հմ. Հակոբյանը նույնպես մեծ ներդրում է ունեցել այդ ժանրում:

Հմ. Հակոբյանի բնանկարներին բնորոշ են կառուցվածքային համամասնությունների պարզությունը, նուրբ վրձնահարվածները: Գեղանկարիչը հավատարիմ է մնացել բնօրինակին, այդ իսկ պատճառով նրա գյուղական բնանկարները առօրյայի պարզ մեկնաբանություններ են:

Հմ. Հակոբյանի «երկխոսությունը» բնության հետ իր արտահայտությունն է գտել գյուղական, քաղաքային և այլ բնապատկերներում: Նկարիչը յուրաքանչյուր ժանրում հանդես է եկել իր յուրահատուկ մոտեցումներով՝ լինի բնանկար, դիմանկար, նատյուրմորտ թե կենցաղային ժանր: Բնութագրական է, որ Հմ. Հակոբյանի բնանկարներում առկա է մարդը, ինչը ստեղծում է յուրօրինակ սյուժետային գիծ, որը լրացվում է նաև կենդանիների պատկերմամբ:

Բնությունը պատկերելիս նկարիչը չէր փնտրում արևաշող տեսարաններ, լույսի և ստվերի հակադրություններ՝ նախապատվություն տալով գիշերային տեսարաններին, քանի որ իր խառնվածքին համահունչ էին օրվա այդ ժամերը: Ըստ Պոլ Սեզանի. «Բնությունը կարդալ նշանակում է բնությունը տեսնել ներդաշնակության օրենքի համաձայն, իրար հաջորդող գունաբծերի մեկնաբանության քողի տակ: ...Նկարել նշանակում է գրանցել գունազգայությունները»[7]: Ասվածի վառ օրինակն է 1892 թ. Հմ. Հակոբյանի վրձնած «Լուսնյակ գիշեր. Ինտերլակեն» (նկ. 7) կտավը, որի գունային կոլորիտը անչափ մեղմ է: Աղջամուղջի պահին պատկերված գյուղական տեսարանում իշխում են մուգ կապույտն ու շագանակագույնը, և այս գունային համադրությունը պարուրված է տխրության անբացատրելի զգացումով: Նկարչի գունապնակը ունի ոչ միայն գեղագիտական նշանակություն, այլև պարունակում է խոհափիլիսոփայական ու հուզական մի շերտ, որի միջոցով նա, ասես, զրուցում է դիտողի հետ: Այս առումով հետաքրքրական են «Անտառ Մանգլիս» (նկ. 1), «Տապ օր» (նկ. 3) գործերը: «Անտառ Մանգլիս» կտավի գունային լուծումը ընդգծում է բնության հավերժության վիթխարի շունչն ու խորությունը: Ինչպես յուրաքանչյուր ժանրում, այնպես էլ բնանկարում

[7] **Սեզան** 1996, 85:

ստեղծագործողը արտացոլում է իր աշխարհընկալումը, ինչի արտահայտումն է նաև օրվա պահի, տեսարանի ընտրությունը: Գունային լուծումներում այս կամ այն գուներանգին նախապատվություն տալը նույնպես կենսազգայական դրսևորում է գեղանկարչի համար: Նրա գունապնակը բացահայտում է մի ուրույն աշխարհ, որը կարելի է անվանել «հակոբյանական» գույնի փիլիսոփայություն:

Խոսելով Հմ. Հակոբյանի բնանկարների մասին՝ Ռ. Լոռիս-Միքայելյանը անդրադառնում է գյուղական բնապատկերներին՝ ընդգծելով, որ «Հովիվների կյանքից վերցված՝ Հակոբյանի բազմաթիվ պեյզաժները հագեցված են իսկական լիրիկական շնչով և պոետական աշխարհզգացողությամբ: Բնապատկերներում հիմնականում պատկերված են ոչխարի հոտ և նրանց հսկող հովիվներ երեկոյան ժամերին: Հակոբյան-անիմալիստի և սքանչելի մատիտանկարչի ձիրքը փայլուն կերպով արտահայտվում է նրա նկարած ոչխարների բազմազան դիրքերում, շարժվող և հանգստացող մասսաների շնորհալի խմբավորման մեջ»[8]: «Ոչխարները արոտավայրում» (նկ. 4) էտյուդում զգացվում է նկարչի համակրանքը հասարակ գյուղացու հանդեպ: Բնանկարը գերում է իր կոլորիտով, անմիջականությամբ: Առանձնահատուկ ուշադրության է արժանի 1915 թ. ստեղծած «Հոտը հանգստանալիս» (նկ. 8) կտավը, որտեղ բնությունը և կենդանական աշխարհը, կարծես, միասնություն են կազմում, իսկ կտրուկ դեղին գծով վրձնած վերջալույսի արևը ավելի արտահայտչական է դարձնում ամբողջ տեսարանը: «Հարազատ Քուռի վրա» (նկ. 6) կտավում Հմ. Հակոբյանը վարպետորեն պատկերել է հեռանկարը, ամպերի շարժը և թափանցիկությունը:

Հմ. Հակոբյանի կտավները՝ նվիրված հայրենի բնաշխարհին, արտահայտում են նկարչի տրամադրությունը և հոգեվիճակը, որոնցով պայմանավորված է կտավների կոլորիտի զսպվածությունը: Գեղանկարիչը «խոսում է» կտավներով, և Հմ. Հակոբյանի ամենախոսուն շարքն են կազմում Հայաստանը պատկերող բնապատկերները: Այդ շարքում առանձնահատուկ տեղ են գրավում բիբլիական Արարատին նվիրված գործերը, օրինակ՝ «Արարատ. բնանկար» (նկ. 5) կտավը. այն առանձնանում է իր գունային կոլորիտով, որն առանձնահատուկ քնարականություն է հաղորդում պատկերին: Նրա վրձնած Արարատը տոգորված է հավերժությունը մարմնավորող վսեմությամբ:

[8] **Հմայակ Հակոբյան** (1871–1939) 1948, 20:

Հատկանշական է, որ Արարատին՝ իբրև հայ ժողովրդի ինքնության խորհրդանիշ, անդրադարձել են հայազգի գրեթե բոլոր նկարիչները, որոնցից յուրաքանչյուրը ստեղծել է Արարատի իր ուրույն պատկերը: Օրինակ, Փ. Թերլեմեզյանը նախընտրել է աշնանային Արարատը «գույնե իր գունապնակի բազմերանգությունը բացահայտելու համար»[9]:

Հմ. Հակոբյանի քաղաքային տեսարանների պատկերներից նշենք «Հին Թիֆլիս» (նկ. 2), «Քարվանսարա հին Թիֆլիսում», «Մյունխենի ծայրամասը», «Փողոց Մյունխենում», «Մյունխենը գիշերով» և այլն: Թիֆլիսյան դպրոցի ներկայացուցիչներին միշտ հուզել է քաղաքային տեսարանների պատկերման թեման. քաղաքի յուրօրինակ կոլորիտը, շունչը, սովորույթները, նիստուկացը և այլն: Հմ. Հակոբյանը ևս բազմիցս հանդես է եկել Թիֆլիսին նվիրված ճեպանկարներով և գեղանկարներով: Լավագույն աշխատանքներից է «Հին Թիֆլիս» (1888 թ.) կտավը: Արվեստաբան-նկարիչ Ե. Մարտիկյանի բնորոշմամբ. «...ամբողջական տպավորություն է թողնում հին Թիֆլիսի դեպի վեր բարձրացող նեղլիկ փողոցի պատկերը՝ իրար սեղմված հին տներով, փողոցի վրա կախված փայտյա պատշգամբներով: Գույների թափանցիկության հետ մեկտեղ, որոշ չափով ստվերոտ մասերը դեռ պղտոր են գույնով, իսկ լուսավոր մասերը՝ թափանցիկ, գունային հարաբերությամբ ճշմարտացի, հագեցած մինչև արևի լույսի պատրանքի աստիճան»[10]: Հմ. Հակոբյանի թիֆլիսյան շարքը հավերժացրել է հարազատ քաղաքի՝ այդ ժամանակաշրջանի (XIX դ. վերջ – XX դ. սկիզբ) անխուսափելիորեն անհետացող կերպարը, ինչը պայմանավորված էր զարգացման բնականոն ընթացքով:

Եզրակացություններ

Հմ. Հակոբյանի անժխտելի տաղանդն ու վարպետությունը առավելագույնս արտացոլվել է բնանկարի ժանրում, որը նա հասցրել է կատարելության: Յուրօրինակ են նկարչի ստեղծագործական ձեռագիրն ու ոճը:

Նրա բնապատկերները առանձնանում են իրենց գեղագիտական շեշտադրումներով, «հակոբյանական» գունապնակով և կենսափիլիսոփայական ընկալումներով:

---

[9] **Կիրակոսյան** 2014, 107:

[10] **Մարտիկյան** 1983, գիրք Գ, 86:

Ավելացնենք նաև հետգրության կարգով, որ նկարիչը, կյանքն ավարտելով ծայրահեղ աղքատության մեջ, թողեց սերունդներին մեծ և անգնահատելի ժառանգություն՝ «կտավների» տեսքով:

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Խաչատրյան Լ. 2014, Հովհաննես Ասատրյանի բնանկարների առանձնահատկությունները, Բանբեր Երևանի համալսարանի. Հայագիտություն, № 3, էջ 65-76:

Կիրակոսյան Մ. 2014, Փանոս Թերլեմեզյանի կյանքը և ստեղծագործությունը, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 190 էջ+8 էջ նկ.:

Հմայակ Հակոբյան (1871–1939) 1948, Հմայակ Հակոբյանի ստեղծագործությունների հետմահվան ցուցահանդեսի կատալոգ, ներածական հոդվածը Ռ. Լոռիս-Միքայելյանի, Երևան, ՀՊՊ հրատ., 90 էջ+11 նկ.:

Հմայակ Հակոբյան 1871–1939, 2012, կատալոգ, Հայաստանի ազգային պատկերասրահ, Երևան, «Ասողիկ» հրատ., էջ 89:

Մարտիկյան Ե. 1983, Հայկական կերպարվեստի պատմություն, գիրք Գ, Երևան, «Սովետական գրող» հրատ., 224 էջ, 34 թերթ ներդիր:

Մինասյան Մ. 2015, Հովսեփ Կարալյանի գեղանկարչությունը, ատենախոսության սեղմագիր, Երևան, էջ 9, http://etd.asj-oa.am/3717/1/Minasyan.pdf (05.03.2020).

Շիշմանյան Ռ. 1958, Բնանկարն ու հայ նկարիչները, Երևան, «Հայպետհրատ», էջ 357:

Պոլ Սեզան 1996, Նամակներ, զրույցներ, Երևան, «Սարգիս Խաչենց» հրատ., 268 էջ:

Айвазян М.А. 1978, Пейзаж в армянской советской живописи, Ереван, изд. АН Армянской ССР, 112 с.

ПЕЙЗАЖ В ЖИВОПИСИ АМАЯКА АКОПЯНА

ПЕТРОСЯН А.

Резюме

Ключевые слова: Амаяк Акопян, пейзажный жанр, многожанровый, тифлисский период, мюнхенский период, полотна, искусство.

Амаяк Акопян (1871–1939) является ярким представителем тифлисской армянской живописи. Волею судьбы его многожанровое творчество было предано забвению. Одной из граней его таланта является

пейзажная живопись как отражение мировосприятия художника, его художественного почерка и неповторимого стиля. Для пейзажей живописца характерны простота композиционных решений, изящество мазков. Его творчество охватывает два периода – тифлисский и мюнхенский, которые характеризуются этюдами и графическими рисунками. Тифлисский этап отличается созданием работ малого объема, а мюнхенский период демонстрирует богатство палитры и техническое совершенство, что нашло отражение в его пейзажах в целом. Пейзажи А. Акопяна являют собой особый мир эстетики и философии цвета.

LANDSCAPE IN PAINTING OF HMAYAK HAKOBYAN

PETROSYAN A.

Summary

Key words: Hmayak Hakobyan, landscape, multi-genre, Tiflis period, Munich period, canvases, art.

Hmayak Hakobyan (1871–1939) is a bright representative of Tiflis Armenian painting. By the will of fate, his multi-genre work was forgotten. One of the facets of his talent is landscape painting as a reflection of the artist's worldview, his artistic style and unique style. The landscapes of the painter are characterized by the simplicity of compositional solutions, the elegance of brush strokes. His work covers two periods – Tiflis and Munich, which are characterized by sketches and graphic drawings. The Tiflis stage is distinguished by the creation of small-scale works, and the Munich period demonstrates the richness of the palette and technical excellence, which is reflected in its landscapes as a whole. Landscapes of H. Hakobyan represent a special world of aesthetics and philosophy of color.



Նկ. 1. Անտառ (Մանգլիս) (1901), ստվարաթուղթ, յուղաներկ, ՀԱՊ



Նկ. 2 Հին Թիֆլիս (1888), կտավ, յուղաներկ, ՀԱՊ

Նկ. 3. Տապ օր (1900-10), **կտավ, յուղաներկ, ՀԱՊ**





Նկ. 4. **Ոչխարները արոտավայրում** (էտյուդ), **կտավ, յուղաներկ, ՀԱՊ**



Նկ. 5. **Արարատ. Բնանկար, կտավ, յուղաներկ, ՀԱՊ**



Նկ. 6. **Հարազատ Քուռի վրա, կտավ, յուղաներկ, ՀԱՊ**



Նկ. 7.Լուսնյակ գիշեր.Ինտերլակեն (1892), կտավ, յուղաներկ,ՀԱՊ



Նկ. 8. Հոտը հանգստանալիս (1915), կտավ, յուղաներկ, ՀԱՊ

ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ
PHILOLOGY

FELIX BAKHCHINYAN*
President of Fridtjof Nansen Foundation of Armenia
fbakhchinyan@yahoo.com

ARMENIA IN EDUARDAS MEZHELAITIS' POETRY

Key words: Eduardas Mezhelaitis, Mezhelaitis – Armenia, Stone wine, Sayat-Nova, Vahagn Davtyan, Venuolis, Ararat's Sleeping Girl, khachkar.

The prominent Lithuanian poet Eduardas Mezhelaitis' works are well-known and highly appreciated in Armenia. He has been awarded the title of Honoured Worker of Culture of the Republic of Armenia and the Yegihise Charents Prize.

For Eduardas Mezhelaitis Armenia has become a second homeland in terms of poetry. However, it is not a blind and unconscious love but a noble feeling derived from his deep knowledge of the Armenian history and culture.

If a foreign country becomes an integral part of a writer's works, as for example Spain for Hemingway and Erenburg, or Armenia for Brusov and Mezhelaitis, it can have only one explanation – that very nation and the country have either become indispensable to the actual life of the writer (this was the case with Hemingway and Erenburg), or it has left an indelible, painful trace on the writer's spiritual life (this occurred to Brusov and Mezhelaitis).

Eduardas Mezhelaitis visited Armenia thrice (in 1969, 1979, 1982) and dedicated three series of poems to our country. The Lithuanian poet's perception of Armenia cannot be put down to his personal interest only. We should hasten to mention that Mezhelaitis' close contacts with Armenia go back

* *Հոդվածը ներկայացվել է 13.02.20, գրախոսվել է 13.02.20, ընդունվել է տպագրության 27.05.20:*

to the long-standing interest of Lithuanian writers, literary critics and historians towards Armenia.

Even before Mezhelaitis many Lithuanian writers and literary critics dedicated their works to Armenia, translated writings by their Armenian colleagues. The cornerstone of our literary ties was laid down by the renowned writer, literary critic Antanas Krischukaitis-Aishbe, who published a series of articles under the headline "Armenian Novelists" in the journal "Varpas" ("Bell") in 1894. By virtue of those articles, the Lithuanian readers learned about the works by such outstanding Armenian writers as Khachatur Abovyan, Raffi and others. In 1897 the poet Marcelinas Shikshnis-Shjaulenikshis translated Rapael Patkanyan's wonderful poem "Tears of the Araks" into Lithuanian and published it in the journal "Varpas". Interestingly, according to Vayzhgantas, the translation of the poem inspired him to write the poem "Njamunas"[1]. Vincas Kudirka, Gabriele Petkevichaite-Bite, Jonas Biljunas, Juozas Tumas-Vaizhgantas, Yurgis Baltrusaitis and others were fascinated by the Armenian theme.

We are grateful to Petras Cvirka, Juozas Paukshtjalis, Albinas Zhukauskas, Antanas Vienuolis, Justinas Marcinkevichius and Sigitas Geda who dedicated many pages of profoundly inspiring words to Armenia.

A noteworthy literary work was A. Vienuolis' legend "The Sleeping Girl of Ararat", which is based on the Armenian epic tales. It suffices to say that this work was estimated very highly by Avetik Isahakyan.

Eduardas Mezhelaitis' works occupy a special place in the rich Lithuanian "Armeniana". His works are characterized by the unique and intense harmony of the features of his realistic perception, alert kind-heartedness, elevated, resonant symbolism, and the combination of extrinsic and intrinsic traits.

Let us first introduce Mezhelaitis' opinion: "Armenia has enchanted me. Despite the fact that Estonia and Latvia are close to me in terms of historical fate and spiritual characteristics, it is Armenia that captivated me long ago, and I study it with special interest. It is not Armenia's extraordinariness that fascinated me. During my short life I intend to understand the nature of the human being, try to find out who he/she is and create my own philosophical-poetic conception. To do this one needs to trace humankind's roots going back to the time when

[1] A river in Lithuania.

they first made fire, reaching the current day - the era of space flights. One needs to see the beauty that throughout centuries has been created by the human hearts, human minds and human hands. One needs to feel, understand and give a meaning to it. But I never travel as a tourist. I wander around European countries, India, South America, and Africa.

I would draw parallels between Armenia, ancient Greece and Rome. I have found many noteworthy works here"[2].

The poem entitled "Tiger's Fur" (probably a distant allusion to Shota Rustavelli) opens the first series of poems. The epigraph prefacing the poem is taken from Grigor Nareaktsi. We shall not cite the poems in translation but confine ourselves to introducing the plot. The airplane like an open-winged devil (which of course, is an homage to Lermontov) is clattering above the cross on which Prometheus was crucified[3]. Clouds are white like Solomon's beard. The lasso of the Milky Way is thrown around the throat of the mountain. Ghazbeki, who is Tariel in Rustavelli's poem, wrapped in a tiger fur and as proud as Jupiter, is looking down from his pedestal. He is suffering because of the devil's love for Tamar and is ready, in a real fight, to thrust his icy fang in the heart of the airplane for the sake of beauty, truth and goodness. Ghazbeki is keen to take his revenge on the airplane full of passengers. "But you are a knight, Ghazbeki, aren't you? Be ashamed of the vengeance which is not becoming to a knight". Ghazbeki answers, "It is not me who takes revenge but the devil – the angel of malevolence. He does not take revenge on you but on me. And myself as a true knight must fight the evil. I am a tiger"[4].

Of course, an explanation such as this might make the poem sound pointless, while in the original it is melodic and very subtle. However, this is not the point. The second poem "Impressionist Noah" is even richer in combinations taken from different countries, cultures and centuries. Mount Ararat is an iceberg which is identified with a Roman God. Then Noah and the Flood are introduced (which is quite natural). Noah brings his palette from Paris and puts up the huge, biped easel. And then syncopations, sharps and a violin tuner are mentioned. Noah portrays life – the chansonette for the world exhibition, alluding to the paintings of the 19th century world – famous French

[2] Коммунист 1979, 13 May.

[3] In one of the Greek legends Prometheus was crucified on Kazbek.

[4] **Մեծելայտիս** 1976, 634–637.

painter Henri-Toulouse Lautrec, who was representative of the post-impressionist movement. The painting is to be exhibited from flood to flood.

When the sun burnt itself out, Noah folded the easel and left. The author met him in a street of Yerevan and asked him about his achievements in the acoustic painting. Noah turned out to be Martiros Saryan.

Eduardas Mezhelaitis' inspiration is always verified by reason. His imagination is boundless, at the same time being wrapped in intellectual insight. Thus, his first series of poems is not much about the country, but rather for the occasion of his visit to Armenia. The insight comes later.

His second anthology is entitled "Stone Wine" (it is worth mentioning that due to the accuracy of its definition it is both unexpected and precise; the title is a matter of separate discussion). The composition of "Stone Wine"[5] along with its name, is built upon combined contrasts (indivisible, whole patterns), and is of cyclic nature (the word *cycle* signifies *ring* here).

Let us dwell upon the composition. The anthology consists of five sections – "Tabernacles; Khazes and Cross-Stones"; "Armenian Aero-Notebook"; "In the Byurakan Observatory"; "When Peach-Trees Blossom" and "Stone Wine". Each of them carries a specific semantic charge.

The "Prelude" introduces the physical description of the severe and majestic nature in Armenia. Stones are mentioned (they are referred to thrice) as well as the enamel blue of the sky. In the two key stanzas (according to the geography) the themes of the Armenian nature and the poet's inner world clash.

Քարեր, քարեր, քարեր:
Էմալե բիլ երկինք:
Առասպելներ, ասքեր, լեգենդացած դարեր...
Եվ քնարն է ահա նորից հնչում ձեռքիս[6]:

In the subseries "Tabernacles" dedicated to books, stones are the recurrent topic; likewise in the subseries on Khachkars (Cross-Stones) books are the pivotal theme. This cruciform symbol comes to light in the unique personified literary image of the stone-parchments which do not surrender to the power of sword and fire.

[5] **Մեժելայտիս** 1980, 518–558. All the poems were translated by Vahagn Davtian. As all of them are taken from the same book, from now on only the pages of the poems will be referred to.

[6] **Մեժելայտիս** 2013, 35:

The first poem is characterized by severity and repose.

Այս սուրբ գրքի էջերում թևավորներ կան այնքան...
Եվ թևավոր այդ մարդիկ հրեշտակներդ են բարի,
Այդ նրանք են գուշակել քո թևավոր ապագան,
Երբ բախտը քեզ է պարզել իր գավաթը թունալ[7]: (37)

The idea of being winged and able to transcend from the variable life, which is the crucial theme of this series, will be referred to more than once because of its luminosity and the depth which avoids recurrent ideas. The penman – the creator of the tabernacle could see in his insight the flapping of the wings, rising from the rattling sabre.

Here for the first time the author, in a wider sense, refers to the consistent topic of crucifixion and resurrection – the theme of the Holy Book. His understanding of the important role of Christianity which functioned as a symbol of consolidation for our nation in its heroic, almost hopeless fight for its unity as a conscious whole is quite objective and realistic. The spiritual consolidation of the Christian faith played a similar role in the history of Russia during the centuries of the unbearable Tatar yoke. Before the present day there were eras when powerful ideas of unifying nations simply did not exist. Such is a true reflection of history.

The following two poems state that a noble soul has to stay awake, without falling victim to the deceptive sweetness of existence. One of them is the reproduction of a legend the plot of which resembles Irving's famous "Rip Van Winkle". The priest is fascinated by the sweet song of the bird and returns to the monastery at dawn. It turns out that centuries have passed, and when he realizes it, he immediately ages and turns to dust, and "honey starts seeping from the amphora of his heart".

The series of poems entitled "Tabernacles" ends with a unique anthem dedicated to books:

Երբ Հայաստանում զինվոր էր զոհվում մարտի մեջ ահեղ,
Նրա աճյունին դնում էին գիրք,
Եվ այդ պատճառով այս մատյանների ուժը փառահեղ
Չի ընկճել կյանքում ոչ մի արհավիրք:

---

[7] The poem dwells upon the spiritual characteristics of human beings, who are able to foresee the future.

Եվ Հայաստանում երբ մեկի տանը չէր ծնվում զավակ,
Գիրքն էին առնում ու որդեգրում,
Եվ մինչև հիմա գիրքը այս երկրում որդու պես է թանկ,
Ու որդու պես են գիրքն այստեղ սիրում[8]*:* (44)

In the opening poem of the series entitled "Khazer" the voice of Lithuania sounds full and resonant. It is a well-thought out structural technique as Lithuania is depicted after the reader already has some idea about the author's perception of Armenia. Hence, from now on the thematic intertwinement Armenia-Lithuania-lyrical hero becomes a counterpoint in the whole series.

The key motif of the poem "Khazer" is sobbing.

In the second poem entitled "Don't Cry Armenia" sobbing reaches cosmic dimensions[9]:

The following poem is endowed with profound optimism. It illustrates such renowned names of Armenian writers as Mesrop Mashtots, Grigor Narekatci, Nahapet Kuchak, Sayat-Nova, Hovhannes Tumanyan, Avteik Isahkyan, Yeghishe Charents, Paruyr Sevak[10].

Եվ ապա մոգի կրակված ձեռքով նա իր կտավին
Դրոշմեց հավետ եղերերգական դեմքը Չարենցի,
Այն բանաստեղծի, որի ոգին է կենդանի շրջում,
Որի տողերը սրնգի թողած արձագանքի պես
Թափառում են դեռ այն սեգ լեռներում, որ դար ու դարեր
Հողմահարվել են աշխարհի բոլոր փոթորիկներից,
Ձարկվել աշխարհի բոլոր շանթերից ու որոտներից,
Եվ որոնք հիմա այն մեծ վարպետի սուրբ կտավներին
Դարձել են քարե զոհասեղաններ, որոնց ոտքի տակ
Մեծ Նարեկացին, Եղիշե Չարենցն ու Սևակը դեռ
Հեկեկում են լույս բանաստեղծությամբ... (50)

---

[8] In the poem the author describes the Armenians' reverential attitude to book, saying that books accompany dead soldiers, and can occupy the place of a child in childless families as books are treated with similar love and attention.

[9] The poem describes the infinite sorrow of Armenians, the length of which may reach divine ears. The author also alludes to Komitas' (Armenian composer) sad tunes which are compared to "mournful groan".

[10] In the poem the author compares the verses of the famous Armenian poet Ye. Charrnts to the echo of a fife which is still heard in the mountains. He also mentions such renowned Armenian poets as P. Sevak, and G. Narekatsi.

Thus, the secret of Armenia's immortality lies not only in the nation's intransigent spirit, but also in the insurmountable height of its culture. Culture is seen as crucial, for bravery cannot be the only stronghold, culture is another one.

The poems of the series "Khachkars" (Cross-Stones) thematically unite and complete the concepts of inspiration, flight, the constancy of stones and, most importantly, the pivotal role of culture promoted in the previous two poems. These poems bring forth the idea that culture is a reliable bastion which embodies the nation's consciousness, and that cultural heritage is the guarantee of its immortality.

The historical part of the "Stone Wine" series ends with these poems.

Then in the first poem the poet again refers to the topic of winged flight which has already been introduced in the series entitled "Tabernacles". However the given symbol is imbued with a new meaning.

Լիտվա առաքեցեք մի թևավոր խաչքար,
Այստեղ ննջում է խոր Հայաստանի որդին՝
Գառնիկ Հակոբյանը... Պատերազմը այն չար
Սև կապարով այստեղ դիպավ նրա սրտին[11]*:* (51)

Then quite naturally the theme of eternal resurrection follows. It turns out that the eagle identified with the cross-stone is a fairy phoenix rising from its own ashes.

Զարդանախշն այս՝ բաղեղ ու խաղողի ողկույզ,
Կյանքի հիմն է ասես, ղողանջում է...
Բարձր սարեր: Երկինք: Եվ այս խաչքարը կուռ
Դեպի երկինք թևող մի թռչուն է... (52)

This poem is crucial in terms of the motif of the whole series. First of all, it focuses on the topic of our nation's struggle for survival. Thence, the steady path of advance which is the underlying basis of our culture will be referred to (the given theme has already been mentioned with a dotted line in the last poem of the "Khazer" series).

The poem "Small Noah" being written in free verse, is the culmination of not only this group of poems, but also of the whole series. This style is

[11] The poem focuses on the Armenian victims of WWII. Here the author asks for a cross-stone for an Armenian soldier who died in Lithuania during WWII.

characteristic of modern Lithuanian poetry, thus, its impact is the strongest in the context of the series.

These poems have been woven in one breath; the poet's acute thinking shines in them with diverse hues, while remaining true to his style. It is worth mentioning that certain clarifications (ones that might seem unpleasantly verbose and weakening the aesthetic impact of the poems) are quite natural as the poems are meant for Lithuanian readers, and considering their unawareness of the history of Armenian art, the author refers to the latter. Hence, they are touchingly educational. The poet, without annoying his readers with the power of his emotion, appeals to them to learn about the greatest heights of spiritual achievements where the genius of the Armenian people roosts.

What astonishes in this poem is the unyielding, passionate power of the conviction that a person, dedicating his talent and spirit to his nation, in his highest self-expression becomes equal to the nation itself. Saryan is equal to Armenia just as he is equal to the woman picking grapes. There can be no barrier between an individual (an artist) and a collective (a nation) if the person does not pursue individualism.

It should be noted that this is one of the oldest, best-loved inner motifs of Eastern philosophy (in the philosophy of Hinduism, Bodisatwa is identified with Buddha, while the holy spirit is connected with the world's spirit). Here, of course that mystic idea becomes the nation's body and soul.

The theme of the cross-stone, which also symbolizes the concepts of stone and gravestone, is interwoven with the themes of music and ordinariness, the unfastidious but everlasting life of nature.

The poem teems with peculiar Armenian symbols (which are complex and multifaceted), representing the profound interconnection between the cross-stone and the vine. Another book could be dedicated to the full interpretation of these symbols.

In Armenian art certain national and professional notions definitely refer to a sole significance. Namely, the symbol of cross-stones, in contrast with other Christian nations, has a different significance for co-habitant Armenians. The cross-stone does not symbolize afterlife atonement but rather perseverance in this life. Other symbols may get different interpretations, depending on the concepts with which they are associated. Thus, the cross-stone being "coupled" with water may signify one thing, whereas if it is used with vine it represents

another. When water as a symbol is connected with different concepts (for instance with stone or vine) it is not identical with itself. Furthermore, such associations may be of contrasting or attracting natures which precondition the interpretation of the symbols found in them. For an Armenian the language of these symbols is the mother tongue, and he understands it "going deep" into its grammar (even if he is neither a poet nor a painter) but to a European, especially to a northerner this language seems dead and strange, and he bypasses these deep senses, without even suspecting that they are there. Thus, more astounding is the unequivocal ability of Mezhalaitis by which he understands the complicated and unfamiliar language.

The stone means a lot to Armenians (in this country wooden dwellings were never or almost never built, the material of the building is almost alive, which we seem to have forgotten in a century when we do not build houses by ourselves, others do so for us). Perhaps that is why an Armenian may never think of "humiliating" the stone or grade it lower in the hierarchic pyramid. Since the stone is "almost" alive we just need to bring it to life, for instance to mould it into the shape of a vine or an eagle. It is not important what shape of "life" endows the stone. The stone in a master's hands is the same as the clay in God's hands by which he created Adam.

So we have four symbols – the stone (symbolizing death), the vine (eternal life, life as it is), the cross-stone (representing the integrity and ever-lastingness of the soul that fights against the destructive power of time) and the vine stone (awakened life which is ever changing, capricious, ephemeral and mortal). The fourth one with its bacchanal casualness evidently contradicts the first three symbols. Such a combination needs some power which will lead the latter to a harmonious reality (the reality is not a symbolic but rather a historical phenomenon, and sobbing serves as a means of its expression). Here music becomes a harmonious power. Thus, the initial role of the cross-stone is revived.

In this poem the subtlety and exactitude with which the poet manages to penetrate into a uniquely national symbol is just astounding. We think that any Armenian could perceive the poem as a translation from the Armenian language.

The last poem of the "Khachkarer" series takes us back to the styles (with new overtones), typical of the ones which E. Mezhelaitis wrote after his visit to

Armenia in 1969. This, in fact, is the inclusion of the local Armenian characteristic features into the context of the global culture.

The author (more precisely the lyrical hero) identifies himself with Noah, however not with Noah as an ancestor but with Noah as the survivor of disasters.

The opposition Noah vs Hamlet seems to be unexpected. Nevertheless, it has its meaning. Hamlet as a character was born in the 16^{th}-17^{th} centuries. However, he is as old and eternal as Noah growing the grapes that would cheer one's heart. Moreover, his question "to be or not to be" is also as old and eternal as the thoughtful, forever wandering and suffering humanity itself.

The subseries "Tabernacles, Khazes and Cross-Stones" include poems which highlight the characteristic features of Armenia, Armenians, the Armenian spirit and Armenian history, that is Armenia observed from inside, while the subseries entitled "Armenian Aero-Notebook" uncovers Armenia's "external" features. The transition to this approach has already been implemented (with a stroke of the artist's skilful brush) in the final poem of the subseries "Tabernacles, Khazes and Cross-Stones".

It is noteworthy that the author chose Armenian words for the title of the series where Armenia is exposed in terms of its "internal" features, while the poems which highlight its "external" characteristics are entitled by Lithuanian words (it should be born in mind that the book is written in Lithuanian).

Thus, "Khoranner" confirms the physical perpetuity of our indomitable and proud people; "Khazer" depicts our history drowning in the seas of blood; "Khachkarer" is our victory over the brutal force of the Genocide, though not the one observed in "Khoranner" but the victory of culture and genius over whatever is hostile to Armenians.

The opening poem of the "Armenian Aero-Notebook" is entitled "My Atlantida".

Is the juxtaposing of the stony, mountainous country suffering either from heat or cold with the deep underwater, peaceful kingdom not the embodiment of the country itself?

Ես մեծությամբ կյանքում չեմ զարմացել երբեք,
Խորությամբ եմ միայն ես զարմացել...
Ճամփորդում եմ: Կարծես Ատլանտիդան իմ դեմ
Ադամանդի պես ջինջ իր խորքերն է բացել: (54)

Mountainous Armenia is seen as the channel to the sky. The reader has already revealed the idea about the symbol of the sky in the previous series. The poet is more explicit when at the end of the poem he mentions the name of "khachkar" (cross-stone) that managed to survive the decay of empires and the destructive effects of centuries.

The following poem is crucial in the series. Here Armenia, Lithuania and the lyrical character meet one another and remain inseparable throughout the whole series.

The other poems of this subseries surely deserve particular analysis. However, we want to introduce a general outline, while particular analysis requires a deep insight into the subtleties. The topics (blood, horror, death, suffering, sobbing) tackled in the poems of "Khacher" (Cross-Stones) are counterpointed with the themes of Lithuania and the lyrical hero in a novel way. The lyrical hero's truly personal attitude becomes more and more apparent (in the poem "Genocide" the given theme is objectively highlighted) and develops up to the condemnation: "I curse".

The poem where the name of Lithuania is not alluded to even implicitly should be mentioned as well. Lithuania is ever present there in its physical palpability found in the farmer's innate world vision which excludes the possibility of life without the fertile soil. Interestingly, the given worldview is overwhelmed by a more fundamental principle according to which, work in essence is comprehensive and powerful, revealed not only in ordinary ways, typical of familiar places.

The composition of the poems in the book "Stone Wine" is characterized by a truly well-thought out and indivisible structure. In fact, it is rather a living organism with its inner intertwinement and rich feedback.

One wonders why he has dedicated a whole subseries of poems to the Byurakan Observatory instead of just a single poem.

It goes without saying that Armenia prides itself on achievements in astronomy. Academician Victor Hambardzumian's theoretical approaches to the physics of stars and nebula are the fundamentals of this field of study. However, the whole subseries of poems on the Byurakan Observatory cannot be accounted for by this fact. The point is that just at the beginning of the subseries the inner motif unfolds and, like a thread lining the invincible intentions of the

author stretches from the observatory to the sky, so close to mountainous Armenia.

In these poems E. Mezhalaitis finally "frees the genie", widely introducing the theme of universal culture (this being his favourite topic, through which he has reached great artistic heights, combining the heated emotions of passion with the inquisitive philosophical mind).

The notion according to which, music (which is based on numerical succession) rules the universe is very old and dates back to Pythagorean times. Nevertheless, the poet's reference to Chopin gives rise to a new shade of meaning in the concept of harmony not only in the human being but also in different spheres of culture, since Chopin is "human, all too human" while the harmony among spheres is perfect and permanently complete".

The poem "Margarian's Galaxy" testifies to this.

Բայց երբ մութը նորից վարագույրը կախի,
Այս ճերմակած մարդը՝ Շոպենի պես արդար,
Դիփի իր մատները հուր աստղերին բախի,
Դիփի աստեղնային նոտաները կարդա[12]: (63)

The tragic poem about a small country lost in infinity sounds like a logical continuation of the topic.

The incredible emotional intensity of the previous subseries gives way to some placidity which is expressed in the poem "When the Peach-Trees Blossom". The book overflows with cruelty and ruthlessness. The overflowing cruelty is not only due to our historic reality but also the fact that it pursues us like a nightmare. Thus, tender and sensitive poems follow, and the scent of peaches reminds the reader of the rosy lips of an Armenian girl and exudes the fragrance of the fertile soil. In these poems the peach is compared to the letter of the lovers who are lost in red flowers. Such an Armenia also exists, doesn't it?

Armenia is also expressed through Lusine Zakarian's voice, as clear as crystal.

Ասում եք՝ մեզ մոտ սոխակներ չկան...
Լուսինեն ի՞նչ է... Ես նրա ձայնից
Ձկան պես ասես ընկնում եմ ուռկան
Եվ չեմ կարենում փախչել ուռկանից[13]: (68)

[12] In the poem "the grey haired, just man" Chopin is present, and music notes are compared to stars, via which the great composer plays music.

The tragic mood again emerges when the poet describes Sayat-Nova's fate who suffered in Haghpat Monastery for seventeen years. Nevertheless, compared to the horrors of the Genocide this tragedy is indeed depicted in milder overtones. The poem merely makes us reflect on the fate of poets, the eternal prisoners of eternity.

In the concluding subseries entitled "Stone Wine" the poet's favourite topics – art and poetry – sound even more logical. It is not random at all that "My Yerevan" ends in the following way.

Երևանը - դա Սարյան է, որ բուրյան է,
Որպես հողը ու ծաղիկը ու ցորյանը,
Երևանը հարազատ է իր արյանը,
Երևանը նախնական ու հավիտյան է... (70)

Alexander, understanding that his death was inevitable, asks for a right to have his last word with his military commanders and subjects for him to give orders to the army.

Historic sources evidence that before his death Alexander left a will[17]. However, the will hasn't been preserved, whereas Callisthenes' version of "Alexander's will" is considered to be of Hellenic origin[18]. As for references to the will in folklore, it is the feedback to the one found in literary sources as seen by people. It has been shaped uniquely and is based on the people's perception, the religious-philosophical knowledge of the time and is seen as a special behest given by Alexander to his relations and courtiers to organize his funeral.

Using the motif of Alexander the Great's death in folk narrations has enabled us to perceive the succession of life and death from a philosophic perspective. In tales the death motif has been transformed into moral precepts directed to his relations, courtiers, military allies and especially to his mother. By the order of Alexander the ritual of the funeral was to draw attention to the world conquering king's majesty. The king's right hand was to be hanging from the coffin, the procession was to have the following succession: the armed army was to head the procession, followed by the clergy, then beautiful women and girls from the subjected countries were to come, dressed in black mourning his death; finally his servants carrying the court treasures (according to a version on their way from the court to the cemetery the servants were to scatter gold). By the order of the king only those who had never experienced sorrow were allowed to participate in the funeral repast. The strange procession of the funeral aroused people's curiosity, and it was explained by the wise men in the

---

[16] ՀԱԻԲԱ FFV: 2096, 01-2103,00:

[17] «Դարձեալ ի դուրս եհան զՊերդիկաս և Ողկիասոու հրամայեաց ընթեռնուլ, զկտակն, զոր ետ գրել իւր իսկ (կորովամիտ) և մտատես իմաստութեամբն: Եւ է կտակի պատճէն այսպէս» (Պատմութիւն Աղեքսանդրի Մակեդոնացւոյ 1989, 341):

[18] Պատմութիւն Աղեքսանդրի Մակեդոնացւոյ 1989, 602:

following way: “If death can be defeated by army and arms, so it be, nobody has got as powerful army and arms as I do. Let them win and bring me back. If death can be defeated by gold, nobody has got as much gold as I do. Let them defeat death and give back my life to me. If death can be defeated by crying and resuscitating the deceased, nobody has been cried for as much as I have. Let them win and give my life back to me.” That was the king’s idea. When he asked to show his right hand hanging from the coffin, he wanted to say that nothing could defeat death. The world is unchangeable, following the natural order[19]”. Alexander’s right hand moving from side to side symbolizes the ephemerality and vainness of life, while the funeral ritual along with its semantic implication sees all the mortals as equals against the almighty Death. In the folk tradition the concept of right side represents success[20]. The kind angel who is on the man’s right shoulder places the spirit of the latter either in hell or in heaven, depending on how the deceased had acted in his life.

Folkloric perception puts forward distinct solutions to the issues of life and death and vanity and confirms that life is ephemeral, death is inevitable and everything is vain.

In folk narrations the funeral ritual has certainly preserved some snippets of ancient funeral rites. There are undoubtedly no references made to the treasures, concubines and servants buried with the deceased who was of a high social rank. However, the order and class belonging of the participants that were at the front of the procession and the ceremony of scattering gold are noteworthy. The distinctive features of Alexander’s funeral can be juxtaposed with the king Artashes’ funeral: “I should write how many people, how many of his beloved wives and concubines and close servants died for the sake of Artashes. Various pompous ceremonies were held in honor of the deceased which were very civil but not barbaric. There were many coffins gold and palanquins, flax bed. He wore his crown and a gold-sewn cloak with the golden weapons placed in front. The palanquins were surrounded by his sons and relatives, next to them the military, various patriarchs and ministers in his service, military detachments, all of them armed as if heading for a war. And blowing the trumpet, thence the virgins and women dressed in black started

[19] ՀԱԻԲԱ FFV: 2096,01-2103,00:

[20] **Հարությունյան** 2007, 151:

crying, later crowds and commoners followed. That is how he was buried[21]". Khorenatsi might have added some elements from Alexander's funeral to the traditional Armenian funeral rituals while describing the ceremony of Artashes' funeral. It is common knowledge that Khorenatsi not only translated Pseudo-Callisthenes' "Alexander's Romance" but also borrowed some passages if necessary[22]. It is noteworthy that according to Khorenatsi, Artashes' funeral was a civil ceremony and not a barbaric one. However, the given reference also alludes to the borrowing of civil ritual. The Christian historiographer Khorenatsi wisely avoids to mention the burial of the treasures, servants and concubines with the king himself, regarding it to be an expression of barbaric morals and manners. As for voluntary deaths next to Artashes' grave, he ascribed it to the fact that he was loved by his subjects. However, it is obvious that the ancient custom of human sacrifice is found in the Armenian funeral ritual.

The folk plots about Alexander are vivid illustrations of interpenetrations, when borrowed and local elements are amalgamated. The given pattern is visible in the medieval kafas[23] and in the writings about Alexander. National folklore penetrated into the narration about Alexander and contributed to its local popularization[24]. According to H. Simonyan, local popularization took place due to the successive penetration of Armenian life, Armenian national features, and lifestyle into the themes imposed by foreign culture[25].

The above-mentioned motifs were endowed with Armenian characteristics as a result of which Alexander's instructions given to his mother corresponded to the Armenian model of funeral rituals.

In the plots about Alexander the traditional mourning, funeral repast and visit to the grave of the deceased the day after the funeral have received a peculiar interpretation.

In the folkloric sources the death of Alexander is a unique means to emphasize the notion that both the most powerful king, the most formidable world-conquering warrior and a common mortal have got an equal standing in the eyes of death. This novel knowledge gained through his experience forces

---

[21] **Մովսէս Խորենացի** 1913, 190–191:

[22] **Աբեղյան** 1968,322:

[23] A common Armenian medieval style of verse going back to the 13th and 14th centuries.

[24] Պատմութիւն Աղեքսանդրի Մակեդոնացւոյ 1989, 614:

[25] **Սիմոնյան** 1975, 222:

Alexander to reconsider his subsequent position at the fateful moment. To console the grieving Queen, Alexander among other orders demands that only sorrowless people participate in the funeral repast. When the time comes to have the funeral repast it turns out that all the attendees of the funeral have lost their loved ones and cannot participate in the funeral repast, they must leave instead. But the mother understands her son's intention and says: "Sit down, sit down, my son has sent a consolation to me[26]".

In people's opinion the funeral repast is dedicated to the soul of the deceased and has got the function of protecting it from evil powers. The significance of the funeral repast consists in securing the soul of the deceased as well as to distract his relatives' attention from evil spirits.

Mourning and fasting being other components of the funeral ritual, are reflected in the folk plots about Alexander. Mourning being an integral part of the funeral ritual had the function to see off the deceased to the afterlife and to secure a further place for his soul. In the narrations Alexander's mother as mourner took all the mourning responsibilities. Preservation of the traditional 40-day fasting and mourning takes place, however, in the narrations a deviation from the accepted norm can be observed. Alexander's mother does not allow burying her son: "The Queen took her son's coffin to a room and locked herself there, started weeping without eating or drinking. Fasting, she mourned for 39 days[27]". The development of such narrations is based on the Queen's food abstention. Above the coffin food is hung from the ceiling and to reach it one must stand on the coffin[28]. When the hungry Queen tries to stand on the coffin, the guards forbid her to commit such a sacrilegious act and after that she orders to bury the body. Among foods bread plays a crucial role which makes us presume that deep in the narration the agricultural rites dedicated to grain are obscurely reflected. In this case, the mourning of Alexander's mother somehow alludes to the pagan Goddess Isis' mourning and search for Osiris on the eighteenth day of the funeral[29].

---

[26] **Խեմչյան** 2000, 132:

[27] **Լալայեան** 1903, 308–309:

[28] ՀԱԻԲԱ 1963, FFV: 2096,01-2103,00; FFV: 1625,01-1645,00; **Լալայեան** 1903, 308–309:

[29] **Ֆրեզեր** 1989, 440–441:

Certainly, in this case the folk narration comes up with a moral conclusion, putting forward a new semantic approach: “On the fortieth day feeling severe hunger she looked at the ceiling and saw a loaf of bread hanging there. She took her son out of the coffin, put him on the ground, lent the coffin against the wall and climbing up took the bread and ate it as she was hungry and a hungry stomach has no ears[30].”

The last important component of the funeral ritual is “egnahogh[31]”. According to the ancient Armenian tradition, women were not allowed to take part in the funeral so they visited the grave of the deceased the following day (“egnahogh”) after the funeral to take some food for him, mourn and talk to him[32]. This ceremony is not only preserved in the plots about Alexander but it is also transformed into moral wisdom which is the result of centuries – old experience. The next day after the funeral mother visiting her son’s grave cries: “Alexander, Alexander, come out. Deep from the ground a voice responds, “Which Alexander are you calling for. This land has swallowed thousands of Alexanders, let one of them be your Alexander[33].” This narration represents the interrelation of life and death, pointing out the natural course of events when multitudes are buried in their motherland, for that is an end which any mortal is to face.

In another version the Queen has been calling out Alexander for several days without getting any response. Finally she cries out: “Alexander of Macedon”. The son answers in response to his mother’s question why he was not answering. He says: “There are so many people of the name Alexander. How was I to know who was being looked for? When you said Macedon I realized that you were calling out my name[34]”.

In the motifs about Alexander’s death and funeral, the key point is that, irrespective of one’s social status and the feats carried out in one’s lifetime, after dying every human is equal, and worldly ranks and status vanish in afterlife.

---

[30] **Լալայեան** 1903, 308–309:

[31] According to the Armenian tradition, the next day of the burial of the deceased the mourners go to the cemetery to mourn his death.

[32] **Հարությունյան** 2007, 163:

[33] ՀԱԻԲԱ 1963, FFV: 1625,01–1645,00:

[34] ՀԱԻԲԱ 1975, 137–140:

The plots about Alexander have penetrated into the Armenian folk tradition not only thanks to eastern peoples. Pseudo-Callisthenes' translation of "Alexander's Romance" has contributed greatly to the spread and development of plots about him. According to H. Simonian, a specialist in kafa studies, the national folk tradition has penetrated into the written version of "Alexander's Romance" through kafas (medieval Armenian verses) and contributed to its popularization. The study of folk plots has shown that the written story about Alexander has entered oral tradition via downward path and based on folk perceptions, beliefs, customs and rituals it has followed a logical line of individual development. The above-mentioned plots about Alexander have simultaneously carried out moral, educational and aesthetic functions due to folk interpretations and practical conclusions,.

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Աբեղյան Մ. 1968, Երկեր, հ. Գ, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 697 էջ:

Աբովյան Խ. 1948, Երկերի լիակատար ժողովածու, հ. I, Երևան, 416 էջ:

Արիանոս 1987, Ալեքսանդրի արշավանքը, *Ալեքսանդր Մակեդոնացի*, Երևան, «Հայաստան» հրատ., 1987, 3–276, 638 էջ:

Լալայեան Ե. 1903, Աղէքսանդր Մակեդանոս, Ազգագրական հանդես, գիրք X, Թիֆլիս, Մ.Դ. Ռոտինեանցի տպ., 322 էջ:

Լալայեան Ե. 1903, Աղէքսանդրը եւ ձկները, Ազգագրական հանդես, գիրք X, Թիֆլիս, Մ.Դ. Ռոտինեանցի տպ., 322 էջ:

Լալայեան Ե. 1903, Աղէքսանդրի մահը, Ազգագրական հանդես, գիրք X, Թիֆլիս, Մ.Դ. Ռոտինեանցի տպ., 322 էջ:

Խեմչյան Է. 2000, Տավուշ, Հայ ազգագրություն և բանահյուսություն, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 316 էջ:

Խեմչյան Է. 2006, Ջրային տարերքի նվաճման մոտիվը հայոց ալեքսանդրյան սյուժեներում, *Հայ ժողովրդական մշակույթ, XIII, Հանրապետական գիտական նստաշրջանի նյութեր*, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., էջ 94–101:

ՀԱԻԲԱ FFV: 2096,01-2103,00 1963, Բանահավաք՝ Ա. Կարապետյան, բանասաց՝ Հովh. Հովհաննիսյան, Լենինական:

ՀԱԻԲԱ FFV: 1625,01-1645,00 1963, Բանահավաք՝ Ա. Կարապետյան, բանասաց՝ Հովh. Հովհաննիսյան, Լենինական:

ՀԱԻԲԱ 1975, Ա. Կարապետյանի ֆոնդ, «Օրդուբադի բանահյուսություն», ձեռագիր ժողովածու Օրդուբադի Բիստ գյուղ, բանասաց՝ Ա. Նազարյան, «Ավանդություն Ալեքսանդր Մակեդոնացու մասին», էջ 137–140:

Հարությունյան Ե. 2007, Հայ ժողովրդական սգո երգեր, Հայ ազգագրություն և բանահյուսություն, հ. 24, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., էջ 121–218, 222:

Հարությունյան Ս. 2000, Հայ առասպելաբանություն, Բեյրութ, «Համազգային» տպարան, 527 էջ:

Ղանալանյան Ա. 1969, Ավանդապատում, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 532 էջ:

Մովսէս Խորենացի 1913, Պատմութիւն Հայոց, Աշխատութեամբ Մ. Աբեղյանի և Ս. Յարութիւնեանի, Տփղիս, Արագատիպ Մ. Մարտիրոսեանի, 396 էջ:

Պատմութիւն Աղեքսանդրի Մակեդոնացւոյ 1989, Հայկական խմբագրություն-ներ, աշխատասիրությամբ Հ. Սիմոնյանի, Երևան, ՀԽՍՀ ԳԱ հրատ., 648 էջ:

Պլուտարքոս 2001, Կենսագրություններ, Ալեքսանդր, 146–245, Երևան, «Սար-գիս Խաչենց» հրատ., 392 էջ:

Սիմոնյան Հ. 1975, Հայ միջնադարյան կաֆաներ (X–XVI դդ.), Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 295 էջ:

Ֆրեզեր Ջ. 1989, Ոսկե ճյուղը, Մոգության և կրոնի ուսումնասիրություն, Երևան, «Հայաստան» հրատ., 880 էջ:

МОТИВЫ СМЕРТИ И ПОГРЕБЕНИЯ В СЮЖЕТАХ ОБ АЛЕКСАНДРЕ МАКЕДОНСКОМ В АРМЯНСКОМ ФОЛЬКЛОРЕ

ХЕМЧЯН Э.

Резюме

Ключевые слова: мотив, сюжет, традиция, примета, предсказание, ритуал смерти, судьба.

В вариантах сюжетов об Александре Македонском в армянском фольклоре значительное место занимают мотивы смерти и погребения. Эти мотивы присутствуют также в рассказах его биографов, где правдивое изложение переплетается с различными фольклорными сюжетами. В историографических источниках представлено несколько вариантов о смерти Александра. В фольклорных первоисточниках мотив смерти Александра сопровождается сновидением, предсказанием мудреца и иными знаками, посланными морской богиней. Семасиологический анализ ритуала погребения Александра свидетельствует о скоротечности и

суетности жизни и неизбежности смерти. Помимо мотивов смерти в сюжетах присутствует тема матери. Обращаясь к матери, Македонский призывает её к восприятию смерти как естественного явления, так как ее сын – один из многих смертных на этой земле.

Вышеуказанные мотивы сюжетов о Македонском, проникнув в Армению, подверглись определенным изменениям.

ՄԱՀՎԱՆ ՈՒ ԹԱՂՄԱՆ ՄՈՏԻՎՆԵՐԸ ՀԱՅ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅԱՆ ԱԼԵՔՍԱՆԴՐՅԱՆ ՍՅՈՒԺԵՆԵՐՈՒՄ

ԽԵՄՉՅԱՆ Է.

Ամփոփում

Հանգուցային բառեր՝ մոտիվ, սյուժե, ավանդույթ, նախանշան, գուշակություն, մահվան ծիսակարգ, ճակատագիր:

Հայ բանահյուսության ալեքսանդրյան սյուժեների տարբերակներում զգալի տեղ են գրավում Ալեքսանդրի մահվան և թաղման մոտիվները: Այս մոտիվներն առկա են նաև Ալեքսանդրի կենսագիրների պատմություններում, որտեղ ճշմարտացի իրողություններին հավելվել են ժողովրդական տարբեր թափառիկ զրույցներ: Պատմագիտությունը դիտարկել է Ալեքսանդրի մահվան մի քանի վարկած, որոնք ուղեկցվում են կանխագուշակությունների ու նախանշանների շարքով: Բանահյուսական սկզբնաղբյուրներում Ալեքսանդրի մահվան մոտիվն արծարծվում է երազատեսությամբ, իմաստունի գուշակությամբ և ծովային աստվածուհու ուղարկած նախանշանով: Սյուժեների զարգացումը ամրապնդում է այն եզրահանգումը, որ կանխորոշված մահն անխուսափելի է և հնարավորություն է տալիս փիլիսոփայորեն ընկալել կյանքի և մահվան խնդիրները: Մահվան ու թաղման մոտիվներին զուգահեռ, սյուժեներում կարևորվել է մայրական թեման: Վշտակիր մոր վարքագծի դրսևորումները համապատասխանում են ողբասացության ու ծոմապահության հնագույն սովորույթներին: Վերոհիշյալ մոտիվները գրավոր և բանավոր ճանապարհով մուտք են գործել Հայաստան, տեղայնացվել և անցել զարգացման ինքնուրույն ուղի:

ԱԼՎԱՐԴ ԽԱՉԱՏՐՅԱՆ[*]
Բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ
Երևանի պետական համալսարան
alvard.khachatryan@ysu.am

ՀԱՄԱԴՐԱԿԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԲԱՌԱԿԱԶՄԱԿԱՆ ԿԱՂԱՊԱՐԱՏԻՊԵՐԸ ԲԱՐՍԵՂ ԿԵՍԱՐԱՑՈՒ «ԳԻՐՔ ՊԱՀՈՑ» ԵՐԿԻ ԳՐԱԲԱՐ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Բանալի բառեր՝ Բարսեղ Կեսարացի, Գիրք պահոց, հունարեն, հին հայերեն, բառակազմական կաղապարներ, բառաբարդում, վերլուծական և համադրական բարդություններ:

Ներածություն

Բառաբարդումը հնդեվրոպական լեզվում գործուն բառակազմական եղանակներից է: Ընդ որում՝ բարդությունների բաղադրիչները զուգորդվում են համադասական և ստորադասական հարաբերությամբ: Հին հայերենում պահպանվել են դեռևս վաղնջահայերենի գործառած հնդեվրոպական բարդություններ, որոնց թիվը նախորդ շրջանի համեմատ այնքան էլ մեծ չէ: Դրանք հիմնականում այն բարդություններն են, որոնց առաջին բաղադրիչները թվականներ են՝ պահպանված երբեմն արխայիկ ձևերով՝ *մետասան, երկոտասան, երկերիւր, երկսայրի* և այլն: Հնդեվրոպական լեզվում բարդությունների բաղադրիչների կապակցումն իրացվում է անհոդակապ եղանակով: Համաձայն ընդունված տեսակետի՝ անհոդակապ բարդությունները վաղնջական շրջանի կազմություններ են, իսկ հայերենի զարգացման հին շրջանում առկա *–ա* հոդակապը տարածվել է հնագույն շրջանում բառերի վերջավորությունների անկման հետևանքով: Գ. Ջահուկյանն առանձնացնում է հնդեվրոպական բարդությունների երկու տիպ՝ կենտրոնածիգ և կենտրոնախույս[1]: Առաջինի դեպքում բարդությունների իմաստը սահմանափակվում է բաղադրիչների արտահայտած ընդհանուր իմաստով և չունի լրացուցիչ իմաստ, իսկ

[*] *Հոդվածը ներկայացվել է 06.04.20, գրախոսվել է 06.04.20, ընդունվել է տպագրության 27.05.20:*

[1] **Ջահուկյան** 1987, 247:

երկրորդ տիպը ներկայացնող բարդությունները, որոնք հատկացական բնույթի ածականներ են, իրենց հիմնական իմաստից բացի, ունեն նաև երկրորդական կամ լրացուցիչ իմաստ:

Բարդությունները կազմությամբ լինում են համադրական և վերլուծական: Վերջիններս բաժանվում են չորս տիպի՝ կրկնավոր հարադրություններ, անվանական հարադրություններ, բայական և բաղհյուսական հարադրություններ: Վերլուծական բարդությունների շարքում առանձնանում են հարադրավոր բայերը, որոնք ունեն բառային մեկ ընդհանուր շեշտ և իրենց քերականական բազմազան հատկանիշներով ու արտահայտած յուրօրինակ իմաստներով շարունակում են հարստացնել հայերենի բառապաշարը: Հարադրավոր բայերի հարադիրը բայական բարդության բաղադրիչ դառնալով, մերվում է բային և զրկվում իր հատկանիշներից՝ չի հոլովվում կամ չի թեքվում, նախադասության ինքնուրույն անդամ չի դառնում, օրինակ՝ *ծաղր առնել, բուռն հարկանել, ծառայ լինել, արփաքս գնալ, դանդաղկոփ լինել* և այլն: Հարադրավոր բայերն ունեն բառային մեկ ընդհանուր շեշտ: Ա. Մարգարյանի համոզմամբ, «հարադրավոր բայերը ինքնուրույն և ամփոփ բառային պարզ միավորներ են և, միաժամանակ ունեն ձևաբանական բարդ կառուցվածք»[2]:

Հունարենից հայերեն թարգմանված երկերում ստեղծվել են հարադրավոր բայերի այնպիսի կառուցատիպեր, որոնք բարդության մյուս տեսակներից տարբերվում են իրենց արտահայտած իմաստային նրբերանգներով և որոնց մեծ մասը վկայված չէ գրաբարի բառարաններում: Դրանք բարձր արժեք ունեցող բառույթներ են և իրենց բնույթով ու կառուցվածքային տեսակետից որակ են կազմում թարգմանական գրականության միջոցով մեզ ավանդված բառամթերքում: Այս կարգի բառերի բազմաթիվ վկայություններ կան Բարսեղ Կեսարացու «Գիրք պահոց» երկի գրաբար բնագրում, որի հայերեն թարգմանության ժամանակի և թարգմանչի վերաբերյալ կան տարբեր կարծիքներ: Բարսեղ Կեսարացին ապրել և ստեղծագործել է IV դարում (329–379): Նա եղել է արքեպիսկոպոս, աստվածաբան, եկեղեցական գործիչ, գրող և հեղինակել է դավանաբանական երկեր, ճառեր ու քարոզներ, զրույցներ ու բազմաթիվ նամակներ:

Ինչու՞ է ժողովածուն կառուցված *պահք* հասկացության վրա:

[2] **Մարգարյան** 1966, 78:

Հր. Աճառյանի արմատական բառարանում *պահք* նշանակում է կերակուրների հանդեպ ժուժկալություն[3], որը ծագում է պահլավական pahr «պահպանություն» ձևից, որին զուգահեռ բարբառներում հանդիպում է պաս<pās տարբերակը: Սակայն, ինչպես վերը նշվեց, Բարսեղ Կեսարացու «Գիրք պահոց» երկը ոչ միայն կերակուրների և ըմպելիքների նկատմամբ ժուժկալ վերաբերմունքի, այլև հոգևոր բարեկեցության, այն է՝ հորդոր-խրատներով մարդկային արատներից ու մեղքերից ազատագրվելու, մարդկային ամեն տեսակ ախտերի՝ նախանձի, չարության և ատելության, արծաթասիրության և ագահության, ընչաքաղցության և վաշխակերության դեմ պայքարելու մասին է:

Նպատակը և խնդիրները

Մեր նպատակն է՝ հնարավորինս ներկայացնել Բարսեղ Կեսարացու երկի գրաբար բնագրից քաղված բառացանկը՝ բառակազմական ինչպես գործուն կամ կենսունակ, այնպես էլ ոչ գործուն կամ անկենսունակ կաղապարատիպերի բացահայտմամբ: Փորձել ենք նաև մեր ցանկում ընդգրկված թե՛ համադրական և թե՛ վերլուծական բարդություններից յուրաքանչյուրը, ըստ բաղադրիչների գրաված դիրքի և զուգորդելիության, քննել համապատասխան ենթակաղապարների խմբում և առանձնացնել համադրական բարդությունների հիմնակաղապարների հոդակապավոր և անհոդակապ կազմություններն ու դարձվածքները:

Ուսումնասիրության արդյունքում պարզել ենք. որ համադրական բարդությունների համեմատ ուսումնասիրվող սկզբնաղբյուրում գերակշռող են վերլուծական բարդությունները: Ընդ որում՝ բնագրում տեղ գտած շուրջ 185 վերլուծական բարդություններից 170-ը հարադրավոր բայեր են, որոնցից ընդամենը մեկ տասնյակի հասնող մասն է, որ վկայված է գրաբարի բառարաններում, ուստի կարծում ենք, որ հարադրավոր բայերի լայնածավալ ընդգրկումը բառարաններում ամբողջական պատկերացում կարող է տալ այդ բայերի թե՛ իմաստային, թե՛ ձևաբանական ու կառուցվածքային առանձնահատկությունների վերաբերյալ:

Գ. Ջահուկյանը ուշագրավ դիտարկումներ կատարելով հնագույն շրջանում սկսվող և հին շրջանում տարածվող այս կարգի բայերի կազմության և գործածության վերաբերյալ, գրում է. «Կարելի է տարբերել հատկապես բայական հարադրությունների երկու տեսակ՝ անվանա-բայական և մասնիկա-բա-

[3] **Աճառյան** 1979, 9:

յական: Անվանա-բայական հարադրությունները կազմվում են անվանական բաղադրիչից և բայից, ընդ որում, հիմնական իմաստն արտահայտում է անվանական մասը, իսկ բայը կատարում է յուրատեսակ բայական վերջավորության դեր՝ պատասխանի տալ-պատասխանել»[4]: Այնուհետև, նա նշում է, որ նման հարադրությունների տարածումը պայմանավորված է այնպիսի բառերի գործածությամբ, որոնք ինքնին բայական հիմքեր չեն կարող դառնալ կամ դրանց համար անսովոր կազմություններ են: Մասնիկ-հարադիրները փոխարինում են բայական նախածանցներին, որոնք հնագույն և հին շրջաններում դեռևս տարածված չէին: Հարադրությունները երբեմն դարձվածքային կապակցություններ են:

Իրենց գործառական բեռնվածությամբ և հարադիրների հետ զուգորդելիությամբ «Գիրք պահոց» երկի հայերեն թարգմանության մեջ կիրառված են թե՛ անվանա-բայական, թե՛ մասնիկա-բայական տիպի հարադրավոր բայեր, որոնք կազմվել են հիմնականում *լինել* (իմ), *առնել, մասամբ նաև՝ բառնալ, գալ, ածել, արկանել, հարկանել, կալ, գոլ* և այլ բայական բաղադրիչներով: Անվանա-բայական կառույցների հարադիրները, ըստ խոսքիմասային պատկանելության, գոյականներ և ածականներ են, որոնց հետ բայերը հարադրվում են ըստ համապատասխան հարադրի բնույթի կամ իմաստի: Այսպես, *լինել* (իմ), *առնել, գոլ, կալ* բայերի հետ հարադրվում են ավելի շատ ածական հարադիրները, որոնք ստորոգելիական վերադրի դեր են կատարում: Օրինակ՝ *թխազգեստ լինել (իմ)*[5], *ասպարընկէցն լինել (իմ), խրախամիտ լինել (իմ), հրապարակայայտ լինել (իմ), երասանակազանց լինել (իմ), երաշխաւոր լինել (իմ), սթափ լինել (իմ), դանդաղկոտ լինել (իմ), արհամարհելի լինել (իմ), ահաւոր գոլ, անզբաւս կալ, անմտութիւն առնել, անփես առնել, ուրախ առնել, պարկեշտ առնել* և այլն:

Ի տարբերություն վերոնշյալ կաղապարատիպերի՝ անվանա-բայական հարադրությունների գոյական հարադիրները կատարում են շարահյուսական զանազան պաշտոններ՝ ստորոգելիական վերադիր, ենթակա, խնդիր, պարագա: Այդ կառույցների բաղադրիչները, առաջացած լինելով շարահյուսական կապակցություններից, ընկալվում են իբրև բառային մեկ միավոր: Դրանք կազմվել են մարդու մարմնի մասեր, գործառություններ, մարդկային զգացողություններ և բնություն նշանակող պարզ և ածանցավոր գոյական

[4] **Ջահուկյան** 1987, 362:

[5] **Կեսարացի** 2008, 376: Մյուս բոլոր բնագրային օրինակները ևս քաղված են այս հրատարակությունից:

հարադիրներից՝ արտահայտված ընդհանրապես ուղիղ և մասամբ նաև՝ թեք հոլովաձևերով, օրինակ՝ *պղտորել զսիրտ, զմիտս ունել, զմտաւ ածել, բուռն հարկանել, երկիր պագանել, պահս առնուլ, ծաղր առնել, վրէժ առնուլ, շնորհ ունել, մոխիր գոլով, խաղաղութիւն գոլ* և այլն:

Երկում գործածված հարադրավոր բայերի մեջ գործածության հաճախականությամբ աչքի են ընկնում հատկապես տարածական նշանակությամբ մակբայ հարադիրներով մասնիկա-բայական կազմությունները, այսպես՝ *ի ներքս գալ, ի ներքս ածել, ի ներքս դնել, ի վայր անկանել, ի վայր արկանել, ի վայր խոնարհեցուցանել, ի վայր ընկղմել, ի վեր առաքել, ի վեր գալ, ի վեր ածել, ի վեր ելանել, ի բացն կալ, ի բաց բառնալ, ի բաց դառնալ, ի բաց առնել, ի բաց դնել, ի բաց թողուլ, ի բաց փախչել, ի բաց ընթանալ, ի բաց երթալ, ի բաց թքանել, ի բաց մղել, ի բաց ընկենուլ, ի բաց հափանել և այլն:*

Երկի հայերեն թարգմանության մեջ առանձին խումբ են կազմում -***կից*** բայարմատով երկհիմք և բաղադրյալ հարադիր ունեցող կազմությունները՝ *ցաւակից լինել* (իմ), *ախտակից լինել* (իմ), *գործակից լինել* (իմ), *խորհրդակից լինել* (իմ), *չարչարակից լինել* (իմ), *սգակից լինել* (իմ), *տնակից ունել* (իմ), *ախտակից գոլ* և այլն: Թարգմանչի լեզվաոճական առանձնահատկությունների դրսևորման յուրօրինակ բանալիներից են ածականի համեմատության աստիճանը ցույց տվող –*գոյն* վերջածանցով կազմված հարադիրները, որոնք աչքի են ընկնում սաստկականության իմաստային նրբերանգերով՝ *անզգամագոյն գոլ, անբանագոյն լինել, մաքրագոյն լինել* (իմ), *դիւրագոյն ի բերան փանել, իմաստնագոյն լինել* (իմ), *յանդգնագոյն լինել* (իմ), *փոքրագոյն ունել* (իմ), *ողջախոհագոյն առնել* և այլն:

Մեր ցանկում տեղ գտած բարդությունների կազմում տեղ են գտել նաև դարձվածքները: Որպես կանոն՝ հայերենում դարձվածքակազմ խոսքի մասերից են գոյականը, ածականը և բայը: Ըստ այսմ՝ դարձվածքների երկու տեսակ են տարբերակում՝ անվանական և բայական[6]: Բարսեղ Կեսարացու «Գիրք պահոց» երկի հայերեն թարգմանության մեջ կիրառված դարձվածքներից առանձնացրել ենք հատկապես հարադրավոր բայերի բաղադրիչների վերաիմաստավորմամբ ստեղծված դարձվածքները: Դրանցից են՝ ***ի վայր արկանել*** «աղարտել, զըրպարտել, նուաստացուցանել, խոնարհել» - *Մի՛* ***ի վայր արկցես*** զքո բարսդ (էջ 182), ***ի վայր խոնարհեցուցանել*** «զսպել, սակավապետ լինել» - ***Ի վայր խոնարհեցո՛*** զքեզ առ թշուառական որովայնդ (էջ

[6] **Մարգարյան** 1990, 313:

105), ***ի վերայ կալ*** «խելամուտ լինել, վերահասու լինել, ըմբռնել, հասկանալ» - ***ի վերայ կայցես*** ամենայն ճշմարտութեամբք քեզ, որպէս զի գիտիցես բաժանել երկաքանչիւրոցն զյարմարագոյնս, մարմնոյ՝ կերակուրս և զզգեստս, ***ի բաց բառնալ*** - …Որքան ***ի բաց բառնաս*** ի մարմնոյդ, այնքան արասցես հոգեւոր քաջառողջութեամբ զհոգիդ փայլեալ (էջ 81), ***բարգաւաճ լինել*** «զվարճանալ, ուրախանալ» - ***Բարգաւաճ լեր***, զի քեզ տուաւ ի բժշկել դեղ (էջ 55) և այլն:

Խիստ սակավադեպ են երկում հանդիպող անվանական տիպի հարադրությունները՝ երկու բաղադրիչների ուղիղ և թեք հոլովաձևերի գործածությամբ: Կազմված լինելով համանիշ և հականիշ, ինչպես նաև իմաստով մոտ բառերով՝ դրանք միաժամանակ խմբավորվում են որպես բաղհյուսականներ՝ *ի գիշերի եւ ի տուէ, ի գիշերի եւ ի տուընջեան, զուարթ եւ անտրտում, երկայնամիտ եւ հեզ, ամ ըստ ամէ, մի ի միոջէ, այր եւ կին, արու եւ էգ, քնար եւ փափիղ. խիտ եւ աննուազ, արու եւ էգ* և այլն: Կրկնավոր հարադրության երեք վկայություն ունենք, այն է՝ *սակաւ սակաւ, երագ երագ, միոյ միոյ*:

Ձևաբանական առանձնահատկություններին զուգահեռ, հարադրավոր բայերը կարող են արտահայտել մեկ կամ մի քանի իմաստներ: Այս տեսակետից հարադրավոր բայերը բաժանվում են երկու խմբի՝ ա) մենիմաստ կամ միանշանակ հարադրավոր բայեր, օրինակ՝ *ծաղր առնել-ծաղրել, երաշխաւոր լինել (իմ), սթափ լինել (իմ)* և այլն, բ) բազմիմաստ կամ բազմանշանակ հարադրավոր բայեր[7], օրինակ՝ *ի բաց բառնալ – անտեսել, հեռացուցանել, ի բաց առնել-հեռացուցանել, օտարացուցանել, ճողոպրել* և այլն: Հաճախ այս բայերի ոչ բոլոր իմաստային նշանակություններն են ցայտուն արտահայտվում, ուստի բայական բաղադրիչին հավելվում են նախդիրների և հատկապես մակբայների արտահայտած իմաստները:

Ըստ անկախ գործածության՝ տարբերակում են բուն հարադիրներ, որոնք միայն իբրև հարադիրներ են գործածվում, և հարադիր բառեր, որոնք, բացի հարադիր լինելուց, կարող են գործածվել նաև բառային այլ գործառույթներով: Հարադիր բառերն առավելապես գոյականներ են, մասամբ նաև ածականներ, դերանուններ, ձայնարկություններ, թվականներ[8]: Երկում հանդիպող բուն հարադիրներից են *ի բաց* (*բառնալ*), *ի ներքս* (*դնել*), *ի վայր* (*անկանել*) և այլն:

[7] **Մարգարյան** 1965, 51:

[8] **Ջահուկյան** 1989, 226:

Համադրական բարդությունները կազմվում են բաղադրիչների համադրումով, կցմամբ: Դրանք լինում են երկու տեսակ՝ կցական և իսկական: Ինչպես վերը նշեցինք, համադրություններն իրենց թվաքանակով ավելի քիչ են (մոտ 130 բառ): Իսկական են այն բարդությունները, որոնց բաղադրիչների շարահյուսական կապը մթագնած է, և բարդության բաղադրիչները հիմնականում կորցնում են իրենց իմաստային անկախությունը, իսկ կցական բարդությունների բաղադրիչները, ընդհակառակը, պահպանում են իրենց բառային ինքնուրույնությունը կամ անկախությունը[9]: Դրանք առավելապես ստորադասական հարաբերություն արտահայտող հոդակապավոր իսկական բարդություններ են՝ կազմված հիմնականում գոյական + գոյական, ածական + գոյական, գոյական + բայ կաղապարներով, օրինակ՝ *ագահասիրտ, ագահածեռն, արծաթասանձ, բազմափայլ, բռնակռիւ, դիւրադարձ, դիւրահանգ, դժոխազգի, ընչաժողով, կռուակից, ծանրագլուխ, ծանրապատիւ, ծաղրասէր, հարկաժողով, ձիաբոյծ, ողբասէր, ողջախոհ, ոսկեճաճանչ, պատուասէր, սովահեղձ, սկզբնաշնորհ, վաշխակեր, փրփմասէր, քաջամարմին, քաջագաւփի, քաջազուարճ* և այլն: Անհոդակապ կցական բարդությունների վկայությունները քիչ են՝ *այլազգ, այնժամ, այնչափ, այսչափ, այսաւր, այնպէս, սոյնպէս, դժոխերասան, գինաման, երկբերան, չորեքդիմի, չորեքհարիւր, խոզերամակ* և այլն: Հունարենից հայերեն թարգմանված թե՛ համադրական, թե՛ վերլուծական վերոբերյալ բարդությունները հունարեն համարժեք ձևերի բարձրարժեք պատճենումներ են՝ իրենց արտահայտած և՛ ընդհանուր, և՛ լրացուցիչ իմաստներով: Կան բառեր, որոնց բաղադրիչների հայերեն թարգմանությունները բառացի պատճենումներ չեն, դրանց հունարեն համարժեքները փոխարինվել են տվյալ բառիմաստին նշանակությամբ մոտ որևէ բառով կամ հոմանիշով, օրինակ՝ *ծայրապունկ* «ծայրք տնկոց եւ պտուղք ծառոց» < ακροδρυα = ακρον «ծայր» + δρυα «ծառ» և այլն: Ինչպես տեսնում ենք, δρυα «ծառ» բաղադրիչը հայերենում թարգմանվել է *պունկ* բառով:

Կան նաև միահիմք բառերի երկհիմք համարժեքներով բառաբարդումներ, օրինակ՝ հունարենում ζηπεδων «նեխ, ապականութիւն» պարզ բառը թարգմանվել է *նեխավայր* «նեխեալ վայրք» բարդ բառով և այլն: Պարզ բառերի փոխարեն բարդ բառերի կազմումը Լ. Հովհաննիսյանը համարում է հու-

[9] **Աղայան** 1984, 272:

նաբանության դրսևորումներից մեկը, որը «բնաւ լեզուն խաթարելու, արհեստականութեամբ հեղեղելու միտում չունեց»[10]:

Հունարեն բնագրի մի շարք նախածանցավոր բառեր թարգմանվել են կիսապատճենման եղանակով՝ նախածանցները փոխարինվելով բառարմատներով՝ **δυσ** > դժոխ, դժուար, **συν** > կից (ետադաս), δια > վայր և այլն: Բերենք նշյալ նախածանցներով կազմված բառերի հայերեն թարգմանության նմուշներ՝ δυσγενες > դժոխազգի, δυσβατος > դժուարակոխ, συνοικος > տնակից, συνεπασχες >ախտակից լինել (իմ), συναλγεω > ցաւակից լինել (իմ), διαβαλλω > ի վայր արկանել: Ն. Ադոնցի հավաստմամբ՝ նման ազատ և անկաշկանդ թարգմանությունները կատարվել են «հօգուտ մայրենի լեզվի կանոնների պահպանման»[11]:

Եզրակացություն

1. Կարող ենք արձանագրել, որ Բարսեղ Կեսարացու «Գիրք պահոց» երկում գործածված համադրական և հարադրական բարդությունները թարգմանվել են հայերենի բառակազմական օրինաչափություններին համապատասխան: Երկի հայերեն թարգմանության մեջ գործածված վերլուծական բարդությունները ամենագործուն կամ կենսունակ բառակազմական կաղապարատիպը ներկայացնող կազմություններ են: Ուշագրավ է, որ նշված բարդութունների մեծ մասը, ըստ իրենց արտահայտած իմաստների, բազմանշանակ կամ բազմիմաստ հարադրավոր բայեր են: Հարադրավոր բայերն, ինչպես գիտենք, ժողովրդախոսակցական լեզվին բնորոշ հոյժ կենդանի նմուշներ են և առանձնանում են ոչ միայն կառուցվածքային, դարձվածաբանական ու ոճական արժեքներով, այլև իմաստային յուրօրինակ նրբերանգներով: Նշենք նաև, որ դարձվածային և ոչ դարձվածային նշանակության որոշ հարադրավոր բայերից կազմում են համադրական ձևեր՝ նույն բաղադրիչների կցումով, օրինակ՝ *զմփաւ ածել-մփածեմ*, *երկիր պագանել-երկրպագեմ, ուրախ առնել-ուրախացուցանեմ, բարգաւաճ լինել (իմ)-բարգաւաճիմ, ծաղր առնել-ծաղրեմ, անփես առնել-անփեսեմ* և այլն:

2. Ի տարբերություն վերլուծական բարդությունների՝ համադրական բարդությունները, որոնք հիմնականում երկբաղադրիչ հոդակապավոր կազմություններ են, թվաքանակով ավելի քիչ են: Սրանց մեջ առանձին խումբ են

---

[10] **Հովհաննիսեան** 2009, 223–224:

[11] **Ադոնց** 2008, CLXXVII:

կազմում հատկացական բնույթի այն ածականները, որոնք մի բան ունենալու իմաստ են արտահայտում, օրինակ՝ *ագահաձեռն* (ագահ ձեռք ունեցող), *ագահասիրտ, արծաթասանձ, ծանրագլուխ, ծանրապարհի, ուսկեճաճանչ, սկզբնաշնորհ, քաջամարմին, քաջագլուխ* և այլն: Այս կարգի բարդությունները, ինչպես վերը նշվեց, կենտրոնախույս են, քանի որ բարդության բաղադրիչների արտահայտած ընդհանուր իմաստից բացի, ունեն նաև լրացուցիչ իմաստ:

3. Երկի հայկաբան թարգմանության շնորհիվ ստեղծվել են մի շարք նորագյուտ բարդություններ և դարձվածքներ, որոնց ընդգրկումը հայկական բառարաններում էլ ավելի կհարստացնի հայերենի բառապաշարի ճոխ բառագանձը: Դրանցից են՝ *ագահասիրտ, արծաթասանձ, դիւրակապուտ, գինեկէզ, դժոխանալ, ընչաժողով, ծանրապարհի, հանդերձակապուտ, նեխավայր, երասանակազանց լինել (իմ)* և այլն:

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Ադոնց Ն. 2008, Երկեր, հ. Գ, Երևան, ԵՊՀ հրատ., 489 էջ:

Աղայան Էդ. 1984, Ընդհանուր և հայկական բառագիտություն, Երևան, ԵՊՀ հրատ., 372 էջ:

Աճառյան Հր. 1979, Հայերէն արմատական բառարան, հ. 4, Երևան, ԵՊՀ հրատ., էջ 674:

Բարսեղ Կեսարացի Ս. 2008, Գիրք Պահոց, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին հրատ., 520 էջ:

Հովհաննիսեան Լ. 2009, Հայ թարգմանական գրականութեան բառապաշարը (Ե դար), Վիեննա-Երեւան, Մխիթարեան հրատ., 238 էջ:

Մարգարյան Ալ. 1965, Հարադրավոր բայերի իմաստա-ոճաբանական արժեքը, ՀՍՍՌ ԳԱ Տեղեկագիր հասարակական գիտությունների, № 10, 47–58 էջ:

Մարգարյան Ալ. 1966, Հայերենի հարադիր բայերը, Երևան, «Միտք» հրատ., 502 էջ:

Մարգարյան Ալ. 1990, Ժամանակակից հայոց լեզու, Բառակազմություն, դարձվածաբանություն, բառարանագրություն, Երևան, ԵՊՀ հրատ., 408 էջ:

Մուրադյան Ա. 1971, Հունաբան դպրոցը և նրա դերը հայերենի քերականական տերմինաբանության ստեղծման գործում, Երևան, «Նաիրի» հրատ., 363 էջ:

Ջահուկյան Գ. 1987, *Հայոց լեզվի պատմություն. Նախագրային ժամանակաշրջան*, Երևան, ՀՍՍՀ հրատ., 748 էջ:

Ջահուկյան Գ. 1989, Ժամանակակից հայոց լեզվի իմաստաբանություն և բառակազմություն, Երևան, ՀԽՍՀ ԳԱ հրատ., 319 էջ:

СИНТЕТИЧЕСКИЕ И АНАЛИТИЧЕСКИЕ МОДЕЛИ СЛОВООБРАЗОВАНИЯ В ДРЕВНЕАРМЯНСКОМ ПЕРЕВОДЕ ТРУДА ВАСИЛИЯ КЕСАРИЙСКОГО «КНИГА О ПОСТЕ»

ХАЧАТРЯН А.

Резюме

Ключевые слова: Василий Кесарийский, «Книга о посте», греческий язык, древнеармянский язык, структуры словообразования, синтетические и аналитические модели, синтетические формы.

В древнеармянском переводе труда Василия Кесарийского изобилуют синтетические и аналитические модели словообразования. В большинстве своем – это аналитические сложные слова. В синтетических словах превалируют существительное + глагол, существительное + прилагательное, а в аналитических – наречие + глагольные структуры. Большинство использованных при переводе синтетических и аналитических моделей на сегодняшний день являются архаизмами, но некоторые вошли в лексику современного армянского языка.

SYNTHETIC AND ANALYTICAL PATTERNS OF WORD-COMPOUNDING IN THE OLD ARMENIAN TRANSLATION OF THE “BOOK OF LENT” BY VASIL OF KESARIA

KHACHATRYAN A.

Summary

Key words: Vasil of Kesaria, “Book of Lent”, Greek, old Armenian, word formation models, compounding, closed compounds.

The vocabulary of the Old Armenian translation of Vasil of Kesaria’s “Book of Lent” is very rich in various word-formational phenomena. Of particular orig-

inality from both structural and semantic viewpoints are the synthetic and analytical forms of compound words in the Armenian translation of the book. These lexical units are prevailingly analytical compounds, and we have attempted to give their morphological characteristics. Among the synthetic forms of the lexical units in the translation particularly predominant are the patterns of N+V and N+Adj, whereas in analytical compound words the prevalence is given to the pattern Adv.+V. Some of these words are archaisms today, and some becoming part and parcel of the wordstock of the contemporary Armenian language, add to the enrichment of the language.

ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ
PUBLICATIONS

VARDAN HAMBARDZUMYAN
PhD student,
YMCA Europe Executive Secretary
vardan.hambardzumyan@gmail.com

REVIEW BY ERNST OTTO JACOB, YMCA SECRETARY GENERAL IN THE OTTOMAN EMPIRE, ON THE STATUS OF THE ASSOCIATION IN 1922 *VS* 1914

In 1844 the first Young Men's Christian Association (YMCA) was founded in London by a group of young men led by George Williams[1]. Over the next ten years the YMCA idea and movement spread all over Great Britain and began to expand across Western Europe, the USA, Australia, New Zealand, and India. A crucial impulse in this expansion was The Great Exhibition of 1851 in London.

The idea of creating a truly global YMCA movement with an international headquarters was pioneered by Henry Dunant[2], Secretary of YMCA Geneva. He successfully convinced YMCA Paris to host the first YMCA World Conference. The Conference took place in August 1855, bringing together 99 young delegates from nine countries. The Conference adopted the Paris Basis affirming the YMCA's global mission and purpose, and created the Central International Committee. The Committee operated without a headquarters until 1878, when a permanent headquarters and formal structure for the Committee was established in Geneva. This was a turning point for the Central International

[1] Sir George Williams (1821–1905): in 1894 received a knighthood from Queen Victoria and is laid to rest in the crypt at St Paul's Cathedral in London.

[2] Henry Dunant (1828–1910): also the founder of the International Committee of the Red Cross (1863) and the first laureate of the Nobel Peace Prize (1901).

Committee that would eventually become known as the World Alliance of YMCAs[3]. On the threshold of the 20th century the YMCA was already present in 45 countries with a global membership of over 700,000.

The YMCA idea and movement infiltrated into the Ottoman Empire in the early 80s of the 19th century[4]. Notwithstanding the continued oppressions by Abdul Hamid's regime, during the next decade the YMCA Movement continued to expand in the empire, mainly working through missionaries and their educational programs. Conditions improved after the restoration of the constitutional rule in the Ottoman Empire and the Bloody Sultan's[5] arraignment in July, 1908. 'Hurriyet'[6] opened up the new prospects for the YMCA intervention. The American YMCA, led by J. R. Mott[7], was the most active. Soon the International Committee of the YMCA of the USA appointed Lawson Chambers[8] as the YMCA Traveling Secretary in the Ottoman Empire. The first force major Chambers faced was the 1909 massacre in Adana, when 30'000 Armenians were slaughtered. He acted as the British Vice-Consul and played a key role in stopping it and mobilizing international assistance to the survivors[9]. Later on, relief assistance to Adana became the first international aid project of the World YMCA[10].

1909–1914 became the key period of the consolidation of the YMCA Movement in the Ottoman Empire. In May 1911, the General Committee of the Union of Christian Associations in Turkey held its first meeting at Robert

---

[3] Today the YMCA operates in 119 countries worldwide, providing various services to around 58 million people.

[4] See **Համբարձումյան Վ.,** Երիտասարդաց քրիստոնեական ընկերակցութեան գործունեությունը Օսմանյան կայսրությունում (1881–1909 թթ.), Բանբեր հայագիտության, No 3, Ե., 2017, էջ 126–135:

[5] Sultan Abdul Hamid's nickname

[6] Liberty

[7] John Raleigh Mott (1865–1955): also founder of World Student Christian Federation (WSCF) and World Council of Churches (WCC) and laureate of the Nobel Peace Prize (1946).

[8] See **Համբարձումյան Վ.,** Բրիտանական կայսրության փոխհյուպատոսի ժամանակավոր պաշտոնակատար Լոուսն Չամբրսը 1909 թ. Ադանայի ջարդերի մասին, Լրաբեր հասարակական գիտությունների, No 1, Ե., 2015, էջ 155–156:

[9] Balakian, Peter: The Burning Tigris – the Armenian Genocide and America's Response, New York, 2004, pp. 148–155.

[10] Shedd, Clarence Prouty and others, History of the World's Alliance of Young Men's Christian Associations, London, 1955, p. 457, 663.

College[11] in Constantinople, with delegates from all over the country: Marash, Tarsus, Talas, Smyrna, Bourssa, Marzvan, Van, Adabazar, Beirut, Constantinople[1], etc.. The opening of the new and magnificent YMCA building in Constantinople was expected to be the highlight of these developments, yet the beginning of World War I brought that promising process to a definite termination. Anyway, the building was inaugurated in October, 1915, with U.S. Ambassador Henry Morgenthau delivering the congratulatory address to an assembly of five hundred guests[12] . But almost immediately after, the Turkish government pushed to close down the Association work. The YMCA Board of Managers' final meeting in December, 1915, decided to suspend its operations, and in order to save the building, to rent it to the U.S. Embassy. At that time the Armenian Genocide was at full scale of execution, resulting in the extermination of 1.5 million people. The YMCA chief secretary Ernst Otto Jacob[13] reports:

"…Christian races must be reduced to a state where they would be forever negligible in the development of a Turkey for Turks. They planned to completely annihilate the national life and institutions of the Armenian race… The Turkish program was fiendishly successful - hundreds of thousands of Armenians had died and many more would perish. The hopes of the Armenians were utterly crushed… As a race and as individuals they feel themselves doomed as long as the Turk is their lord"[14].

Through the years of World War I the international YMCA was trying hard to get involved in prisoner of war and relief assistance work in the Ottoman Empire, but it's only after the Armistice of Mudros, signed between the Ottoman Empire and the Allied states (October 30, 1918), that the YMCA was granted back an access by the Turkish government. Operations were limited to areas

[11] Kautz Family YMCA Archives, University of Minnesota Libraries, Minneapolis, MN: Box - International Division: Folder – Turkey 1884–1929.

[12] Steuer, Kenneth: Pursuit of an Unparalleled Opportunity – The American YMCA and Prisoner of War Diplomacy among the Central Power Nations during World War I, 1914–1923, Kalamazoo, Michigan, 2008, Chapter 15, pp. 1–24, The American YMCA and Allied Prisoner Relief in the Ottoman Empire).

[13] Ernst Otto Jacob (1886–1966): born in Dresden (Germany), apart from the Ottoman Empire then Republic of Turkey served as the YMCA secretary in Krakow (Poland), Athens (Greece) and New York (USA).

[14] Kautz Family YMCA Archives, University of Minnesota Libraries, Minneapolis, MN: Box - International Division: Folder – Turkey 1884–1929.

under direct control of the Allied states: Constantinople (Britain), Adana, Aintab, Marash in Cilicia (France), Smyrna (Greece). The YMCA in Cilicia was acting within the framework of the American Committee for Relief in the Near East (Americom), which was established by the US Congress to provide assistance to the survivors of the Armenian Genocide, finding refuge under protectorate of French troops, including the Armenian Legion[15]. After almost 3 years of existence, by the end of 1921, both the Armenians and the YMCA had to finally abandon Cilicia as the French trecherously handed it over to Turkey.

Next Smyrna YMCA seized its existence due to the occupation of the city by Kemal Ataturk's army in September, 1922. The Turkish troops and the mob set the city on fire, attempting a holocaust of the Greek and Armenian population of the city. It was then that American YMCA junior staff Asa Jennings stationed in Smyrna led one of the world's biggest rescue missions ever, initiating evacuation of the Armenians and Greeks, sandwiched between the fire and water at the Smyrna Quay. He triggered the unfolding of and led an unprecedented rescue operation, saving more than 250,000 people[16].

Constantinople YMCA was the only one, which survived for a while. But in July 14, 1939, the Turkish government closed it down and created a foundation to manage the confiscated property.

Hereby we are publishing the report written by Ernst Otto Jacob in 1922 called "1914 *vs* 1922: A Review of Association[17] Work in Turkey". The copy of the document is obtained from the Kautz Family YMCA Archives, University of Minnesota Libraries, Minneapolis. It gives a summarizing account on how the YMCA emerged, extended and as a matter of fact came to its end in the Ottoman Empire. E. O. Jacob was one of the American YMCA secretaries, operating in the Ottoman Empire and then in the Republic of Turkey during 1910 – 1925. He was still stationed there when writing this report, and in its second part he is trying to justify how very much necessary the YMCA can be for the Turkish society, now almost completely cleansed of Christians. That is why

